Հովհաննես Մանուկյան

ԱՌԱԿՆԵՐ

Հեղինակային հրատարակություն
Երևան 2012

ՀՏԴ 891.981-3 Մանուկյան
ԳՄԴ 84Հ-4
Մ 283

Տպագրվել է «Բարեպաշտ սերունդ»
հիմնադրամի միջոցներով,
հիմնադիր՝ Բարսեղ Բեգլարյան

Մանուկյան Հովհաննես
Մ 283 Առակներ/ Հ. Մանուկյան. - Եր.: Հեղ. հրատ., 2012թ., 104էջ:

Սույն գիրքը հոգևոր կյանքում հանդիպող խնդիրների մեկնաբանման, լուսաբանման, աստվածային կամքի, նախախնամության ըմբռնման ժողովածու է: Հեղինակն այս ամենը ներկայացնում է պատկերավոր լեզվով, հանրամատչելի դարձնելու համար օգտագործում առակների ոճը:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 891.981-3 Մանուկյան
ԳՄԴ 84Հ-4

ISBN 978-9939-0-0421-1

© Մանուկյան Հ., 2012թ.

«Նրանով է, որ ժառանգեցինք
մեզ վիճակված բաժինը,
ըստ առաջադրության Աստծու,
որ ամեն ինչ հաջողեցնում է
իր կամքի խորհուրդների համաձայն»
(Եփես. 11.1)

Հաճախ կյանքի տարբեր դրվագներում, իրավիճակներում ցանկանում ենք հասկանալ, թե Արարիչն ինչ է ակնկալում մեզանից, իսկ մենք ինչ կարող ենք անել, որպեսզի հասկանանք Աստծուն և Նրա կամքը:

Արդ, մի շարք հոգևոր հարցերի պատասխաններ փոքրինչ լուսաբանված են նաև այս գրքում: Ներկայիս դարաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաները սրընթաց արագություն են հաղորդում կյանքի հարափոփոխ ընթացքին: Համընդհանուր, առօրեական հնարավորությունների և մարտահրավերների բազմազան փոխներթափանցումների մեջ կլանում մարդու ժամանակը, մասնավորաբար երիտասարդության մեջ նվազեցնում գիրք կարդալը, ընթերցանությունը: Այս առումով հոգևոր պատասխանները մարդկանց սրտերին հասանելի դարձնելու համար առակներն ավելի արդյունավետ համարեցի, որոնք սովորաբար հետաքրքրական են, հակիրճ, տպավորիչ, բովանդակալից, հոգեբանորեն ազդու, որովհետև սխալները, ինչպես հայելու մեջ, կարող ես անդրադարձորեն տեսնել՝ ներարտացոլմամբ խորհրդածելով և ինքնագնահատական տալով տվյալ հանգամանքի, արարքի շուրջ:

Երբեմն էլ այս էջերում դրոշմված առակները թանձրացյալ ստեղծագործություններ են. միաժամանակ բացահայտում են հոգևոր խնդրի տարաբնույթ կողմերը:

Հուսով եմ՝ մարդու մեջ ծագող որոշ էկզիստենցիալ հարցադրումների լույս սփռման ուղենիշներ կլինեն: Կուղղորդեն

նրան դեպի քրիստոնեական առաքինության և բարեպաշտ արժեհամակարգի կեցության ամրապնդմանը ոչ միայն մտահայեցողական մակարդակում, այլև այն ապրելու ու ևս մեկ անգամ իր հարաբերությունը Քրիստոսի հավիտենական հաղորդակցության հետ վերարժևորելու համար:

Հովհաննես Մանուկյան
(Ավարտել է Գևորգյան հոգևոր ճեմարանը, Սբ. Էջմիածին: ԵՀԽ-ի և Ժնևի համալսարանի միջեկեղեցական ինստիտուտը, Շվեյցարիա)

ՍԵՐ ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Ավանակը մտնում է մի պարտեզ և հիացմունքով մոտենում գետնին փռված, աչքի զարնող իր տեսքից փքված, մի մեծ, արևի ճառագայթներից փայլփլող դեղնավուն մի պտուղի և ասում.

- Ինչ գեղեցիկ ես ու ախորժելի, վերջապես գտա իմ երկրորդ կեսին: Ինչ է անունդ:

Պտուղը պատասխանում է.

- Ինձ դդմենի են ասում: Իսկ քո ականջներն ինչո՞ւ են ավանակի ականջների նման երկար:

Ավանակն ավելի մեծ հիացմունքով ասում է.

- Որովհետև ես ավանակ եմ: Սիրո հրեշտակներն ինձ հիմար էին ասում: Նույնիսկ հասա երկնքի արքայություն և ցանկացա ներս մտնել ու իմ երկրորդ կեսին փնտրել, բայց հրեշտակները թույլ չտվեցին և ուղարկեցին այստեղ: Ինձ մխիթարեցիր. տեսնում եմ, որ ինձանից ավելի հիմարը կա: Զուր չեն ասում, որ դդումն էլ է արտաքինից գեղեցիկ, բայց դե դդում է էլի...

Սիրո հրեշտակն իջնում է երկնքից ու հորդորում ավանակին.

- Քո անմտությանը չափ ու սահման չկա, քեզ ուղարկեցի այս պարտեզ, որովհետև քիչ հեռու մի այլ ավանակ եմ նաև ուղարկել, իսկ դու եկար ու դդմին մոտեցար: Այժմ, արագ գնա դեպի մյուս ավանակը, քանի դեռ դա էլ՝ հմայված ծաղիկներով, ամբողջությամբ չի կերել պարտեզի վարդերը...

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

Կանաչ բացատում գտնվող խրձիթի մոտ մի երիտասարդ՝ մտահոգ ու տխուր, անտարբեր նայում է սեղանին դրված մի կտոր հացին, որի երկու կողմից մի քանի մրջյուն՝ յուրաքանչյուրն իր կողմն է քաշում:

Մոտենում է մի ծերունի և ասում.

- Ո՛վ երիտասարդ, մտազբաղ ու մտահոգ ես՝ մտքերով ծանրաբեռնված ու հոգեպես լարված..., մտածում ես, թե ինչ-պե՞ս իրականություն դարձնել նպատակներդ այս աշխարհում: Սակայն նայիր սեղանի վրա դրված հացին և մրջյուններին, որոնք այս փոքրիկ հացի կտորը համարում են մի ամբողջ աշխարհ ու նպատակ, և ամեն մեկն իր կողմն է քաշում ու իրենը համարում:

Ծերունին վերցնում է հացը, թափ տալիս: Մրջյուններն ընկնում են սեղանի վրա ու խուճապահար դեսուդեն վազվզում: Ծերունին հացը դնում է իր գրպանը և շարունակում.

- Ահա այժմ այս հացը ոչ այս մրջյունինն է, ոչ էլ մյուսինը: Նայի՛ր երկրին, երկնքին ու կտեսնես, որ այս ամենը Աստծունն է, և ինչ էլ որ անես կամ չանես, այդ բոլորն էլ Արարչի ձեռքերի անսահմանության մեջ փոքրիկ սահմաններ են և մտահոգվելու ու անհանգստանալու որևէ առիթ չկա, քանի որ կյանքն ու նպատակը Աստծո ձեռքում է, արդ խաղաղվի՛ր, հանդարտվի՛ր և մի՛ տխրիր: Նախ՝ խնդրիր Երկնքի արքայությունը և Նրա արդարությունը, և այդ բոլորը ավելիով կտրվի քեզ:

Այնուհետև ծերունին շարունակում է իր ճանապարհը, իսկ երիտասարդը նայում է հորիզոնին, երկրին ու երկնքին և ինքն իրեն հարցնում.

- Իրա՛վ, արդյոք այս ամենն ո՞ւմն է:

ՀՈՂԱԳՈՐԾԸ

Մի հողագործ եզները լծած, իր մեծ գութանով արտերն է հերկում: Նայում է երկնքին ու մտածում. «Տեր Աստված, հուսով եմ, որ այս տարի ինչ էլ ցանեմ, առատ բերք կունենամ և անցյալ տարիների երաշտից ու անհաջողություններից կխուսափեմ»:

Աստծո հրեշտակը մոտենում է ու ասում.

- Աշխատիր հողն այնպես հերկել, որ կարողանաս արտերը հավասարաչափ ջրել, ուստի և առատ բերք ստանալ:

Հողագործն՝ ինքնագոհ, բայց փոքր-ինչ դառնացած նայում է հրեշտակին ու պատասխանում.

- Դեռ մանկությունից հողի հետ եմ խաղացել ու աշխատել և իմ գործի մեջ վարպետացել, այժմ եկել ես և ինձ խորհուրդ ես տալիս, թե ինչպե՞ս դաշտերը հերկել, ավելի լավ է, դու գնա երկինքն ու ամպերը հերկիր ու հրեշտակային գործերով զբաղվիր:

Հրեշտակը ժպտում է ու պատասխանում.

- Քանի որ քեզ վարպետ ես համարում, իսկ ինձ՝ աշակերտ, արդ, երկնքի ամպերն այնպես խառնիճաղանջ եմ հերկել, որ եթե արտերդ հավասարաչափ չվարես ու չոռոգես, ապա դժվար թե երկնքից թափվող անձրևները դաշտերդ ամբողջապես զովացնեն ու առատ բերք պարգևեն:

Այս առակի կարևոր պատգամներից մեկն այն է, որ հաճախ մարդիկ իրենց ցանկալի կարիքն են ուզում ստանալ Աստծուց, սակայն այլ պատասխան են ստանում, առավել ևս չեն հասկանում, թե Աստված իրենց ինչ է ասում..., որովհետև Տիրոջ համար հաճելի է, որ այդ կարիքը լինի մարդու համար մեղքերի թողություն ստանալը և փրկությունը, այլ ոչ թե երկրային, անձնասիրական կարիքները...

ԲԱՆՏԱՐԿՅԱԼԸ

Լուսաբացին մի գյուղացի՝ կանգնած իր տան կտուրի ամենաբարձր ու վտանգավոր հատվածի վրա, բարձրաձայն օգնություն է կանչում: Բայց անպատասխան է մնում: Նեղսրտած ասում է.

- Տե՛ր Աստված, օգնի՛ր ինձ, արդեն չգիտեմ, թե ինչպես անել... Ամենուր փնտրեցի տան բանալին, բայց չգտա, և այժմ բանտարկվել եմ հենց իմ տան մեջ ու չեմ կարողանում դուրս գալ:

Նախախնամող հրեշտակն այդ կողմերով անցնելիս նկատում է, որ գյուղացին կանգնած է կտուրի վտանգավոր վայրում, գալիս է ու ասում.

- Ո՛վ մարդ, գրպանիդ մեջ լավ նայիր, և այս վտանգավոր վայրից իջիր: Բանալին գրպանումդ է, իսկ դու ուզում ես, որ Աստված երկնքից իջնի ու քո տան բանալին գրպանիցդ հանի ու քեզ տա:

Կյանքում կան իրողություններ, երբ մարդիկ անհարկի կերպով Աստծուց նույնիսկ պահանջում են իրենց փոխարեն կատարել այնպիսի բաներ, որոնք ունակ են հաղթահարելու, եթե մի փոքր զգոն, ուշադիր ու խորագետ լինեն: Սակայն ասում են, թե ինչու է Աստված լռում..., իսկ մյուս կողմից իրենք իրենց տանում են փորձության և վտանգի եզրին...

ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

Մի երիտասարդ անհամբեր աջ ու ձախ գնում-գալիս է եկեղեցու մոտ:

Քահանան մոտենում է ու հարցնում.

- Ի՞նչ է պատահել.

- Երեկ այստեղ Աստծուն հանդիպեցի: Ասաց, որ խնդրանքս կկատարի և այսօր հենց այստեղ կուղարկի իմ պահապան հրեշտակին, որպեսզի ինձ տանի իմ երազանքների հեռավոր քաղաքը,- պատասխանում է մեծ սպասումներով լի երիտասարդը:

Մի քանի րոպե անց ճռճռալով, դանդաղ մի սովորական սայլ է մոտենում: Այն կանգնում է: Աչքի չընկնող հանդերձանք հագած սայլապանն ասում է.

- Ինչո՞ւ ես անտարբեր ու շշմած կանգնել. ես եմ այդ հրեշտակը, որ քեզ պիտի տանեմ երազանքներիդ հեռավոր քաղաքը:

- Բայց ես այլ բան էի սպասում..., իսկ այս սայլով բազում տարիներ են պետք, որ իմ նպատակն իրագործվի. այդ ճանապարհն այնքան հեռու է, որ միգուցե այս սայլով նույնիսկ չհասնեմ իմ երազանքների քաղաքը, - տրտնջալով պատասխանում է երիտասարդը:

Հրեշտակն ասում է.

- Այն, ինչ երազում ես և մանավանդ արագ իրագործել, Աստված այլ կերպ է տեսնում և ծրագրում և այժմ քեզ համբերություն, խոհեմություն և իմաստություն է սովորեցնում:

ԱՌԱՋ ԴԵՊԻ ԵՐԱՋԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Մի երիտասարդ շատ գեղեցիկ նավակով մի մեծ գետի հունով նավարկում է: Ճանապարհին տեսնում է մեկ ուրիշ հմայիչ նավակ, որտեղ մի այլ երիտասարդ՝ սարսափահար ու հապշտապ, մեծ դժվարությամբ թիավարում է գետի հունին հակառակ:

Հարցնում է.

- Ինչո՞ւ ես գետին հակառակ ընթանում:

Սարսափած երիտասարդը պատասխանում է.

- Ոսկե շղթաներով զարդարված մի մարդ ինձ վստահեցրեց, որ այս գետի հունը տանում է դեպի հաջողությունների ու վայելքների աշխարհը, որտեղ այդ մարդը հասել է մեծ բարձունքների: Սակայն իրականում քիչ հեռու մի հսկա ջրվեժ է, և գետը գահավիժում է դեպի անդունդը:

Երիտասարդը սկսում է անհանգստանալ ու ասել.

- Այդ նույն մարդն ինձ էլ հանդիպեց ու նվիրեց այս գեղեցիկ նավակը, համոզեց, որ այս գետի հունը տանում է դեպի անսահման հնարավորությունների քաղաքը, ուր կարող եմ իմ ծրագրերն իրականացնել ու հանրահայտ մարդ դառնալ...

Սարսափահար երիտասարդը հարցնում է.

- Իսկ ո՞ւր են նավակիդ թիերը:

- Այդ մարդն ասաց, որ թիերն անհրաժեշտ չեն. գետի հունը բավականին ուժեղ է, և թիերը գցեց ջուրը...,- շփոթված պատասխանում է երիտասարդը:

Իսկ հեռվում արդեն լսվում էր հուժկու ջրվեժի դղրդոցը:

Ցավոք, ինչքան շատ երիտասարդներ կան, որ ինքնագոհ նավարկում են այդ գետի հունով:

Սիրելի՛ երիտասարդներ, իջե՛ք հմայիչ այդ նավակներից ու ե՛տ դարձեք, քանի դեռ ուշ չէ...

ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Երկու գործընկեր են լինում՝ մեկն անհավատ, մյուսն աստվածապաշտ: Մի անգամ անհավատ ընկերը սպասում է մյուս ընկերոջը, որն ուշանում է նշված ժամին հանդիպելու համար: Երբ գալիս է, անհավատ ընկերը հարցնում է՝ ինչո՞ւ այդքան ուշացար: Հավատացյալ ընկերը պատասխանում է.

- Ժամացույցը չէր աշխատում: Ես էլ չգիտեի, թե երբ գալ:

Սպասեցի, մինչև մի նոր ժամացույց ինքն իրեն ստեղծվեց, և մինչև ստեղծվեց, որոշ ժամանակ անցավ: Ես էլ նայեցի ժամացույցին, տեսա՝ ժամանակն է գալու և նույնիսկ ուշացել եմ ու շտապելով եկա հանդիպմանը:

Անհավատն ասում է.

- Մի՞թե ցնորվել ես, ինչպե՞ս կարող է ժամացույցն ինքն իրեն ստեղծվել:

Հավատացյալ ընկերը պատասխանում է.

-Այդ դեպքում ինչպե՞ս կարող է այսքան բարդ ու զարմանալի աշխարհն ինքն իրեն ստեղծվել: Չէ՞ որ անտրամաբանական է այդպիսի տրամաբանությունը: Այն, ինչ համակարգված է, նշանակում է՝ ստեղծված ու ծրագրավորված է մեծագույն բանականության կողմից:

Մի պահ նայեք մարդու կողմից ստեղծված ժամացույցին, որի սլաքները համաչափ շարժվում են, մարդ արարածը, որ ներդաշնակել է ժամացույցի սլաքների համաչափությունը: Սակայն ինչքան համաչափ է Արարչի կողմից ստեղծված տիեզերքի ու մոլորակների շարժումը, որ ներդաշնակել է կյանքի, տիեզերքի ու բնության շարժումը, որտեղ նույնիսկ թիթեռի թևերի թրթիռներն են մեկ համամասնություն կազմում բնության ու տիեզերքի ամբողջական շարժման հետ...

ԻՍԿ ԻՆՉՈՒ-ՆԵՐԵԼ

Թշնամու հրոսակները հարձակվում են մի քաղաքի վրա: Բնակիչները փախչում են դեպի գետը՝ անցնելու համար մյուս ափ, որպեսզի փրկվեն: Ծանր քայլերով, քրտինքը երեսին գետին է մոտենում մի արհեստավոր՝ հսկա պարկ ուսին շալակած:

Ափի մոտ կանգնած փոքրիկ նավակի միջից մի մարդ ասում է.

- Եղբա՛յր, պարկդ թո՛ղ ու մտի՛ր նավակ: Այն կարող է միայն երկու մարդ տեղափոխել դեպի փրկության ափ:

Արհեստավորը պատասխանում է.

- Չեմ կարող իմ պարկը թողնել ու դրանից հրաժարվել: Այն լցված է այն քարերով, որոնցով քաղաքի մեր բնակիչներն ինձ հարվածել են ու ցավ պատճառել: Իսկ ես դրանք հավաքել եմ ու մյուս ափ պիտի անցկացնեմ, որ նույն քարերով ինձ ցավ պատճառողներին հարվածեմ:

- Եղբա՛յր, դու այդպես և՛ նավակը կխորտակես, և՛ ինձ, և՛ քեզ, քո պարկի հետ միասին: Արդ, դատարկիր այն ու նավակ մտի՛ր:

Սակայն արհեստավորը պարկը դնում է գետնին, բացում պարկի բերանը, հանում տարբեր չափերի քարերն ու մինչև հիմա որոշում, թե ինչ մեծության և չափի քարերը թողնի իր պարկում...

Պարկերը շալակած երկնքի արքայություն մտնելն անհնար է, մանավանդ, երբ թշնամին մեղքի միջոցով ներխուժել է մեր կյանք, իսկ մենք դեռևս որոշում ենք, թե ինչ չափի քարեր թողնել մեր պարկում...

ԿՈՐՑՐԱԾ ՊԱՀԵՐԸ

Մի հողագործ լսում է, որ իրենց երկրի թագավորը հանդիպելու է ժողովրդի հետ՝ մարդկանց ցանկությունները լսելու ու օգնելու համար:

Նա շտապում է քաղաք՝ թագավորին տեսնելու և իր խնդրանքներն ուղղելու նրան:

Երեկոյան մտնում է մի պանդոկ, գարեջուր պատվիրում ու նստում մի սեղանի մոտ: Պանդոկ է մտնում գորշ ու մաշված հագուստներով մի աղքատ մարդ, նստում հողագործի մոտ ու հարցնում.

- Տեսնում եմ, որ այս քաղաքից չեք, ի՞նչ գործով եք եկել այստեղ:

- Իմ երազանքներից մեկը թագավորին հանդիպելն է ու իմ խնդրանքները նրան ասելը,- պատասխանում է հողագործը:

Աղքատ մարդն ասում է.

- Ես կարող եմ քեզ օգնել, որ թագավորին տեսնես:

Այդ ժամանակ պանդոկ են մտնում մեծահարուստ մարդիկ ու նստում նրանցից քիչ հեռու: Հողագործը մտածում է, որ այս անվանի մարդիկ ավելի շուտ կարող են օգնել իրեն, քան աղքատ մարդը և գնում է, գարեջուր հյուրասիրում ու նրանց միանում:

Հաջորդ օրը, երբ թագավորն իր շքախմբով անցնում է քաղաքի պողոտայով, հողագործը զարմանում ու ափսոսանք է արտահայտում, բայց ժողովրդի բազմության պատճառով չի կարողանում մոտենալ թագավորին: Թագավորն այն մարդն էր, որ նախորդ օրը անշուք զգեստներով նստած էր իր կողքին...

Հաճախ այսպես էլ մենք ենք կորցնում այն պահերը, երբ Քրիստոս մեզ բավական մոտ է լինում:

ԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏԻ ՎԵՐՋԸ

Մի ունևոր մարդ երազ է տեսնում, թե գտնվում է մի սենյակում, որտեղ մեծ հայելի էր դրված: Մոտենում է հայելուն, նայում, զարմանում, քանի որ երկու մեծ թև ուներ, ինչպես հրեշտակները: Ինքն իրենով հիացած ասում է.

- Էս ե՞ս էլ եմ հրեշտակ. գիտեի, որ Աստված ինձ շնորհ կանի, չէ՞ որ եկեղեցի եմ կառուցել, մոմ եմ վառել, փող եմ բաժանել:

Հայելու մեջ նայելիս նկատում է իր ետևում կանգնած սատանային, հարցնում է.

- Ի՞նչ ես ուզում, չե՞ս տեսնում ես էլ եմ հրեշտակ:

Սատանան պատասխանում է.

- Քեզանից ոչինչ չեմ ուզում, եկել եմ թևերս տանեմ:

Մեծահարուստը հրեշտակային իր թևերը բացում է, տեսնում է մեկի վրա գրված է դրամ, մյուսի վրա՝ իշխանություն: Արագ դուրս է գալիս այդ սենյակից ու հայտնվում է մի անդնդախոր ձորի բերանին, որտեղից տարբեր հրեշտակներ թռչում են երկինք՝ ամպերի վրա գտնվող դրախտը: Բացում է իր թևերը ու ինքն էլ փորձում թռչել դրախտ: Կրկին հիանում է, քանի որ ստացվում է թռչել, բայց հանկարծակի թեթև քամի է բարձրանում: Մեծահարուստը սկսում է օրորվել, հավասարակշռությունը կորցնել ու գլխապտույտ կերպով դեպի ահռելի ձորը գահավիժել: Գոռում-գոչում է՝ օգնեցեք: Այդ պահին արթնանում է ու ուրախանում, որ երազ էր տեսնում, սակայն սփրթնում է. հեռվում սատանան աթոռին նստած ժամացույցին էր նայում:

Մեծահարուստը հարցնում է.

- Այս ի՞նչ ես անում.

Սատանան պատասխանում է.

- Եկել եմ թևերս տանեմ: Ի՞նչ է, ուզում էիր իմ թևերով դրա՞խտ թռչեիր...

ԽԻՂՃԸ

Մի վաշխառու, կիզիչ արևից հոգնած, քայլում է չոր տափաստանով: Ճանապարհի եզրին, թփուտների մեջ, նկատում է ցնցոտիավոր մի երեխայի, որը նվաղած ու ցածրաձայն ջուր էր խնդրում: Վաշխառուն մտքում հաշվարկում է, որ եթե այս երեխային ջուր տա, ապա իր ունեցած ջրի պաշարն իրեն չի բավականացնի ամբողջ ճանապարհին, և արագ անցնում է: Որոշ ժամանակ անց տափաստանում դեգերող հեծյալ զինվորներ են մոտենում վաշխառուին ու ասում, որ թագավորի որդուն են փնտրում, և ով գտնի այդ տղային, մեկ պարկ ոսկի պարգև կստանա: Վաշխառուի սիրտն սկսում է արագ թրթռալ: Մեծ փութաջանությամբ շրջվում է և գալիս-հասնում այն թփուտին, ուր երեխան էր ընկած: Հապշտապ թփերի ճյուղերով ծածկում է տղային, որպեսզի ճանապարհով սլացող հեծյալները, ոչինչ չնկատելով, անցնեն: Այնուհետև իր պայուսակից հանում է ջուրը և խմեցնում տղային՝ ուրախությամբ ասելով.

- Խմի՛ր, խմի՛ր, ինչքան կարող ես. դու ինձ համար շատ թանկ ես, քանի որ թագավորի որդին ես:

Տղան խմում է ջուրը, ուշքի գալիս ու պատասխանում.

- Ես թագավորի որդին չեմ, այլ քո խիղճն եմ, ինչքան էլ ինձանից փախչես, ինչքան էլ ինձ անտեսես, մեկ է, ուր էլ գնաս ու պտտվես, վերջում ինձ մոտ ես գալու ու մեղքերիդ համար պատասխան ես տալու:

Այս ամենն ասելով՝տղան, ինչպես հողմը, անհետանում է, իսկ այլայլված ու շփոթմունքի մատնված վաշխառուն հուսահատ գլուխն է բռնում.

- Ջուրս խմեց, կես արեց, ես ինչպե՞ս պիտի անցնեմ էս տափաստանը...

ՁԱՆՁՐՈՒՅԹ

Ասում են, թե մի թագավոր իր շքախմբով գալիս-հասնում է ցամաքած լճակի մոտ, որտեղ մի գեղջուկ մարդ խարույկի վրա դատարկ կաթսա է դրել և մի եղեգով լճակն է չափում:

Թագավորը դժգոհությամբ ասում է.

- Գիշերն ինձ Աստծո հրեշտակը հայտնվեց ու ասաց, որ եթե այստեղ գամ, ապա կհասկանամ, թե ինչու եմ այդքան ձանձրանում ու հոգու խռովք ապրում, սակայն այստեղ մի սովորական գեղջուկ եմ տեսնում, ով տարօրինակ ու անիմաստ բաներ է անում:

Գեղջուկը մոտենում է նրան, խոնարհվում ու հարցնում.

- Թագավո՛ր, տե՛ր, նայի՛ր կաթսայի մեջ, ի՞նչ ես տեսնում:

- Ծաղրո՞ւմ ես ինձ. մի՞թե չգիտես, որ ես ամեն ինչ ունեմ՝ և՛ իշխանություն, և՛ փառք, և՛ դրամ և կարող եմ նույնիսկ քեզ մահապատժի ենթարկել: Չէ՞ որ կաթսան դատարկ է, դատարկություն, իսկ դու հարցնում ես, թե ի՞նչ ես տեսնում:

- Դու պատասխանեցիր այն հարցին, թե ինչու ես ձանձրանում ու հոգու խռովք ապրում, որովհետև հոգիդ դատարկ է, ինչպես այս կաթսան, քանի որ Աստծո ներկայությունը ցամաքել է, ինչպես այս լճակը, իսկ ձանձրույթը նման է այս եղեգին, որ չափում ու ցույց է տալիս հոգու դատարկության չափը, ինչքան մեծ է ձանձրույթը, այնքան մեծ է հոգու դատարկությունը: Եվ փնտրտուքներդ այրում են այդ դատարկությունը ու նույնիսկ ցավ պատճառում, ինչպես այս կրակը, որովհետև խաղաղություն ես փնտրում, բայց չես գտնում... Հաշտ և խաղաղ եղի՛ր Աստծո հետ և՛ ձանձրույթը կվերանա, և՛ հոգու խռովքը,- պատասխանում է գեղջուկն ու անհետանում, քանի որ թագավորն ավելի մոտենալով ճանաչում է իրեն հայտնված հրեշտակին:

Ձանձրույթը մի տեսակ ջերմաչափ է, որ ցույց է տալիս, թե ինչքանով է դատարկ մեր հոգին ու թե ինչքանով է Աստծո ներկայության լիությամբ լցված այն:

ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆ

Մի իշխան գեղեցիկ նժույգ ուներ: Երբ նավարկության էր մեկնում, նժույգը հանձնում էր իր ծառաներից մեկի խնամքին, իսկ վերադարձին գոհունակությամբ վարձատրում էր այդ ծառային նժույգը լավ խնամելու և պահելու համար: Այնպես եղավ, որ կրկին երեք օրով բացակայեց, իսկ կրտսեր ծառաներից մեկը, բոլորից առաջ անցնելով, ըստ իր խնդրանքի, ձիու խնամքը ստանձնեց:

Այս ծառան ցանկացավ հանդիսավորությամբ նժույգով շրջել քաղաքում, սակայն փոքր-ինչ անց ձին դարձավ անհնազանդ ու վայրի: Սլացավ քաղաքի փողոցներով՝ ավերելով իր ճանապարհին հանդիպած ամեն ինչ, այնուհետև թամբից ցած նետեց ծառային ու անհետացավ քաղաքի փողոցներում:

Հալումաշ եղած այս մարդը երկու օր փնտրեց ձիուն ու վերջապես գտավ: Համառ կենդանուն մտրակների հարվածների ներքո քարշ տվեց դեպի իշխանի դղյակը, որպեսզի շուտափույթ ազատվի իր ստանձնած պարտականությունից: Վճարեց նաև բոլոր նրանց, որոնց նժույգը վնաս էր պատճառել իր անցած ճանապարհին:

Իսկ իշխանը, երբ վերադառնա, արդյոք կվարձատրի՞ այս ծառային...

Այս է պարծենկոտության, ագահության և հպարտության վերջը:

Երբեմն մարդիկ գայթակղվում են պատեհության հնարավորություններով, սակայն ընկնում են ավելի մեծ փորձությունների ու դժվարությունների մեջ, քանի որ ճիշտ չեն գնահատում տվյալ իրողությունն ու իրավիճակը:

Պետք չէ վերցնել ավելին, քան մարդ կարող է: Աստված ամեն մարդու տալիս է այնքան, որքան այդ մարդը կարող է ծառայել, թեև մարդիկ հաճախ ավելին են ուզում:

Ահա այսպես էլ սատանայի խորհրդով մարդը ցանկացավ աստվածանալ, բայց...

ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մի ծառի ստվերի ներքո վարդ էր աճում:

- Այնպես կուզեի, որ այս ստվերում չլինեի, ու արևի նուրբ շողերը միշտ ինձ շոյեին ու զարդարեին,- ասում է վարդը:

Այդ օրը այգեպանը որոշում է կտրել ծառի այն ճյուղերը, որոնք ստվերում էին թողել վարդին, ու ծաղկի առջև բացվում է կապուտակ երկնակամարն ու արեգակի ճառագայթները:

Վարդը հիանում է, գեղեցկանում ու որոշ ժամանակ անց ասում.

- Ինչո՞ւ են արևի շողերը միայն ցերեկը լուսավորում, ինձ այնպիսի արեգակ է պետք, որ ցերեկ ու գիշեր միշտ լուսավորի:

Մի քանի օր անց կրկին դժգոհում է.

- Ինչո՞ւ են այս ճառագայթներն այսքան տաք ու դեղնավուն: Ես ուզում եմ, որ դրանք ավելի ջերմ ու գույնզգույն լինեն:

Վարդի շուրջը հավաքված ծաղիկներն ասում են.

- Իրոք, դու ավելի գեղեցիկ ես, քան արեգակը, քեզ անհրաժեշտ է մի արեգակ, որ ցերեկ ու գիշեր միշտ լուսավորի ու քո հմայքին համապատասխան լինի:

Այդ օրն այգեպանը մտնում է այգի, քաղում վարդը, նվիրում մի մարդու, որն էլ տանում է և գիշերային մի խաղատան սեղանը զարդարում:

Վարդը հիանում է, ուրախանում, որ վերջապես գտավ այն, ինչ փնտրում էր, քանի որ այստեղ, թեև փոքր, բայց շատ արեգակներ կային, նույնիսկ գույնզգույն, որ լուսավորում էին իրեն ցերեկ ու գիշեր և այնքան էլ տաք չէին ու նման երկնքի արեգակին: Բայց մի քանի օր անց վարդը թոշնում է ու տխրում՝ նայելով պատուհանից դեպի իրական արեգակին ու նրա ճառագայթներին...

Այսպես էլ կյանքում մարդիկ հաճախ չեն գնահատում այն, ինչն աստվածային նախախնամությունն իրենց է պարգևում, դրա համար էլ երբեմն Աստված ետ է վերցնում իր պարգևածը:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Մի մաքսավոր երազ է տեսնում, թե ջրհորի շուրջ մարդկանց բազմություն է հավաքվել, իսկ քահանան խաղաղություն ասելով հոգեհանգստյան արարողություն է կատարում: Իսկ ջրհորի մեջ մի մարդ կռիվ է տալիս ջրի ալիքների հետ ու օգնություն կանչում՝ գոչելով, թե Տե՛ր Աստված, օգնի՛ր ինձ ազատվել այս տառապանքից:

Մաքսավորը մոտենում է քահանային ու ասում.

-Չե՞ք տեսնում, այս մարդն օգնություն է կանչում, իսկ դուք նրան ննջեցյալների շարքին եք դասել և օգնելու փոխարեն հոգեհանգստյան արարողություն եք կատարում:

Քահանան պատասխանում է.

- Տե՛ր Աստված մարդկանց օգնելու համար այս բազմությունն ուղարկեց, պարաններ տվեց, սակայն ապարդյուն, եթե երկնքից հրեշտակ էլ իջնի, այս մարդուն ոչնչով չի օգնի, քանի դեռ նա իր կրծքին պինդ-պինդ սեղմած ոսկեդրամներով լի պարկից չի հրաժարվել...

Մաքսավորը նայում է ջրհորի մեջ ու սարսափում, որովհետև տեսնում է իրեն, թե ինչպես է ջրի մեջ հուսահատ լող տալիս մի ձեռքով ամուր բռնած ոսկեդրամներով լի պարկը, մյուս ձեռքով՝ պարանից կառչած:

Եթե ցանկանում ենք Աստծո խաղաղության հաղորդակցությունն ունենալ մեր հոգիներում, ապա պետք է կամք դրսևորենք՝ հրաժարվելու գայթակղություններից, մեղքերից, որոնք շատ հաճախ կյանքի սովորական իրադրությունների մեջ մեզ համար ավելի արժեքավոր ու ցանկալի են թվում, քան դրանցից հրաժարվելն ու Աստծո խաղաղությունն ունենալը: Ուստի, Աստծուն մոտենալու համար անհրաժեշտ է կատարյալ հրաժարում մեղավոր աշխարհից:

ՎԵՐԵԼԱԿԸ

Մի քրիստոնյա տեսիլք է տեսնում, թե հրեշտակների կերպարանքով դևեր են մոտենում ու ասում.

- Բարձրացի՛ր առջևդ գտնվող, դեպի ամպերը ձգվող այս ապակե շենքի վերին հարկը և կգտնես այն, ինչ փնտրում ես...

Քրիստոնյան ապակեպատ վերելակով արագորեն ընթանում է դեպի վերին հարկերը, սակայն, հասնելով հսկայական բարձրության, վերելակի պարանը կտրվում է, և այն մեծ արագությամբ սլանում է դեպի ցած: Մարդը օգնություն փնտրող հայացքով նայում է չորս կողմը և տեսնում իր առջև հեռվում լույսի մեջ Հիսուսին: Փրկություն աղերսող հայացքով նայում է Աստծուն, բայց որևէ պատասխան չկա, իսկ վերելակն ավելի մեծ արագություն հավաքելով ներքև է սլանում: Մահվան, երկյուղի, ցած սլացող վերելակի արագությունը ամբողջովին համակում է մարդուն: Նա կրկին նայում է Հիսուսին, բայց Հիսուս լուռ է... և քրիստոնյան ասում է.

- Թո՛ղ քո կամքը լինի, եթե կամենում ես, որ այսպես լինի...

Վերելակն արդեն մոտենում է առաջին հարկին, իսկ մարդը՝ գլուխը խոնարհած, խաղաղությամբ սպասում է... Սակայն վերելակի ընթացքը սկսում է դանդաղել, այն մի պահ կանգնում է, այնուհետև դանդաղորեն սկսում է վեր բարձրանալ: Մարդը նայում է դեպի լույսը, Հիսուս ժպտում է, իսկ վերելակը շարունակում մեղմորեն վեր բարձրանալ...

Կատարյալ վստահությունն առ Աստված կյանք է և խաղաղություն: Աստված մարդու համար միշտ բարին է կամենում:

ՊԱՅՔԱՐ

Գեղեցիկ պարտեզում մի երիտասարդ, աղոթագիրքը ձեռքին, բարձրաձայն աղոթքներ է արտասանում: Ծառերի վրա ագռավներ ու կաչաղակներ են հավաքվում ու գնալով ավելի շատանում: Իրենց ձայներով ու կռկռոցներով չորս կողմը խլացնում՝ կարծես պատասխանելով երիտասարդի բարձրաձայն աղոթքներին: Աղոթողը տեսնում է՝ անօգուտ է: Հեռանում է այդտեղից, նկատում մի նվաղած շատրվան, որ փոքրիշատե գործում է: Երիտասարդը, նեղված նախորդ դրվագից, սկսում է շատրվանի մոտ շարունակել աղոթելը, բայց շատրվանի ջուրը ավելի է նվաղում, ցածրանում ու անհետանում:

Երիտասարդը՝ տրտմած ու մտախոհ, դուրս է գալիս արահետ՝ Աստծուց դժգոհելով, թե ոչինչ էլ չի ստացվում: Տեսնում է պատկառելի տարիքով մի մարդ նայում է մի կշեռքի, որի աջ կողմում բամբակ է դրված, մյուս կողմում՝ ոչինչ:

Այդ մարդն ասում է.

- Հավատքդ նման է կշեռքի վրա դրված այս բամբակին: Երբ կշեռքի մյուս կողմում ոչինչ չկա, բամբակը թվում է ծանր և տպավորիչ: Իսկ երբ կշեռքի մյուս կողմում թեկուզ փոքրիկ քարեր են դրվում, որոնք փորձություններն են, պարզորոշ երևում է, թե բամբակն ինչքան թեթև է, եթե քամին էլ փչի, կգլորվի այնտեղ, ուր քամին է փչում ու գնում: Ուստի, փորձություններն ու դժվարությունները բացահայտում են հավատքի չափն ու կշիռը: Հավատքդ պետք է վեմ լինի, ինչ փորձության ալիք էլ հարվածի, այն անսասան վեմի պես կանգուն պիտի լինի:

Երիտասարդը, մտածելով այս ամենի մասին, շրջվում է, գրպանից հանում ծխախոտը, վառում ու ինքն իրեն ասում.

- Իրոք, հավատքը պետք է վեմ լինի:

Այնուհետև ծխախոտը գցում՝ արագորեն ետ պտտվելով ու ոգևորված ասելով.

- Այս մարդը կարծես Պետրոս առաքյալը լինի:

Բայց ոչ մարդ է տեսնում, ոչ էլ՝ կշեռք...

ՄԱՀԸ

Ինչպես վկայում է հռոմեացի պատմագիր Սվետոնիոսը. «Կալիգուլա կայսրը իր դեմքը, արդեն ի բնե այլանդակ ու վանող, ջանում էր ավելի կատաղի դարձնել, հայելու առջև վախեցնող ու սարսափեցնող արտահայտություն տալով դրան»: Եվ ահա կայսրը կանգնում է հայելու առջև և իր դիմագծերին կատաղություն հաղորդում, նախքան իր մոտ շղթայակապ մի քրիստոնյայի բերելը:

Երբ զինվորները քրիստոնյային բերում են, հարցնում է.

- Ինչո՞ւ ես այդքան հանդարտ ու հանգիստ, չես տեսնում, թե ի՞նչ ահարկու ու զորեղ եմ: Երկրպագիր ինձ և քեզ կյանք կշնորհեմ: Մի՞թե չես սարսափում մահից:

- Քրիստոս մեզ համար մեռավ և հարություն առավ, որպեսզի Իր գալստյան ժամանակ մենք էլ հարություն առնենք: Եվ Նա է, որ կյանք է շնորհում, ու մենք Աստծուն ենք միայն երկրպագում,- պատասխանում է քրիստոնյան:

Կայսրը իր տեղից վեր է ցատկում ու գոչում.

- Իսկույնևեթ ես մահը կուղարկեմ քեզ մոտ, որպեսզի հասկանաս, թե ով է կյանք ու մահ արժանացնում մարդկանց:

Գիշերվա կեսին սև հանդերձներով մի դև գալիս է ապարանքում թափառող կայսեր մոտ ու ասում.

- Բարև՛ Կալիգուլա, դու ինձ կանչե՞լ էիր:

- Ինչո՞ւ ես այստեղ եկել, գնա զնդան, այնտեղ է քո գործը, ուր մի քրիստոնյա մահվան է դատապարտված,- շփոթահար ու վախվորած պատասխանում է կայսրը:

- Այնտեղ անելու ոչինչ չունեմ. այդ քրիստոնյայի մեջ ինձ վանող այնքան լույս կա... և եթե նա մահանա էլ, Քրիստոսով կյանք կունենա, իսկ քո հոգում այնքան շատ դատարկություն ու խավար կա, որ մահվան բնակության հիանալի մի վայր է,- բերկրանքով ու հիացմունքով ասում է դևը:

Կայսրի դեմքն այլայլվում է, բայց այս անգամ՝ մահվան երկյուղից...

ԻՄ ԱՊԱՎԵՆԸ

Մի աֆրիկացի սևամորթ քրիստոնյա եկեղեցուց վերադառնում է իրենց գյուղ: Մեծ հոգևոր ուրախության ու խաղաղության ապրումներ է ունենում, քանի որ այդ օրը եկեղեցուց վերադառնալիս զգում է Քրիստոսի ամբողջական ներկայությունն ու լիությունը: Ճանապարհով քայլելիս մռնչյուն է լսում: Քարացած կանգնում է. ճանապարհի կենտրոնում հայտնվում է մի ամեհի առյուծ ու քայլ կատարում դեպի քրիստոնյան: Այս մարդու սիրտը սկսում է արագ բաբախել, սառը քրտինքը պատում է նրան: Իր մտքում ասում է. «Քրիստոսն է իմ ապավենը և փրկիչը»: Այնուհետև ևս մեկ քայլ առաջ է գալիս. ետ շրջվել և փախչել, նշանակում է առյուծին զոհ դառնալ, որը նրան միանգամից եղնիկի նման որս կհամարեր: Սակայն հսկա այդ գազանը ցածրաձայն մռնչալով հանդարտ նորից շարժվում է աֆրիկացին, որը դանդաղ կռանում է, որպեսզի մի մեծ քար վերցի: Այդ պահին մի մարդ ձեռքը դնում է քրիստոնյայի ուսին ու ասում.

- Մի՛ վախեցիր, ես միշտ քեզ հետ եմ:

Ապա այդ մարդը մոտենում է առյուծին, շոյում նրա թավամազ գլուխն ու շարունակում.

- Այս գազանը քեզ չի վնասի, չէ՞ որ ես եմ քո ապավենն ու փրկիչը:

Այդ ժամանակ խիտ թփուտների միջից դուրս են գալիս ևս հինգ առյուծներ իրենց ձագուկների՝ կորյունների հետ միասին ու ճանապարհի կենտրոնում կանգնած առյուծին հետևելով անհետանում: Քրիստոնյան այդ տեսարանից ուշքի է գալիս և ճանապարհին ոչ ոքի չտեսնելով և քաջալերվելով՝ կրկին ասում. «Քրիստոսն է իմ ապավենը և փրկիչը» ու շարունակում իր ուղին:

ՊԱՐԱՆԸ

Մի մարդ՝ հուսահատ երկնքին է նայում ու ասում.

- Տե՛ր Աստված, մի՞թե այսքան անարժան մարդ եմ: Ամեն անգամ խոստանում եմ, որ այլևս նույն մեղքը չեմ գործի, բայց հաջորդ պահին կրկին նույն մեղքն եմ գործում: Ինչքա՞ն պիտի համբերես ու ներես ինձ...

Հայտնվում է Գաբրիել հրեշտակապետը, մոտենում մարդուն ու նրա գոտկատեղից մի երկար պարանով պինդ-պինդ կապում, իսկ պարանի մյուս հատվածն իր ձեռքում պահում:

Այդ ամենից զարմացած մարդը հարցնում է.

- Այս պարանով ինձ կապում ես, որպեսզի հասկանամ, որ այլևս ներո՞ւմ չունեմ:

Գաբրիել հրեշտակապետը պատասխանում է.

- Շուտով, ինչպես միշտ, գնալու ես և ուղիղ մի ճահճի մեջ ես ընկնելու: Հիսուս այս պարանով քեզ պիտի դուրս քաշի, հանի այդ ճահճից: Այս պարանը խորհրդանշում է Աստծո շնորհը, որ հավատքի ու ապաշխարության միջոցով քեզ ներում է շնորհում: Ինչքան հավատքդ մեծ լինի, այնքան պարանն ամուր կլինի, ինչքան հավատքդ թույլ լինի, պարանը դերձակի թելի կնմանվի: Արդ, եթե հավատքով դեպի Աստծուն ես նայում, Քրիստոսի շնորհով Աստված քեզ միշտ կների ու ճահիճներից կհանի ու փրկի:

ՀՈՒՅՍ

Մի աշխատասեր շինական մեծ ոգևորությամբ ճամփա է ընկնում դեպի մի հեռավոր երկիր, ուր պատմում են, թե Աստծո արքայությունն է գտնվում և որտեղ բազում մեծ ու վեհ նպատակների ու երազանքների իրականացումն է կայանում: Մեծ հույսով լցված շինականը գնում-գնում է, բայց ոչ ճանապարհն է վերջանում, ոչ էլ արքայությանն է հասնում: Ուժասպառ եղած պառկում է ճամփեզրի խոտերին ու ասում.

- Տե՛ր Աստված, այլևս ուժ չունեմ շարունակելու...

Միևնույն ժամանակ տարօրինակ զգացում է ունենում ու զարմացած ասում.

- Տե՛ր Աստված, ես ուժասպառ եղած պառկել եմ գետնին, բայց, չգիտես ինչու, շարժվում ու գնում, շարունակում եմ ճամփան:

Եվ այդ պահին նկատում է՝ Հիսուս ժպտում է ու իրեն գրկած քայլում է ճանապարհով դեպի նպատակակետը...

Երբեմն մարդ ուժասպառ է լինում ու մտածում, որ այլևս չի կարող շարունակել՝ երկար սպասելով Աստծո օգնությանը, բայց այդ ժամանակ զարմանք ու ուրախություն է ապրում, քանի որ հենց Աստված է իրեն մղում, ուժ տալիս ու տանում դեպի այդ առաքելությունը:

Մի կողմից երկար սպասումից հետո Աստծուն հուսալով և Նրա ճանապարհներով գնալը անվերջ է թվում նպատակին հասնելու համար, որովհետև Աստված անվերջ ու հավիտենական է և Նրա ճանապարհներով գնալն էլ է անվերջ, սակայն երկնքի արքայությունը հենց ինքն է գալիս ու հանգրվանում Քրիստոսի շնորհի միջոցով՝ իրականացնելով սպասված նպատակը:

ՍԻՐՈՒՄ ԵՍ ԻՆՁ

Մի երիտասարդ, փափուկ ու գեղեցիկ բազկաթոռին նստած, կարդում է Ավետարանի այն հատվածը, ուր Հիսուս Պետրոս առաքյալին ասում է. «Սիմոն, որդի Հովնանի, սիրո՞ւմ ես ինձ»: Այնուհետև երիտասարդն ամբողջությամբ հենվում է բազկաթոռին ու ասում.

- Տե՛ր Հիսուս, դու գիտես, թե ինչքան եմ սիրում քեզ, նույնիսկ կյանքս կտամ քեզ համար, սակայն ինչո՞ւ է ամեն ինչ այսքան անարդար ինձ համար: Իմ շրջապատում մարդիկ գոհ ու լավ ապրում են, իսկ ես, ինչ դարձել եմ քրիստոնյա և հավատացել ու սիրել քեզ, ոչինչ այնքան էլ հաջող չի ընթանում: Դրամը չի բավարարում, իմ կամեցած հանդերձանքները չեմ կարողանում գնել, ծրագրերս չի իրականանում: Ամենուր, ուր տալիս եմ քո անունը, ասում են, ուր է քո Տեր Աստվածը, եթե կա, ինչու հույսերդ չեն արդարացնում: Ուզում եմ, որ լավ լինի՝ ինձ համար, բոլորի համար: Եթե ինձ սիրեիր, ապա իմ խնդրանքներն իրականություն կդարձնեիր, իսկ ես էլ իմ ամբողջ կյանքը քեզ կնվիրեի:

Երիտասարդը զգում է, որ հարմարավետ բազկաթոռին նստած ննջում է և ինչ-որ մեկն իր գլուխն է շոյում ու ասում.

- Որդյա՛կս, արթնացի՛ր, դու ինձ չես սիրում, այլ ինձ հետ առևտուր ես անում...

ԱՂՈԹՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի ձկնորս գալիս և տեսնում է, որ մի մարդ ծովի ափի մոտ, կիզիչ արևի ներքո, նստած է նավակի մեջ և հարցնում է.

- Ինչո՞ւ ես այս շոգ եղանակին նստել այստեղ:

Մարդը պատասխանում է.

- Աստված ինձ ասաց, որ եթե նստեմ նավակը, շուտով կհասնեմ այն կղզին, որտեղ պտուղներ կան, որոնք իմ հիվանդությունը կբուժեն, սակայն մեկ ժամ է արդեն նստած եմ այս նավակում, բայց ոչ Աստծո զորությունն եմ տեսնում, ոչ էլ ուժը:

Ձկնորսն ասում է.

- Նավակը ոտքեր չունի, որ ինքնիրեն ջուրը մտնի: Իսկ կղզի հասնելու համար պետք է թիավարել և ծովի ալիքները հաղթահարելով հասնել: Աստված մարդուն ծուլության չի կոչել, այլ աշխատանքի ու ջանադրության միջոցով իրականացնելու այն, ինչը նպատակադրվել ես:

Երբեմն մարդիկ աղոթում են մեկ կամ երկու կամ երեք անգամ ու ցանկանում իրենց աղոթքի միջոցով Աստծո ամենազորությունը տեսնել, երբեմն էլ հրաշքի են սպասում, սակայն անհրաժեշտ է օրվա մեջ շատ անգամ աղոթել միևնույն աղոթքը, ամենաքիչը յոթից տասն անգամ տվյալ խնդրանքի համար՝ օրեր, ամիսներ, նույնիսկ տարիներ: Այդ ժամանակ է, որ երևում են զորության ու հրաշքի պտուղները, հակառակ դեպքում նմանվում ենք ծովի ափին նավակի մեջ նստած սպասող մարդուն: Հավատքն առանց գործի և գործն առանց հավատքի անպտուղ են: Հավատացե՛ք, աղոթքը հրաշքներ է գործում:

ԿԱՄՔ

Սատանան հպարտ քայլում է մի անջուր և հյուծված տափաստանով և ինքնագոհ ասում.

- Հիանալի է, համարյա կյանքի նշույլ չկա, լավ աշխատեցի...

Քիչ անց ճաքճքած հողի շերտերի մեջ նկատում է դեպի արեգակի լույսը ձգվող մի հրաշագեղ ծաղկի կոկոն:

Խավարի հրեշտակը կանգնում է ու զմայլված ասում.

Իրապես գեղեցիկ է..., նույնիսկ ինձանի՞ց էլ...

Ապա մռայլվում է և արագ անհետանում: Բեռնատար մեքենաներ են գալիս, խիճ ու ասֆալտ բերում, լցնում այդ վայրը, ծածկում նաև նրբագեղ ծաղկին, և ասֆալտապատ մի ճանապարհ գցում:

Սատանան հայտնվում է և ավելի ինքնագոհ ասում.

- Սա է նրանց վերջը, ովքեր սիրում են լույսը ու ձգտում դեպի լույսը:

Որոշ ժամանակ անց խավարի հրեշտակը կրկին գալիս է ու քայլում այդ վայրով և զարմանքից քարանում: Ասֆալտը ճեղքած նրբագեղ ծաղիկը վեր էր բարձրացել դեպի արեգակի ճառագայթները և ծաղկել:

Խոժոռված սատանան ոտքը բարձրացնում է, որպեսզի տրորի ծաղկին, բայց դանդաղ իջեցնում է և ասում.

- Իրոք հրաշք է այս ծաղիկը:

Այնուհետև նայում է ծաղկից քիչ հեռու կանգնած Միքայել հրեշտակապետին...

Եթե նուրբ ծաղիկը կարող է ճեղքել ամուր ասֆալտը և վեր բարձրանալ դեպի լույսը, ապա առավել ևս մենք կարող ենք հաղթահարել ամեն դժվարություն և մոտենալ Աստծուն:

ՊԱՀԱՆՋ

Մի մեծահոգի թագավոր իր ծառային ուղարկում է հեռավոր արևելքի հայտնի դերձակի մոտ՝ մետաքսյա թիկնոց բերելու համար և ասում ծառային, որ նրան լավ կվարձատրի այդ ծառայության համար:

Ծառան մեկնում է, վերցնում թիկնոցն ու ետ դառնում: Թիկնոցն այնքան գեղեցիկ ու շքեղ է լինում, որ գցում է իր ուսերին ու պարծենում: Մի հյուրատան մոտ մի մեծահարուստ մարդ ասում է.

- Վաճառիր այդ թիկնոցը, քեզ շատ մեծ գումար կտամ, որով կյանքը կվայելես: Իսկ այսպես ծառա ես ու ծառա էլ կմնաս, մանավանդ որ թիկնոցը թագավորին ես տալու ու դրա դիմաց չնչին վարձ ես ստանալու:

Ծառան վաճառում է թիկնոցը, գումարը վերցնում, վատնում քաղաքում և զվարճանքի վայրերում:

Երբ ներկայանում է թագավորին, ասում է, թե ավազակներն իր վրա հարձակվեցին, թալանեցին ու թիկնոցն էլ տարան: Իսկ այժմ վարձ ու վարձատրություն է պահանջում իր մատուցած ծառայության համար:

Թագավորը պատասխանում է.

- Այդ թիկնոցը խորհրդանշական իմաստ ուներ: Ով իր ուսերին կրեր, նա լինելու էր իմ թագավորության ժառանգորդը: Ես որոշել էի այն քեզ նվիրել: Ահա այն վարձատրությունը, որով պիտի պարգևատրեի քեզ: Առանց այդ թիկոնցի չեմ կարող իրագործել իմ խոստումը:

Ծառան ապշահար շրջվում է ու նայում դեպի հեռվում նշմարվող հյուրատունը:

Սուրբ Գիրքն ասում է, որ կոչված եք սուրբ լինելու և սրբությամբ ապրելու: Մենք չենք ապրում Աստծո նախանշած կյանքով, սակայն Աստծուց պահանջում ենք:

ԴՈՒՌԸ

Մի բանաստեղծ անտառի միջով վազեվազ և շնչակտուր հասնում է գեղեցիկ դղյակի և ոգևորված փորձում բացել դղյակի դուռը: Ջանադրաբար չարչարվում է, բայց չի ստացվում և հոգնած շրջվում է ու հուսահատ նստում դռան մոտ ու ասում.

- Տե՛ր Աստված, վերջապես եկա, հասա այստեղ, որ երկար ժամանակ սպասում էի քեզանից ստանալու խոստացված պարգևները: Եվ մտածում էի, թե արդեն իմ առջև բաց են բոլոր դռներն ու ճանապարհները:

Հիսուս հայտնվում է և ձեռքը մեկնելով դեպի դուռը, բացում ու պատասխանում.

- Քո առջև միշտ էլ բաց են բոլոր դռներն ու ճանապարհները, եթե հիմա նույնիսկ հենված լինեիր դռանը և ոչ թե դռան մոտ, այն պարզապես կբացվեր: Ինչքան քեզ ասում եմ, լավ նայիր հոգուդ մեջ, թե արդյոք դռները դեպի քեզ ես ձգում ու քաշում, թե դեպի հակառակ ուղղությամբ, ապարդյուն..., միմիայն դեպի քո անձը՝ «ես»-ն ես ձգում դռների բռնակները: Պարզապես մյուս կողմ հրի՛ր բռնակը, և դուռը կբացվի...

Աստծո պարգևները տրվում են նրանց, ովքեր ոչ թե ծառայեցնում են իրենց, այլև մյուսների համար:

ԻՆՔՆԱՄՆԴՐԱԴԱՐՁ

Մի կրիա ուրախությամբ նայում է հայելու մեջ: Մի ընձուղտ է մոտենում ու հարցնում.

- Ինչո՞ւ ես ուրախացել:

Կրիան պատասխանում է.

- Միշտ ուզում էի հասկանալ, թե ինչո՞ւ եմ ծնվել այս աշխարհում և թե ո՞վ եմ ես: Այստեղով անցնելիս նկատեցի այս հայելին ու վերջապես կարողացա ինքս ինձ տեսնել ու հասկանալ, թե ինչու եմ աշխարհ եկել: Երբ ինձ մոտենում էին, իրապես չէի ընկալում, թե ով եմ և միշտ թաքնվում էի իմ պատյանում, կաշկանդվում, ամաչում...

Ընձուղտն ասում է.

- Այս արահետով շատ անգամ եմ գնացել-եկել, բայց երբեք այդ հայելին չեմ նկատել: Միշտ տեսել եմ ճախրող թռչուններին, կապույտ ամպերը, ծառերի երկնառաք ճյուղերն ու բազմաձև տերևները ու միշտ հարց եմ տվել ինքս ինձ՝ իսկ ո՞վ եմ ես: Հավանաբար ես էլ ե՞մ կրիա:

Կրիան նայում է դեպի վեր ու պատասխանում.

- Չէ, դու ինձ նման չես: Որպեսզի քեզ տեսնես, պետք է խոնարհվես, խոնարհիր գլուխդ և ինքդ քեզ կտեսնես:

Եթե ուզում ես ինքդ քեզ ճանաչել ու հասկանալ, թե Արարիչն ինչու է այս աշխարհ ուղարկել, պարզապես անհրաժեշտ է խոնարհել «ես»-ը, անձդ և այդ դեպքում այլևս չես թաքնվի կամ երկնքում սավառնի...

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սրբիչը գլխին փաթաթած մի գործարար և բարեպաշտ մարդ ասում է.

- Աստվա՛ծ իմ, ինչքան աղոթում եմ, դեղ եմ խմում, գլխացավս չի անցնում: Արդեն չգիտեմ, թե ինչպես անել...

Նկատում է, որ իրեն ծանոթ մի երգիչ մի սայլ է քարշ տալիս, իսկ սայլը ծանրաբեռնված է մեծ ու փոքր ապրանքներով, իրերով: Եվ սայլի վրա ինչ-որ արարածներ են թռչկոտում ու նրանցից մեկն էլ, իբրև սայլապան, մտրակով հարվածում է երգչին ու դժգոհում.

- Արա՛գ, արա՛գ շարժվիր, մի ձիու չափ էլ չկաս, քանի անգամ քեզ ասեմ, որ ուղղություն վերցրու դեպի բարձունքը:

Գործարարը մոտենում է երգչին ու հարցնում, թե ինչ է կատարվում:

Բեռի ծանրությունից կքված ու լարված երգիչը դժվարությամբ պատասխանում է.

- Գնում եմ դեպի իրականացում, կյանքի իմաստավորում: Սայլի մեջ լցրել եմ իմ նպատակներն ու ծրագրերը, խնդիրներն ու մտահոգությունները: Իսկ այս արարածներն իմ խորհրդատուներն են, որ ինձ հանգիստ չեն տալիս: Իսկ դու ինչո՞ւ ես գլխիդ սրբիչ փաթաթել.

Գործարարը հանում է սրբիչը և պատասխանում.

- Ես էլ քեզ պես մի սայլ էի քարշ տալիս, բայց հենց հիմա հասկացա, որ այլևս գլխացավ չունեմ, քանի որ ծրագրերի ու նպատակների ղեկավարն Աստված է, իսկ ինքս՝ աշխատող: Մեզ մնում է գործել և աշխատել, իսկ իրականացումը թողնել Աստծուն: Մի կողմ թող այդ սայլը և խաղաղվիր ու ճանապարհդ առանց այդ սայլի շարունակիր:

ՄՇՈՒՀԸ

Մի ուսանող՝ հուսահատ և վհատված, նստում է սաղարթախիտ անտառի ճամփեզրի քարին: Նույն արահետով մի քահանա է անցնում ու հարցնում, թե ինչո՞ւ ես տխուր և մտախոհ նստել այս մեկուսի վայրում:

Ուսանողը պատասխանում է.

- Ամեն ինչ շատ անորոշ է, առջևս ոչինչ չեմ տեսնում. մառախուղը, մեգը պատել է չորս կողմը և չի երևում, թե ճանապարհի սկիզբը և վերջը, և թե ի վերջո ուր է այն տանում..., թեև Աստծուն վստահում եմ և զգում, որ Իր կամքն է, որ այս արահետով գնամ:

Քահանան մխիթարում է՝ ասելով.

- Եթե իրոք վստահում ես Աստծուն, մի՛ վհատվիր և մի՛ երկմտիր, այլ համբերատար առաջ քայլիր, ինչքան առաջանաս, ժամանակի մեջ մեգը կպարզվի ու ճանապարհը կամաց-կամաց առջևդ կբացվի: Նույնիսկ ինքդ կզարմանաս, երբ քայլես առաջ՝ տեսնելով, թե արահետի ուղին, ինչպես է դառնում տեսանելի ու հասկանալի: Իսկ եթե վարանես ու վհատվես, միշտ էլ կթվա, որ այս արահետի վերջն անհայտ է ու անորոշ, քանի որ հեռվից մեգը, մառախուղը ծածկել է այդ ուղին: Ուստի, երբեք հույսդ մի կորցրու. հույսն առաջնորդում է և բացահայտում այն, ինչը դու չես տեսնում, իսկ Աստված տեսնում է նույնիսկ մառախուղի մեջ ու քեզ առաջնորդում:

ԱՍՊԵՏԸ

Ասում են, թե մի մռայլադեմ ասպետ, ով վերադարձել էր խաչակրաց արշավանքից իր հայրենի գերմանական գյուղը, ծնկի է գալիս իրենց գյուղի լճակի մոտ, նայում պարզկա ու կապուտակ լճակի մեջ արտացոլվող իր դիմագծերին ու ասում.

- Ո՞վ է այս մռայլ մարդը, որ լճակի միջից նայում է ինձ: Տե՛ր Աստված, հոգիս խաղաղ չէ: Հասա իմ նպատակին, տեսա սուրբ քաղաքը, հաղթեցի թշնամուն և վերադարձա, սակայն կարծես ինքս ինձ չեմ գտնում ու չեմ հասկանում, թե ինչու եմ այսքան տկարանում:

Արագ շրջվում է և տեսնում, որ երկու ասպետ սրերով միմյանց դեմ մարտնչում են: Նրանցից մեկը սայթաքում և ընկնում է, գլխից դուրս է թռչում սաղավարտը, և մռայլադեմ ասպետը քար կտրած տեսնում է, որ ընկած մարդն ինքն է: Պատյանից հանում է սուրը և դեմ հանդիման կանգնում մյուս ասպետի առջև՝ պաշտպանելու ընկածին: Իր դիմաց կանգնած զորականը դանդաղ հանում է սաղավարտը, և մռայլադեմ ասպետը մատնվում է շփոթմունքի, քանի որ կրկին տեսնում է, որ ինքն է...

Նրան է մոտենում մի վանական ու ասում.

- Ինչո՞ւ ես սուրդ հանել այս ամայի դաշտում ու միայնակ մարտի սպասում: Չե՞ս տեսնում, որ հոգիդ ու մարմինդ միմյանց դեմ են մարտնչում, թշնամաբար ես նայում նրանց: Հաշտվիր և՛ հոգուդ, և՛ մարմնիդ հետ, շնորհակալ եղի՛ր նրանցից ու քո ջերմագին սերը հաղորդիր նրանց՝ ներողություն խնդրելով նրանց տառապանք ու ցավ պատճառելու համար: Դու չպետք է մարմնիդ ու հոգուդ դեմ պայքարես, այլ մեղքի դեմ:

Երբ մարդ կորցնում է ներքին խաղաղությունը, հիվանդանում է, իսկ աստվածային սերն անգին դեղ է, որ բժշկում է...

ԹԱՔՑՐԱԾ ԳԱՆՁԸ

Մի թագավոր, երբեմն, իբրև հյուր, այցելում է բարեպաշտ մարդկանց: Եվ այդպիսի մի օր, երբ արքան շրջում էր քաղաքում, պատվիրանները պահող մի օրենսգետ անհամբեր ժամանակ առ ժամանակ մտնում է իր տուն և դուրս գալիս: Երբ թագավորը մոտենում է, այդ պահին այս մարդն իր տանն է լինում, և թագավորին հյուրընկալում է նրա հարևանը, որը վաշխառու էր: Օրենսգետը, այդ ամենը տեսնելով, դուրս է գալիս ու դժգոհությամբ ասում.

- Թագավորն արդարացի չէ և մեղավորներին է այցելում ու նրանց հյուրը լինում:

Ապա կրկին ներս մտնում, չորս կողմը նայում, կիսամութ թաքստոցից մի սնդուկ հանում, բացում և զգուշությամբ մի փոքրիկ ադամանդյա զարդատուփ դուրս բերում: Մեծ հիացմունքով և ակնապիշ նայում զարդատուփին և արագ կրկին թաքցնում սնդուկի մեջ, քանի որ նկատում է իր հետևում կանգնած թագավորի զինվորին, որն ասում է.

- Ո՛վ օրենսգետ, թագավորը ցանկանում էր քեզ այցելել, բայց քեզ թվում է, թե դու առաքինի ու արդար ես, սակայն տեսնում եմ, որ քո սրտում ու հոգում եսասիրությունն ու ագահությունն են իշխում: Ուստի, նայիր սրտիդ ու հոգուդ մեջ, թե ինչպիսի՞ մեղքեր ես խնամքով թաքցրել, որոնք գանձեր ես համարում: Արդ, ինչո՞ւ ես բողոքում, երբ արքան քո տան մոտով է անցնում, իսկ դու ներսում ես գտնվում և ոչ թե նրան դիմավորելիս...

ԱՅԴ ՍՊԱՍՎԱԾ ՕՐԸ

Մի տաղանդավոր, բայց աղքատ դերասանուհի ժամանակ առ ժամանակ բազմաթիվ նամակներ էր ստանում հանդիսատեսից և առավելապես մի մարդուց: Դերասանուհին ուշադրություն չէր դարձնում այդ նամակներին, որովհետև ամեն անգամ երկրպագուներից ստանալով նամակներ տխրում էր ու երազում, թե երբ կգա այն օրը, երբ ինքը կկարողանա դառնալ իրենց քաղաքի մեծագույն թատրոնի դերասանուհիներից մեկը, բայց ավաղ... այնտեղ միայն անվանի ու ունևոր մարդիկ էին գտնվում:

Մի ցրտաշունչ օր, երբ փողոցով անցնելիս է լինում ու տարբեր իրեր վաճառում, որպեսզի իր ապրուստը նաև այդպես կարողանա վաստակել, նրան է մոտենում մի ալեհեր մարդ՝ քաղաքի անվանի մեծահարուստներից, ու մեծ գումար տալիս: Աղջիկը երախտագիտությամբ լցված շտապում է տուն: Քիչ անց իրեն մշտապես նամակն ուղարկած մարդուց հերթական գրությունն է ստանում: Բարձր տրամադրություն ունենալով՝ այս անգամ բացում է այն ու զարմանում, որովհետև այդ մարդը շնորհավորում էր դերասանուհուն գումար ստանալու համար: Այդ մասին դեռևս ոչ ոք չգիտեր, միայն ինքը և ալեհեր մեծահարուստը: Դերասանուհին արագ դարակից հանում է այդ մարդու ուղարկած նախկին բոլոր նամակները ու ամեն մեկի մեջ գրված տեսնում, որ իրեն արդեն մի քանի տարի է, ինչ հրավիրում են դառնալ այն մեծագույն թատրոնի դերասանուհին, որի մասին երկար ժամանակ երազում էր ու հասկանում է, որ այս նամակները ստանում էր այդ նույն ալեհեր մեծահարուստից, ով այդ թատրոնի տերն էր:

Հաճախ մեծ սպասումով նայում ենք դեպի հեռուն՝ տեսնելու համար կյանքի իրական երջանկությունը, սակայն կյանքի մեծագույն իմաստավորումը հաճախ տրվում է մեզ, բայց ուշադրություն չենք դարձնում, չենք նկատում Աստծո խոսքը, անմիջական ներկայությունը և հավիտենական երջանկությունը:

ՇԻՐԸ

Մի մեծ մեղու բզզոցով պտտվում է սեղանին դրված շատ քիչ քանակությամբ անուշաբույր հյութով լցված շշի շուրջ: Մեղուն մեծ հիացմունքով նայում է ապակյա շշի հատակին մնացած հյութին և երկար դեգերելով գտնում շշի բերանը, փորձում ներս մտնել, սակայն չի կարողանում ու տխրում է՝ ասելով.

- Արարիչը ինչո՞ւ չի օգնում. չէ՞ որ բարի գործ եմ ուզում կատարել, հյութ եմ ուզում խմել, դրա նեկտարն եմ կամենում հավաքել և մարդկանց համար մեղր պատրաստել:

Բայց Արարիչը լռում է: Այնուհետև մեծ ջանքերի գնով անցնում է շշի բերանի նեղ արահետով, հայտնվում հյութի մեջ, ինչպես դրախտային մի վայրում, վայելում այն, դրանից պաշար վերցնում: Ինքնագոհ ու երջանիկ ապակյա շշի ներսից նայում է աշխարհին և կրկին բզզոցով թռչում դեպի վեր, դեպի շշի բերանը, բայց ինչքան չարչարվում, տքնում, այս անգամ դուրս գալ չի կարողանում: Սարսափից չռած աչքերով ու կարոտալի հայացքով նայում է ապակյա շշից դեպի արևամուտի ճամփան բռնած բնությանը և աղերսում.

- Տե՛ր Արարիչ, փրկի՛ր ինձ այս բանտից ու մահից:

Արարիչը խոսում է և խրատում.

- Սա քեզ համար թող խրատ լինի, համբերիր մինչև առավոտ, որպեսզի հյութից փքված վիճակդ անցի և մեծ ճիգերի գնով դուրս գաս այս ապակյա բանտից:

Հաճախ Աստված լռում է, որովհետև խնդրում ենք մեզ համար բարի թվացյալ իրողություններ, որոնք մեզ փորձության մեջ են գցելու և ձգտում ենք մտնել այն իրողության մեջ, որտեղ ամենևին էլ պետք չէ լինել:

ՓՈԹՈՐԻԿ

Մի նավ ծովի հուժկու ալիքների վրա տարուբերվում է: Անսանձ քամին ու կլանող ալիքները նավը քշում-տանում են դեպի մոտակա ժայռոտ ցամաքը: Մի նավաստի տախտակամածի վրա տագնապահար այս ու այն կողմ է վազում, այնուհետև իրեն նետում ալեկոծ ծովի ալիքների մեջ և ավելի տագնապահար օգնություն հայցում: Երբ մյուս նավաստիները նրան փրկում են ու կրկին նավը բարձրացնում, նրանցից մեկը հարցնում է, թե ինչու իրեն նետեց ծովը: Ամբողջովին թրջված ու ցրտից սարսռած մարդը պատասխանում է.

- Երբ առաջին անգամ տեսա հանդարտ ծովը և արեգակի ճառագայթներից փայլփլող մեղմ ալիքները, հասկացա, որ իմ կոչումն էլ է ձեզ նման լինել ու ցանկացա նավաստի դառնալ և ամեն նավարկության վերադարձից հետո մարդկանց գովասանքին ու գնահատանքին արժանանալ: Սակայն երբ տեսա այս փոթորիկը և նավի ահռելի ընթացքը դեպի ժայռը, ինձ նետեցի ծովի մեջ, որպեսզի փրկվեմ:

Մյուս նավաստիներից մեկը պատասխանում է.

- Եղբա՛յր, մի՞թե չես վստահում մեր փորձառու նավապետին: Ամբողջությամբ վստահի՛ր նրան և ողջ-առողջ կհասնես քո նավարկության հանգրվանին:

Երբեմն մարդկանց թվում է, թե քրիստոնյա դառնալով իրենք Աստծուն մեծ ծառայություն են մատուցում և պիտի արժանան խաղաղ ու հանգիստ և հաջողություններով լեցուն կյանքի, որոնց միջոցով նույնիսկ հոգևոր առաքելություն պիտի իրագործեն այս աշխարհում: Սակայն մարդիկ մոռանում են, որ քրիստոնյայի կյանքը խաչի ճանապարհ է և հարկ եղած դեպքում պետք է խոնարհությամբ ու համբերությամբ տանել այդ խաչը ու հանուն Քրիստոսի նաև հարմարվել խաչի ծանրությանը՝ իրապես իրականացնելու հոգևոր առաքելություն այս աշխարհում: Իսկ Աստծուց տրված խաղաղությունը կամ խաղաղ կյանքը զորության ներկայություն է, բայց ոչ նեղության բացակայություն...

ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ

Զյունառատ օր էր: Ռուսական գյուղում մի վանական մտնում է խաղալիքների խանութ և ասում.

- Կրկին ես եմ, մի տիկնիկ տվեք: Այդ երեխան ինձ է սպասում, գնում եմ մանկատուն: Խոստացել եմ նրան, որ այսօր պիտի տիկնիկ նվիրեմ:

Խանութի աշխատողը զարմանում է.

- Բայց չէ՞ որ, արդեն երրորդ անգամ է, ինչ տիկնիկ եք տանում այդ աղջնակի համար:

Վանականը պատասխանում է.

- Առաջին անգամ ճանապարհին մի փայտահատ հանդիպեց և խնդրեց իր կացինը պահել, որպեսզի ինքը ծառի ճյուղերը տեղադրի իր սայլակի վրա: Խաղալիքը դրեցի մի քարի վրա ու օգնեցի այդ մարդուն, իսկ այդ պահին մի ագռավ ծառից ցած իջավ ու տիկնիկը տարավ: Երկրորդ անգամ ճանապարհին մի զառամյալ ծերունի հանդիպեց, ցույց տվեց Աստվածաշունչը և սկսեց Ավետարանից հարցեր տալ: Ես էլ գոհունակությամբ նրա մոտից վերցրեցի Սուրբ Գիրքը, խաղալիքը դրեցի ճյունածածկ ճերմակ գետնին և պատասխանեցի այդ մարդուն հետաքրքրող հարցերին: Երբ պտտվեցի տիկնիկի կողմը, միայն այն տեսա, թե ինչպես է ագռավն այն իր կտուցով պինդ-պինդ բռնած բարձրանում երկինք: Հիմա երրորդ անգամ եմ եկել և խնդրում եմ՝ ինձ օգնեք:

Խանութի աշխատողը մոտենում է լուսամուտին ու ապշահար ասում.

- Նայե՛ք պատուհանից դուրս. ինչքա՜ն ագռավներ են հավաքվել մոտակա ծառերի վրա և կարծես ձեզ են սպասում...

Ամեն իրադրության մեջ միշտ պետք է զգոն և արթուն լինել:

ՎԱՅՔ

Մի հրապարակախոս՝ ձեռքին ինչ-որ գիրք, աղոթելով վազում է լեռն ի վեր: Շնչակտուր հասնում է լեռան գագաթին, ուր մի հովիվ իր ոչխարներն է արածեցնում: Հարցնում է.

- Այստեղ Աստծուն չե՞ս տեսել:

Հովիվը զարմացած պատասխանում է.

- Մի հրեշտակ երկնքից իջավ ու ասաց, որ Աստված լեռան ստորոտում գտնվող դաշտում է: Իմ ոչխարներն արածեցնելուց հետո երեկոյան կիջնեմ այդ դաշտն Աստծուն տեսնելու:

Շնչակտուր եղած հրապարակախոսը դժգոհում է.

- Այդ հրեշտակն էլ ինձ ասաց, որ Աստված այս լեռան գագաթին է գտնվում և դաշտից վազելով եկա այստեղ:

Այնուհետև նեղսրտած ու զայրացած նայում է իր մոտ գտնվող հաստափոր գրքին, որի վրա մեծ-մեծ տառերով գրված է «Բողոքի գիրք», պատառոտում է գիրքը ու իջնում դեպի լեռան ստորոտը: Դաշտում մի մարդ խաղաղությամբ աղոթելիս է լինում: Հրապարակախոսը հարցնում է.

- Այս կողմերում Աստծուն չե՞ս տեսել:

Մարդը ձեռքով ցույց է տալիս շուրջբոլորն ու պատասխանում.

- Մի՞թե չես տեսնում, դու Աստծո ձեռքի ափի մեջ ես գտնվում, իսկ Նա քեզ է նայում...

Աղոթելիս պետք է խաղաղության մեջ լինել՝ զգալու Աստծո ներկայությունը, այլ ոչ թե աղոթելով վազքի ու լարվածության կամ անգործության մեջ լինել Աստծո ներկայությունը փնտրելու համար:

ՋՈՒԹԱԿԱՀԱՐԸ

Սկսնակ ջութակահարն անընդմեջ մի ստեղծագործություն է կատարում: Ինքնաբավ ու հեգնորեն ինքն իրեն ասում է.

- Տեսնենք, թե վաղը այդ ո՞վ է լինելու, որ մրցելու է ինձ հետ: Տե՛ր Աստված, իմ հույսը Դու ես, և ես վստահ եմ, որ ոչ ոք ինձանից լավ չի կարողանալու կատարել որևէ երաժշտական ստեղծագործություն:

Այնուհետև սկսում է կրկին միևնույն երաժշտությունը ջութակով նվագել: Նկատում է Աստծո հրեշտակին՝ քիչ հեռու կանգնած: Ջութակահարը գոհունակությամբ ասում է.

- Եթե ես իմ երգով կարողացա երկնքից հրեշտակ ցած իջեցնել, ապա ես այլևս մտածելու բան չունեմ:

Եվ ոգևորված ու ինքնամոռաց սկսում է նվագել, որպեսզի հրեշտակն ունկնդրի ու հիանա:

Հաջորդ օրը, նախքան բեմ բարձրանալը, մի անվանի ու աշխարհահռչակ ջութակահար է տեսնում և իր հիացմունքն ու ակնածանքն արտահայտում.

- Ինչ անակնկալ. միշտ երազել եմ Ձեզ տեսնել և Ձեր ստեղծագործությունները լսել: Իսկ Դուք այստեղ ի՞նչ եք անում:

Ականավոր ջութակահարը պատասխանում է.

- Հրավիրել են ինչ-որ մի ջութակահարի հետ մրցելու համար:

Սկսնակ ջութակահարը շփոթմունքի է մատնվում և մի կերպ թուքը կուլ տալիս: Քիչ հեռու հրեշտակին կրկին տեսնում է, ով ասում է.

- Երեկ եկա քեզ զգուշացնելու, որ խոհեմ ու իմաստուն լինես, թե երբ այս մրցույթին մասնակցես, առավել ևս այս հռչակավոր ջութակահարի ստեղծագործությունը չկատարես, սակայն դու ինձ լսել չկամեցար, այլ քո երգն էիր նվագում ու նվագում...

Երբեք պետք չէ ինքնահավան ու պարծենկոտ լինել...

ԼԱԲԻՐԻՆԹՈՍ

Կիթառահար երաժիշտը մի ամայի դաշտում մեն-մենակ նվագում է, հետո հայացքն ուղղում դեպի երկինքն ու երկիրը. ամեն ինչ անգույն է և գորշ... Իր երևակայությամբ պատկերացնում է այն վայրը, ուր ապրելը լիակատար իմաստավորված է համարում, որը լեցուն է երփներանգ գույների բազմազանությամբ և կյանքի մեղեդու ռիթմերի համաչափությամբ: Բայց հասնում է մի լաբիրինթոսի մոտ, որից այն կողմ տեսնում է իր պատկերացումների արքայությունը և ասում.

- Ի վերջո գտա երկնքի արքայության մուտքը, որտեղ կարելի է ապրել և հոգևոր խաղաղության երջանկությունը գտնել:

Մտնում է լաբիրինթոսի մեջ, պտտվում և գալիս, կանգնում նույն մուտքի առջև: Նորից լաբիրինթոսի արահետներով շարժվում, խճճվում ու հայտնվում է սկզբնավայրում և այդպես շարունակ մի քանի անգամ: Երևակայությունից վհատված վերադառնալով դեպի իրականություն՝ զգում է իր մոտ կանգնած Հիսուսին: Նա լռելյայն լսում էր կիթառահարի երաժշտությունը, այնուհետև ասում է.

- Ինչո՞ւ ես բազում անգամ հեռանում ու վհատված նույն կետին վերադառնում և կրկին լաբիրինթոսի ուղին ընտրում, չէ որ ես միշտ էլ քո կողքին եմ: Արդեն իսկ այնտեղ եմ, որտեղից շարժվում ես ինձ այլ վայրում փնտրելու համար...

Կիթառահարը նայում է շուրջը, նկատում, որ երկինքն ու երկիրն ամենևին էլ անգույն ու գորշ չեն, այլ լեցուն գույներով, լույսով ու կյանքն ապրելու լիակատար իմաստով, որ այն, ինչ փնտրում էր, իմաստավորված և արժևորված է Քրիստոսի ներկայությամբ:

ՀԱՇՎԱՊԱՀԸ

Մի մարդ արագ մտնում է իր երկհարկանի տունը, դուռն ամուր փականներով կողպում, շտապում հյուրասենյակ, հանում մի թավշյա տոպրակ, շուռ տալիս սեղանի վրա, ուր զնգզնգոցով ոսկե դրամներ են լցվում: Մարդն անփութորեն սկսում է դրանք հաշվել, ապա կենտրոնանալով կրկին հաշվում է, հետո նորից դանդաղ հաշվում և ասում.

- Հաշվում եմ, հաշվում եմ, պակաս է... Հնարավոր չէ, որ ես սխալվեմ, բայց Աստված ինչպե՞ս կարող է սխալվել, չէ՞ որ ես երեսունհինգ ոսկի եմ խնդրել, բայց ինձ երեսունչորսն է ուղարկել... Չէ՞ որ այդ հողը, որ պիտի գնեմ, երեսունհինգ ոսկեդրամ արժե, էլ ինչպե՞ս հող պիտի գնեմ, բարիք ստեղծեմ, մարդկանց էլ այդ բարիքից բաժին հանեմ:

Ինչ-որ մեկը թակում է տան դուռը: Մարդն ուշադրություն չի դարձնում և կրկին սկսում է հաշվել դրամները: Իսկ դուռն անընդհատ թակում են: Այդ ամենից զայրացած մարդը երկրորդ հարկի պատուհանից զգուշավորությամբ նայում է և ներքևում տեսնում դռան մոտ կանգնած մի ծերունու:

- Այդպես էլ գիտեի, որ Աստված հիմա էլ մի կարիքավոր մարդու է այստեղ բերել, որպեսզի Իր նվիրած դրամներով ողորմություն անեմ: Բավական չէ, որ մեկ ոսկեդրամ պակաս է ուղարկել, հիմա էլ մի ծերուկ է ուղարկել, որ նրան ողորմություն տամ,- ասում է մարդը:

Այնուհետև բացում է պատուհանն ու շարունակում.

- Չե՛մ տա, թեկուզ մեկ հատ էլ չե՛մ տա: Աստված անարդար է իմ հանդեպ:

Ծերունին զարմացած հայացքը հառում է դեպի վեր և պատասխանում.

- Ինձ ապրելու կարճ ժամանակ է մնացել և իմ փոքրիկ ժառանգությունը, որ մեկ ոսկեդրամ է, որոշեցի փոխանցել որևէ մարդու: Աստված էլ ինձ բերեց այստեղ, իսկ դու Նրան մեղադրում ես՝ ինչ-որ հաշվապահությամբ զբաղվելով...

ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Մի գյուղացի պարկով լի ցորենն իջեցնում է ուսից, դնում իր անջրդի, անմշակ, մոլախոտով ծածկված վարելահողի եզրին և ասում.

- Գնամ լեռան ստորոտում գտնվող մատուռը, մի զորավոր աղոթք ասեմ, Աստված ինձ մի գութան ու երկու լծկան եզ ուղարկի, այս իմ արտը վարեմ, ցորենը ցանեմ:

Երբ աղոթքը վերջացնում է, գոհացած իր հավատքից և աղոթքից դուրս է գալիս մատուռից, անակնկալի է գալիս, հեռվից գոռգոռալով, վազելով, շտապում է դեպի իր հողատարածքը, ուր մի հրեշտակ պարկի ցորենը ձեռքով լցնում, ցանում էր անմշակ, մոլախոտով պատված վարելահողի մեջ:

Գյուղացին բացականչում է.

- Տե՛ր Աստված, այս ի՞նչ ես անում. այս հրեշտակը ցորենս վատնեց ու անմշակ հողի վրա լցրեց:

Հրեշտակը դադարեցնում է իր գործը, պատասխանում.

-Խնդրանքներ ես ուղղում Աստծուն, սակայն չես նկատում, թե ինչպես այս դաշտն է խոտածածկ, հոգիդ էլ նույն դաշտի պես է պատված: Նախ սիրտդ ու հոգիդ ամբողջովին մաքրի՛ր, մշակի՛ր, այնուհետև սպասելիքներիդ հետամուտ եղիր, քանի որ ինքդ ես ասում, թե ցորենդ վատնեցի և մոլախոտերի մեջ ցանք կատարեցի, առավել ևս Աստված իր պարգևները չի վատնում անմշակ ու անջրդի հոգիներում...

ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ

Հնդկական մի քաղաքի արվարձաններից մեկում սրնգահարը մեղմ հնչյունների ելևէջներով մի խորը փոսի մոտ նվագում է: Ծանր ռոքի սիրահար մի քանի երիտասարդ զինված երաժշտական գործիքներով հավաքվում են նրա շուրջը: Նրանցից մեկը հարցնում է.

-Դու գիտե՞ս, թե ինչ է ռոք երաժշտությունը.

Սրնգահարը չի պատասխանում, այլ շարունակելով նվագել՝ զարմացած հայացքով նայում է նրանց:

Երիտասարդն այս անգամ հեգնանքով ասում է.

- Ահա ևս մի մարդ, որ հնամենի երաժիշտ է: Մենք հիմա քեզ կներկայացնենք մոդեռն, կյանք պարգևող երգերը և թե ինչ է ծանր ռոքը, ու դու կհասկանաս, որ ժամանակից, կյանքից ինչքան ետ ես ընկել:

Ռոքի սիրահարները հպարտորեն սկսում են բարձրաձայն նվագել և երգել: Այդ պահին փոսի միջից ֆշշոց է լսվում, և երկու հսկա կոբրա են դուրս գալիս ու առաջանում դեպի այդ երիտասարդները, որոնք սարսափից քարանում, լռում են:

Սրնգահարն ասում է.

- Ինչո՞ւ դադարեցրիք ձեր մոդեռն երգերը, միգուցե այս կոբրաները դրանք գնահատեն, հանդարտվեն ու ձեզ իսկապես կյանք պարգևեն...

Սրնգահարը շարունակում է նվագել, և օձերը ետ են քաշվում:

Կան մարդիկ, որոնք կարծում են, թե աղավաղելով աստվածային ներդաշնակությունը, ժամանակակից նորարարություն են հայտնաբերում ու կյանքի հարատևման իմաստ ստեղծում:

ԽԱՂԱՄՈԼԸ

Մի խաղամոլ ամեն առավոտ նստում է իր ավանակին և գնում եկեղեցի, աղոթում.

- Տե՛ր Աստված, երեկ կրկին մեղք գործեցի, ների՛ր ինձ: Եթե անձամբ չես օգնում, ուղարկիր զորավոր մեկին, որպեսզի ինձ մի ուղի ցույց տա՝ այլևս խաղատուն չգնամ և իմ ժամանակն ու դրամն այնտեղ չվատնեմ:

Եվ ամեն անգամ եկեղեցուց դուրս գալիս անցնում է խաղատան մոտով, հետաքրքրասիրությունից դրդված նայում այդ կողմը, ներս մտնում և ամբողջ օրն այդտեղ անցկացնում:

Մի առավոտ էլ արթնանում է և որոշում կայացնում այլևս եկեղեցի չգնալ. մտածում է, որ ամենազոր Աստված այդպես էլ որևէ մեկին չուղարկեց իրեն առաջնորդելու համար և շտապում է դեպի ժամանցի վայրը: Ավանակով գալիս-հասնում է մի վարարած գետի մոտ և ցանկանում անցնել խարխլված կամրջի վրայով: Սակայն կենդանին, ինչպես արձանը, անշարժանում է և ոչ առաջ գնում և ոչ էլ ետ: Զայրացած խաղամոլն իջնում է ավանակից և սանձից քաշում, որպեսզի կենդանին առաջ շարժվի, բայց ապարդյուն:

- Համառ ու անհասկացող կենդանի արարած ես: Քո պատճառով ուշանում եմ կարևոր ու հետաքրքիր խաղից,- դժգոհում է խաղամոլը:

Այնուհետև ավանակին թողնում է և փորձում անցնել կամրջի վրայով, սակայն այն փլուզվում է, և մարդը հայտնվում է վարարած գետի ալիքների մեջ: Մեծ դժվարությամբ և ուժասպառ եղած դուրս է գալիս ափ, ուր եկել էր նաև իր ավանակը: Նստում կենդանու վրա, իսկ ավանակը լռելյայն և սովորության համաձայն իր քայլերն ուղղում է դեպի եկեղեցի:

Խաղամոլն ասում է.

- Վերջապես հասկացա, թե Աստված ում է ինձ նման համառ մարդու համար առաջնորդ ուղարկել...

ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐ ՈՒՂԻՆԵՐ

Մի անհավատ մասնագետ դուրս է գալիս շինարարական կազմակերպության գրասենյակից: Ճանապարհին հանդիպելով մի քահանայի, զարմացած ասում է.

- Իմ ներկայացրած այդքան բազմաթիվ գծագրություններից պատվիրատու տնօրենն ընտրեց մի մարդու առաջարկ, որի շենքի գծագիրն ամենավատն ու վտանգավորն է կառուցման համար: Եվ իմ ամբողջ աշխատանքն ու ջանքերն անվարձահատույց մնացին: Եթե Աստված կա, ինչո՞ւ այդ տնօրենը Աստծո կամքը չի կատարում, մանավանդ իրեն քրիստոնյա է անվանում, արդյոք ո՞ւր մնացին արդարությունն ու ողջամտությունը:

Քահանան առաջ է մեկնում Ավետարանն ու ասում.

- Վերցրո՛ւ, կարդա՛, ահա այստեղ է պատասխանը:

Մասնագետը քմծիծաղ է տալիս.

- Այս գրքի գրվածքներին չեմ հավատում ու նախընտրում: Այդ դեպքում ինչպե՞ս գտնել պատասխանը:

Քահանան ասում է.

- Դու հիմա ստացար քո հարցի պատասխանը: Ինչպես դու չես հավատում Աստծո կողմից առաջարկվող կյանքի գծագիրը ցույց տվող Ավետարանին ու ընտրում ես սրտիդ կամքը, այլ ոչ թե Աստծո կամքը, այնպես էլ այդ տնօրենն իր սրտի ցանկության գծագիրն է կամենում ու դրան հավատում, որը, թերևս, ամենավատն ու վտանգավորն է շենքի կառուցման համար, սակայն այդ մարդու համար տվյալ պահին հենց իր սրտի ցանկությունն է կարևոր, այլ ոչ թե ողջամտությունն ու արդարությունը...

ՊԱՏՄՈՒՃԱՆԸ

Մի բարեպաշտ արհեստավոր աղոթում է, որպեսզի Երկնավոր Հայրն օգնի հանապազօրյա հացը վաստակելու: Աստված լսում է նրա աղոթքը: Եվ մի շինականի միջոցով գեղեցիկ հախճապակյա ափսեներ է որպես նվեր ուղարկում: Բարեպաշտ մարդն ուրախանում է, այդ ափսեները շուկայում վաճառում և փոքրիկ գումար վաստակում, ետ դառնում տուն՝ գոհություն հայտնելով Աստծուն և որոշելով այդ գումարից մի փոքր էլ հատկացնել իրենց գյուղի եկեղեցու համար: Ճանապարհին ավազակներ են հայտնվում, հափշտակում այս մարդու գումարը և մի պատառոտված, փոշոտ պատմուճան թողնելով հեռանում: Արհեստավորը շատ է տխրում և ասում.

- Տե՛ր Աստված, մի փոքրիկ գումար էի վաստակել, սակայն այս փորձանքն եղավ: Այժմ դատարկաձեռն եմ վերադառնում ու հոգևոր նպատակների համար էլ ոչինչ չեմ կարող անել:

Իբրև մխիթարություն վերցնում է պատառոտված պատմուճանը, գցում ուսին, մտքերով տարված շարունակում ճանապարհը: Թագավորական գնդի զինյալ հեծյալներ են մոտենում և շրջապատում՝ բարձրաձայն ասելով.

- Ահա գտանք նրան:

Արհեստավորը սրտատրոփ մտածելով, որ այս անգամ էլ մի նոր փորձանք է իրեն սպասում, դողդոջուն ձայնով հարցնում է, թե ո՞ւմ գտաք:

Հեծյալներից մեկն իջնում է ձիուց և պատասխանում.

- Մեր թագավորը ժառանգ չուներ և իր կտակի համաձայն՝ ավազակների կողմից գողացված այն պատմուճանն ով գտնի և կրի իր ուսերին, որն այժմ դու ես կրում, պետք է ժառանգի նրա կարողությունը և թագավորությունը: Այժմ դու ես մեր արքան:

Աստծո առատաձեռնությունն ու կամեցողությունն անսահման են մարդու հանդեպ...

ՀԵԾԱՆԻՎԸ

Վաղ առավոտյան՝ մթնշաղին, մի երիտասարդ իր հեծանիվն է կարգի բերում: Հիսուս մոտենում է նրան ու հարցնում.

- Այդ ի՞նչ ես անում.

Երիտասարդն առանց ուշադրություն դարձնելու պատասխանում է.

- Երեկ հանդիպեցի մի մարզիկի, ով ասաց, թե ինքը «ես»-ի վարպետ է, «ես»-ի մասնագետ, բարեհաջող կերպով մարդկանց «ես»-ն է մարզում ու ինձ մի լավ խորհուրդ տվեց, որ վաղ առավոտյան հեծանվով արագ գնամ-հասնեմ ուխտատեղի, ուր Սբ. Զատկի կապակցությամբ մեծ միջոցառում է լինելու: Ինչպե՞ս գլխի չէի ընկել, բոլորից շուտ կհասնեմ. այնքան շատ բան կա անելու միջոցառման համար: Քրիստոնեական ծառայությունն ինձ համար շատ կարևոր է, ինչքան շատ բան կարողանամ անել, այնքան լավ, ինչքան շատ հոգևոր փորձառություն ձեռք բերեմ, այնքան լավ: Ես չեմ կարող հենց այնպես ապրել, ես պետք է հնարավորինս արագ ու շատ գործեմ: Իսկ այժմ ժամանակ չկա, պետք է գնամ:

Երիտասարդն արագ նստում է իր հեծանիվը և սլանում դեպի ուխտատեղի: Քանի որ դեռ ամբողջովին չէր լուսացել և լավ չէր երևում ճանապարհը, ընկնում է մի մեծ փոսի մեջ: Փոքր-ինչ անց ցավից տնքալով կանգնում է ու նայում վերև, արդեն ամբողջովին լուսաբաց էր և նկատում է մարզիկին, որ փոսի եզրից իրեն է նայում:

- Շատ եմ ցավում, բայց դու մի մեծ փոսի մեջ ես ընկել ու ինքնուրույն չես կարող դուրս գալ այս փոսից, ինչ արած, այստեղ էլ կմնաս և ո՛չ ուխտատեղի կհասնես, ո՛չ էլ այստեղից այլևս դուրս կգաս, իսկ ես չեմ կարող օգնել, պետք է շտապեմ, դեռ շատ մարդկանց խորհուրդներ պետք է տամ,- ասում է մարզիկն ու անհետանում:

Երիտասարդը շատ է տխրում, անդադար փորձեր կատա-

ռում փոսից դուրս գալու համար, սակայն ապարդյուն, քանի որ այն բավականին խորն է լինում:

Այդ պահին կրկին նայում է դեպի վեր ու Հիսուսին տեսնում: Հիսուս հարցնում է՝ մի պարան երկարելով դեպի երիտասարդը.

- Այդ ի՞նչ ես անում.

- Տե՛ր, այդ Դու էիր վաղ առավոտյան ինձ հարցնում, թե ինչ եմ անում: Ների՛ր ինձ. չճանաչեցի Քեզ... շատ էի զբաղված...

Երբեմն քրիստոնյաները չափից ավելի տարվում են հոգևոր փորձառություն ձեռք բերելու, քրիստոնեական ծառայություն իրագործելու համար՝ մոռանալով, որ Հիսուս ասում է, թե եղեք կատարյալ, ինչպես Ձեր Երկնավոր Հայրն է կատարյալ և մարդուց կատարյալ գործեր ու ծառայություն չի պահանջում, այլ կամենում է, որ մարդ իր հոգևոր էությունը կատարյալ դարձնի: Իսկ սատանան աշխատում է մարդուն գցել մեղքի մեջ, մանավանդ քրիստոնեական մեծ տոների հիշատակության ժամանակ, որպեսզի մարդուն, մանավանդ նրան, ով ձգտում է կատարյալ գործեր անել, ավելի դատապարտի ու անարժան համարի ու հուսալքության մատնի: Քրիստոսի համար ավելի կարևոր ենք հենց ինքներս՝ մենք, քան մեր ծրագրավորված գործերն ու նպատակները: Ի՞նչ արժեք ունի, եթե ամբողջ աշխարհը շահենք, բայց մեր անձը կորցնենք...

ԱՍՏՎԱԾՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ

Ասում են՝ եգիպտացի երկու մարդ են լինում, մեկը դառնում է ճգնավոր, մյուսը՝ վարդապետ: Ճգնավորը պարզապես հավատում է Հիսուսին իբրև Փրկիչ ու Տեր՝ չիմանալով դրանից ավելին: Սակայն նրա հավատքն այնքան մեծ է լինում ու վստահությունն այնքան ամուր, որ Աստված նրան շնորհ է տալիս: Երբ ճգնավորն աղոթում է և ձեռք է տալիս որևէ իրի, այդ իրը սկսում է բողբոջել, ծաղկել:

Վարդապետը ստանում է բազմակողմանի աստվածաբանական կրթություն և շատ է զարմանում, երբ լսում է, որ մի սովորական ճգնավոր, որը նույնիսկ պատկերացում չունի Սուրբ Երրորդության վարդապետության վերաբերյալ, Աստծուց շնորհ է ստացել, իսկ ինքը՝ ոչ... Որոշում է գնալ ճգնավորի մոտ և պարզել, թե այդ ինչպես է, որ այդ մարդն ունի այդպիսի շնորհ: Հագնում է իր վարդապետական գեղեցիկ զգեստները, վերցնում իր գավազանն ու գալիս ճգնավորի մոտ: Ճգնավորը տեսնում է վարդապետին, ժպտում, մոտենում, խոնարհվում և համբուրում հոգևորականի աջ ձեռքը:

Վարդապետն ասում է.

- Դու, որ ինքդ գիտես, որ վարդապետն այսքան կարևոր պաշտոն է քրիստոնյա աշխարհում՝ իշխանություն ստացած առաքյալներից, ապա, սիրելի՛ ճգնավոր, ինչպե՞ս է, որ դու չունես նույնիսկ սովորական դպիրի ձեռնադրություն, սակայն ունես Աստծուց այդքան մեծ շնորհ, որ ինչին ձեռք ես տալիս ու կամենում, այն ծաղկում է...

Ճգնավորը նորից ժպտում է ու պատասխանում.

- Ես ոչինչ չեմ խնդրել Քրիստոսից, այլ հավատում եմ նրան և հավատում, որ Քրիստոս բնակվում է իմ մեջ, և ես՝ Քրիստոսի մեջ:

Վարդապետը մտածում է և ասում.

- Իսկ դու գիտե՞ս, որ Քրիստոս կատարյալ Աստված և կա-

տարյալ մարդ է, և Քրիստոսի մարդեղությունը ինչպես է սահմանվում, ու Աստված Սուրբ Երրորդություն է:

Ճգնավորն առանց շփոթվելու պատասխանում է.

-Ո՛չ, չգիտեմ, ես պարզապես լսեցի իմ հոգում, թե Քրիստոս ինչպես է ինձ կանչում և թողեցի ամեն ինչ ու հետևեցի նրան...

Վարդապետի դեմքը խոժոռվում է, պատասխանում է.

- Արդ, եթե դու նույնիսկ այդքան քիչ գիտես Աստծո մասին ու պատկերացում չունես վարդապետությունից, ինչո՞ւ է Աստված քեզ այդպիսի շնորհ տվել: Ահա իմ վարդապետական գավազանը, տե՛ս, շոշափի՛ր, այն արտահայտում է աստվածային իմաստությունը և իշխանությունը, ինչպես Մովսեսի գավազանը, որով առաջնորդվում էր մի ամբողջ ժողովուրդ:

Ճգնավորն աջ ձեռքով բռնում է գավազանը, որը սկսում է ծաղկել և նրա վրա բողբոջներ են դուրս գալիս...

Վարդապետը քար է կտրում, գլուխը խոնարհում, ու հասկանում, թե ինքը ինչքան հպարտ է, լռելյայն վերցնում իր ծաղկած գավազանը, համբուրում ճգնավորի աջ ձեռքը և հեռանում:

Հեռվում կանգնած էր ճգնավորը՝ պարզ ու միամիտ ժպիտը դեմքին, շփոթված, որ վարդապետը համբուրեց իր ձեռքը և հեռացավ, և մեծ սիրով ու լույսով լցված գոհություն էր հայտնում Աստծուն և ասում.

- Տե՛ր Հիսուս Փրկիչ, ինձ ավելի պետք չէ իմանալ ու գտնել, այլ միայն Քեզ հետևելն ու հավատալը, դրանից ավելի մեծ բան չկա ինձ համար:

ԹԻԹԵՌԸ

Խավար էր, գիշեր: Մի կին՝ մոմը ձեռքին, մտավ գետնափոր մառանը: Մոմը դրեց մառանում գտնվող սեղանին ու սկսեց փնտրել ինչ-որ բան:

Ծառերի տերևների տակ թաքնված մի թիթեռ մառանի փոքրիկ բաց պատուհանից տեսավ լույսը ու շտապեց այնտեղ: Մոմի լույսի շուրջ սկսեց պտույտներ գործել, պարել ու ոգևորվել: Ցանկացավ համբուրել մոմի լույսը, ավելի ջերմանալ լույսից այնքան, ինչքան կարող է, վայելել, բայց վառվեց կրակից, ցած ընկավ...

Խավարում դեգերող մի ուրիշ թիթեռ նկատեց մառանի լույսը ու շտապեց ազատվել գիշերվա մթից: Մոտեցավ վառվող մոմին, բայց շատ չմոտեցավ, սակայն անմոռաց պար բռնեց մոմի կրակի լեզվի հետ մեկտեղ:

Մեկ այլ թիթեռ ևս նկատեց լույսը մառանում, մոտեցավ փոքրիկ պատուհանին, բայց ներս չմտավ, պտտվեց խավարում ու հիշեց բնության խրատը, որ պետք է վայելել ցերեկվա լույսը: Սակայն չդիմացավ մոմի խաղացող լույսի հմայիչ ալիքներից ու շտապեց դեպի մառանի փոքրիկ պատուհանը: Բայց դիպավ պատուհանի ապակուն, ետ նահանջեց, քանի որ կինն արդեն փակել էր պատուհանը:

Այնուհետև կինը հանգցրեց մոմը, դուրս եկավ մառանից՝ դուռը փակելով ու մառանում թողնելով խավարի մեջ խարխափող ու դեգերող թիթեռին...

Ցերեկը բացվեց, մի թիթեռ տեսավ ցերեկվա լույսը, մյուսը՝ մառանի խավարը...

Գրավիչ է մեղքը ու գայթակղիչ, բայց մահաբեր ու կործանիչ, ինչպես առաջին թիթեռը հրապուրվեց մոմի վառվող լույսով:

Հմայիչ է աշխարհը՝ զվարճանքներով ու վայելքներով

կլանող, սակայն կարճ ու անցողիկ, ինչպես երկրորդ թիթեռը մնաց մառանում բանտարկված:

Գրավիչ է մեղքը ու աշխարհը՝ հմայիչ, բայց Աստծուն ապավինողն ու համբերողը հավիտենապես կապրի, եթե նույնիսկ երբեմն էլ սխալվի. Աստված նրան կխրատի ու կպահպանի, ինչպես երրորդ թիթեռը շտապեց դեպի մառանը, բայց դեմ առավ փակ պատուհանին, որը փակեց նրա ճանապարհը դեպի խավար:

ԱԼՔԻՄԻԿՈՍԸ

Մի չին ալքիմիկոս երկար տարիներ ջանում է գտնել անմահությունը: Եվ այսպես բազում օրեր անց մի կիսախավար ձեղնահարկում տարբեր նյութեր բաղադրելով փորձեր է կատարում: Փոքր-ինչ անց ուրախությամբ գոչում է.

- Գտա՜, գտա՜, անմահության բաղադրությունը գտա:

Նրա մոտ են շտապում ջահերով զինված այլ ալքիմիկոսներ: Գյուտարարը ոգևորությամբ մի կավե ամանով լցված բաղադրությունը ցույց է տալիս մյուսներին, որոնք մեծ հետաքրքրությամբ իրենց ջահերը մոտեցնում են ընդհուպ կավե ամանին, որպեսզի ավելի լավ տեսնեն: Լսվում է մի պայթյուն, ձեղնահարկը լցվում է թանձր ծխով և չորս կողմը սուրացող կավե ամանի կտորներով... քանի որ ալքիմիկոսն անմահության փոխարեն հայտնաբերել էր վառոդը...

Մարդիկ ինչքան փորձեն գիտությամբ, փիլիսոփայությամբ և այլ ճանապարհների միջոցով շրջանցել Աստծուն և անմահությունը փնտրել, զուր է, որովհետև այդ փնտրտուքների մեջ շատ ավելի արագ մահվան մի նոր ուղի են գտնում, քան անմահություն:

Պետք չէ անտեսել հավերժություն պարգևող Արարչին՝ անմահություն փնտրելով անմահությունից դուրս:

ԻՆՉՈՒ ԱՍՏՎԱԾ ՉԻ ՕԳՆՈՒՄ

Մի մարդ առավոտյան շտապում է իր աշխատավայրը: Գիշերը հորդառատ անձրև էր եկել և ճանապարհը քայլելով անցնելիս տեսնում է ջրափոս: Նայում է շուրջբոլորը, նկատում, որ կարող է շրջանցել՝ անցնելով բլրի վրայով: Սակայն որոշում է ցատկել ջրափոսի վրայով, բայց ընկնում է ջրի մեջ: Դժգոհում է, թե այս անձրևն ինչու եկավ, թե այս եղանակները շատ վատն են:

Հաջորդ օրը կրկին շտապում է իր աշխատանքին, բայց նախորդ օրվա պես գիշերն անձրև էր եկել և ջրափոսն ավելի մեծացել: Այդ պահին մի անծանոթ մարդ է գալիս, կանգնում իր կողքին, նայում պղտոր ջրով լի այդ փոսին, ապա բլրի վրայով շրջանցում ճանապարհը:

Այս մարդը որոշում է կրկին ցատկել ու արագ ճանապարհն անցնել: Նայում է երկնքին, ինքն իրեն ասում, թե Աստված մեծ է, կօգնի, թող Աստծո կամքով լինի:

Ուժ է հավաքում ու մեծ հույսով մի մեծ ցատկ կատարում, բայց այդ նույն մեծ ուժով ցեխաջրի մեջ ընկնում... Ոտքի է կանգնում, Աստծուց դժգոհում, թե ինչու է իրեն ստեղծել, անձրևը ու չարաբաստիկ այս ջրափոսը:

Հաջորդ օրը քայլելով նորից հասնում է ճանապարհի այդ հատվածին, բայց քանի որ գիշերը անձրև չէր եկել, ջրափոսն էլ բավականին փոքրացել էր: Այդ պահին մեկ ուրիշ մարդ է գալիս, բլրի վրայով շրջանցում այդ վայրը:

Այս մարդը մտածում է, որ այս անգամ հեշտ է ցատկելը, և ճամփան երկարացնելու կարիք էլ չկա:

Ետ-ետ է գնում, ուժ է հավաքում ու ջրափոսի վրայով հաջողությամբ ցատկում, սակայն հայտնվում է ցեխի ու տիղմի մեջ, որովհետև դեռ ամբողջությամբ այդ ճանապարհի հատվածը չէր չորացել: Բողոքում է Աստծուց, թե իրեն չի օգնում:

Այդ պահին երկնքից Աստված ասում է նրան.

- Ո՛վ մարդ, քանի՞ անգամ քո կողքով պիտի անցնեմ ու քեզ ուղի ցույց տամ, որ բլրի վրայով շրջանցես:

Հետևությունները թողնում եմ ձեզ... մարդու անտեղի համառության, ցանկության, շտապողականության, Աստծուն փորձելը, ծուլության և այլն:

Կյանքում ամեն մեկս էլ տարբեր պարագաներում հաճախ նմանվում ենք այս մարդուն...

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎ ՓՈՒՇԸ

Անապատում մի փուշ աճեց, խրոխտ կանգնեց ու ասաց.

- Ինչքան անարդար է կյանքը, ինչքան բնությունն իմ հանդեպ անարդար լինի, ինչքան հողն ու փոշին ինձ վրա լցնի, ջուրը ցամաքի, մեկ է, մինչև երկինք եմ բարձրանալու, կյանքի անարդարությունն ազդարարելու: Ինձ ո՛չ Աստված է հարկավոր, ո՛չ էլ հրեշտակ, որ ինձ պաշտպանի: Ով խոհեմ է, թող իմ սուր-սուր փշերից իրեն հեռու պահի:

Այդ պահին մի ահռելի ստվեր ընկավ փշի վրա: Փուշը վեր նայեց, տեսավ դեպի իրեն նայող երկու մեծ չռած աչքեր և հրձվանքից ավելի ծամածռված ուղտի շրթունքներ՝ անապատային կենդանու երջանիկ մի պատկեր:

Մի քանի վայրկյան անց ուղտը գոհունակությամբ ծամում էր փուշը և փշե սուր-սուր արդարությունը...

Ահա այսպես էլ մարդիկ, որոնք փորձում են անտեսել Աստծուն, պայքարել չարի, անարդարության դեմ, առանց Աստծո այս փուշի նման անզոր են հաղթել խավարի իշխանին ու նրա իշխանությանը:

ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅՈՒՆ

Կեսօրին անապատում մոլորված մի եգիպտացի՝ հոգնած ու ծարավ, հասնում է մի մեծ վանական համալիրի, ուր վանականները պատրաստվում էին միջօրեի աղոթքին: Եգիպտացին հիանում է՝ տեսնելով մի վանականի, որը ջանադրաբար աղոթում էր, եռանդուն կերպով անդադար ծնկի իջնելով և բարձրանալով: Մոտենում է և խմելու ջուր խնդրում: Վանականի դեմքը խոժոռվում է ու զայրացած ասում է.

- Երեք օր է շարունակաբար աղոթում եմ և Աստծուց մեղքերի թողություն խնդրում, իսկ դու եկել ես ու սատանայի միջոցով ինձ աղոթքի՞ց ես ուզում կտրել:

Շփոթված եգիպտացին ներողություն է խնդրում և մտավախությամբ մոտենում մի այլ վանականի, որը ծնկի իջած նույնպես աղոթում էր ու կրկին խմելու ջուր խնդրում:

Այս վանականը դադարեցնում է աղոթքը, կանգնում, ուրախությամբ գնում և խմելու ջուր բերում:

Եգիպտացին հարցնում է.

- Իսկ այն եռանդուն աղոթող վանականի մոտ ո՞վ է կանգնած, որ նրան անընդհատ քաջալերում է անդադար աղոթել և ծնկի իջնել:

Այս վանականը ժպտում է և պատասխանում.

- Սատանան է, որ նրան այդպես եռանդուն քաջալերում է աղոթել և մեղքերի թողություն խնդրել:

Այս առակը բազմակողմանի հետաքրքիր բովանդակություն ունի, սակայն նշեմ ամենակարևորը.

Կան քրիստոնյաներ, ովքեր Աստծուց մեղքերի թողություն են խնդրում ու փորձում մեղքերից ազատվել, որպեսզի ինքնահաստատեն իրենց «ես»-ը ու արդարանան Աստծո առջև, քանի որ իրենց «ես»-ն են փնտրում և ոչ թե Աստծուն: Ուստի, այս դեպքում խաթարվում է Աստծո և մարդու միջև խաղաղու-

թյունը: Եվ մարդու մոտ միշտ հարց է առաջանում, թե ինչու չի ստացվում...

Կան քրիստոնյաներ, ովքեր Աստծուց մեղքերի թողություն են խնդրում ու փորձում մեղքերից ազատվել՝ դառնալու համար դեպի Քրիստոս, հաստատելու խաղաղություն Աստծո հետ, ճանաչելով իրենց մեղանչական էությունը և Աստծո անսահման փրկչական Սիրո Շնորհը:

Իսկ մենք ի՞նչ նպատակով ենք մեղքերի թողություն խնդրում. եկեք դառնանք դեպի մեր հոգու հայելին ու ճանաչենք, թե ինչ նպատակով ենք թողություն խնդրում:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Զինվորները շղթայակապ մի զորահրամանատարի, որը միացել էր թշնամուն և ապստամբել թագավորի դեմ, տանում են դեպի խաչելության վայրը: Սակայն մահվան դատապարտված զորահրամանատարը՝ քարացած ու սարսռած, կանգնում է՝ իր փոխարեն խաչի վրա տեսնելով նույն թագավորին, ում դեմ ապստամբել էր: Թագավորն իր հայրն էր, ով արդարադատության համար չէր կարող մերժել պատիժը, սակայն հայրական սիրո պատճառով իր որդու փոխարեն հանձն էր առել կրել պատիժը:

Ահա այսպիսին է Աստծո արդարությունը և սերը մարդու հանդեպ: Աստված արդար է և չի կարող անտեսել մեղքը, որի վարձը մահն է: Բայց Աստված նաև սեր է և փրկում է մարդուն՝ հատուցելով մարդու փոխարեն: «Մեղքի վարձը մահն է, իսկ Աստծո շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի միջոցով» (Հռոմ 6.23):

ՓԱՌՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ

Ասում են, թե մի զինվորական տեսիլք է տեսնում, որ Միքայել հրեշտակապետը երկնային զորքերով իրեն է մոտենում ու ասում.

- Տեր Աստված տեսավ քո հավատարմությունն ու հավատքը և կամենում է քեզ շնորհ անել այն, ինչ որ խնդրես:

Զինվորը առիթը չկորցնելով արագ պատասխանում է.

- Խնդրում եմ, որպեսզի Աստծո զորությունը գործի իմ մեջ, որպեսզի զորավոր գործեր անեմ և այս աշխարհում Աստծո անունը փառավորեմ, ինչպես դուք եք փառավորում Տիրոջ անունը երկնային զորագնդերով ու զորությամբ:

Միքայել հրեշտակապետը պատասխանում է.

- Շատ լավ...

Տեսիլքն անհետանում է, և զինվորը, խրոխտ կանգնած, սպասում է ստանալ Աստծո զորությունը, որպեսզի զորավոր ու գերբնական գործերով զարմացնի աշխարհին ու Աստծո անունը փառավորի: Սակայն իր թիկունքի հատվածում մի մեծ ցավ է սկսում, և զինվորը ծռվում է ու կուզեկուզ սկսում քայլել՝ ամբողջ ժամանակ հայացքը հառած գետնին: Տխրում է և բողոքում Աստծուն.

- Տե՛ր Աստված, ես զորություն խնդրեցի, բայց իբրև պարգև՝ ինձ տկարություն տվեցիր, ոչ կարողանում եմ մարդանց նայել, ոչ էլ երկնքին, որպեսզի փառքովդ հիանամ, այլ ամբողջ ժամանակ գետինն ու հողն եմ տեսնում:

Այսպես զինվորը դեգերելով երկրից երկիր, քաղաքից քաղաք, փորձում է դեղ ու դարման գտնել, որպեսզի կրկին հպարտ կանգնի ու Աստծո անունը փառավորի: Եվ մի անգամ լեռան ստորոտին հանդիպում է մի աղբյուրի, խմում ու բուժվում է: Մեծ ուրախությամբ մտնում է մոտակա քաղաքը և տեսնում մի այրի կին՝ լացակումած ու հուսահատ, արտասվում է իր մահամերձ որդու մոտ: Մոտենում է և մի սրվակով

աղբյուրի ջուրը խմեցնում մահամերձ տղային, որն ուշքի է գալիս, բուժվում:

Եվ այսպես զինվորը բազում հիվանդ մարդկանց հայտնում ու ցույց է տալիս հրաշք աղբյուրի մասին ու շատերին օգնում, ովքեր Աստծուն գոհություն ու փառք են հայտնում:

Շատ մարդկանց համար փառքն այն է, ինչ մեծացնում, բարձրացնում է իրենց և հաջողություններով ու գործերով մյուսների մեծարանքին արժանանում: Աստծո փառքն այլ է՝ ոչ թե Իր ամենակարողությամբ Ինքն Իրեն բարձրացնելու, մեծարանքի արժանանալու, այլ Իր շնորհը, սերը, բարությունը, հոգատարությունը մարդկանց փոխանցելու մեջ է:

ԱՆՀԱՎԱՏ ԽԼՈՒՐԴԸ

Շատ մարդկանց հավատքը կամ անհավատությունը նմանվում է մի խլուրդի, որը, ինչպես մյուս խլուրդները, կույր է: Խլուրդը հողը փորելով դուրս է գալիս ու հպարտ կանգնում, հայացքը հառում դեպի երկինքը, արեգակը: Արևի ճառագայթներն ընկնում են նրա վրա ու ջերմացնում խլուրդի սառած մաշկը: Ճառագայթների ջերմությունից իրեն լավ զգալով՝ խլուրդն ասում է.

- Ասում են, թե արեգակ գոյություն ունի, որտե՞ղ է այդ արեգակը, թող ցույց տան ինձ այդ արեգակը:

Այդ ժամանակ երկնքում սավառնող արծիվը լսում է, իջնում խլուրդի մոտ ու պատասխանում.

- Ինչպես կարող ես տեսնել արեգակը, երբ կույր ես, սակայն զգում ու վայելում ես արեգակի ջերմությունը և կրկին չես հավատում: Արդ, եթե աչքերդ էլ բացվեն ու ցանկանաս ուղիղ նայել արեգակին, ապա աչքերդ կրկին կփակես ու կրկին չես կարող տեսնել այն...

ՓՈՐՁՈՒԹՅՈ՞Ւ, ԹԵ՞ՓՈՐՁԱՆՔ

Մի հավատացյալ գյուղացի այգիներ ուներ: Ամեն տարի բերքահավաքի եկամտից նաև բաժին էր հանում եկեղեցու համար: Երբ մի շոգ ու արևոտ օր ճամփա է ընկնում իր այգիները, վաճառականի կերպարանքով սատանան նստում է ծառի ստվերի ներքո՝ ձեռքին մի մեծ կուժ՝ սառնորակ ջրով լի: Մոտեցող գյուղացուն բարձաձայն ասում է.

- Այս շոգին ծարավ կլինես, լեռների սառնորակ ջուրն եմ վաճառում, բայց քեզանից վարձ չեմ ուզում, էլ ո՞ւր մնաց մարդկությունը, վերցրո՛ւ, խմի՛ր:

Կժով լի ջուրը տալիս է ու հեռանում: Այգեպանն ասում է.

- Շնորհակալ եմ քեզանից, ինչքան օրհնյալ ու բարի մարդ ես:

Այդ երեկոյան գյուղացին հիվանդանում է, քանի որ ամբողջությամբ խմել էր կժով լի սառը ջուրը, որը բավականին շատ էր:

Մի քանի օր անց, փոքր-ինչ կազդուրվելով, կրկին ճամփա է ընկնում մշակելու համար իր այգիները: Որոշում է, ով էլ հանդիպի, ինչ էլ լինի, այլևս, որևէ սառն ըմպելիք չի խմի, մինչև իր լիակատար առողջանալը:

Նույն վայրում, որ հանդիպել էր վաճառականին, տեսնում է իր ընկեր հովիվները վաճառականի հետ միասին թան են խմում: Միանում է նրանց: Վաճառականը թանով լի մի մեծ գավաթ պարզում է դեպի գյուղացին ու ասում.

- Այսօր շատ շոգ օր է, հուսով եմ ինձ կրկին կօրհնես ու ընկերներիդ հետ երախտապարտ կլինես, ձեզ անհատույց թան եմ հյուրասիրում:

Այգեպանը մի փոքր ըմպում է, զգում է, որ շատ սառն է:

Սատանան ասում է.

- Այս անգամ էլ խմիր, ոչինչ էլ չկա, այս պահին դու լավ ես:

Գյուղացին զարմանում է, թե վաճառականը որտեղից գի-

տի իր որպիսությունը, սակայն քաջալերվում է այդ խոսքերից ու խմում է և հաջորդ օրը նորից հիվանդանում, իսկ այգիներն անմշակ են մնում: Սատանան էլ միևնույն ծառի ստվերում նստած հանգիստ սպասում է, թե գյուղացին կրկին երբ կգա:

Միշտ պետք է զգոն լինել և մտքով արթուն, որպեսզի այսպիսի փորձությունների մեջ չընկնել, նմանատիպ փորձություններ հատկապես լինում են նաև պահքի ընթացքում:

ՀՈՎԻՎՆ ՈՒ ԻՐ ԱՂՈԹՔԸ

Մի հովիվ երեք ոչխար ուներ: Երբ արոտավայրում էր, քնով ընկավ, պառկեց խոտերի վրա ու քնեց: Արթնանալիս տեսավ, որ կորցրել է իր ոչխարներից երկուսին և սկսեց աղոթել Աստծուն, որ գտնի իր ոչխարներին, բայց այդպես էլ իր աղոթքը մնաց անպատասխան. փնտրեց ու չգտավ իր ոչխարներին: Վերադարձավ այնտեղ, ուր քնել էր: Հովիվը սկսեց գանգատվել Աստծուց, որ իրեն չի օգնում և այդ պահին աչքն ընկավ գետնի վրայի հետքերին, որոնք գայլերի հետքեր էին: Քայլեց այդ հետքերով և փոքր-ինչ հեռու տեսավ երեք գայլ, որոնք ննջում էին, իսկ նրանց մոտ իր ոչխարների ոսկորներն էին ընկած: Հովիվը սկսեց փառք տալ Աստծուն, որ կենդանի է մնացել ու զգուշությամբ հեռացավ այդ վայրից:

Հաճախ Աստված չի իրագործում մեր աղոթքների խնդրանքները՝ մեզ փրկելով սատանայի թակարդներից, որը գայլերի պես հանկարծակի հարձակվում է, որպեսզի մեզ կործանի:

Երբեմն Աստված մեզ համար կարևոր թվացող երևույթներ զոհում է հանուն մեր փրկության համար:

ԾԱՅՐԱՀԵՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԻՔ ՉԻ ԲԵՐՈՒՄ

Մի հավատացյալ մարդ սիրում է ծայրահեղ բարեգործություն և շռայլություն անել, և նրա բարեգործ լինելը չափից ավելի շատ է լինում: Եվ մի օր օգտվելով դրանից սատանան որոշում է փորձության ենթարկել նրան: Կիրակի օրը, երբ նա պետք է առավոտյան գնար Սբ. Պատարագի, ճանապարհին սատանան կերպարանափոխվում է ու դառնում իբրև մի պառավ ու մոտենում գումար խնդրում: Մարդը տալիս է գումարը, պառավը փառք է հայտնում Աստծուն, իսկ մարդը շարունակում է ճանապարհը: Սատանան պտտվում է և այս անգամ մի ծերունու կերպարանքով է հայտնվում, գումար խնդրում: Մարդն առանց մտածելու տալիս է և շարունակում, իսկ ծերունին փառք է հայտնում Աստծուն: Երբ քիչ էր մնացել, որ հասներ կառքին ու նստեր կառքի մեջ, որպեսզի հասներ եկեղեցի, սատանան այս անգամ էլ ցնցոտիներով հագնված երեխայի կերպարանքով է հայտնվում և գումար ուզում, մարդը տալիս է և նստում կառքը: Կառապանը հարցնում է՝ արդյոք գումար ունես, որպեսզի վճարես ճանապարհի համար, քանի որ հեռվից տեսա, թե ինչպես էիր գումարներդ բաշխելով գալիս: Մարդը ձեռքը տանում է գրպանը և տեսնում է, որ այլևս գումար չի մնացել:

Սատանան այս անգամ հայտնվում է մի մեծահարուստի տեսքով և կառք պահանջում: Կառապանն ասում է մարդուն՝ ահա ես քեզ չեմ կարող տանել, քանի որ գումար չունես, իսկ մեծահարուստին կարող եմ ձեռքից բաց թողնել: Մարդը շվարած իջնում է կառքից, ու մեծահարուստը, որը կերպարանափոխված սատանան էր, նստում է կառքը, գրպանից հանում ծայրահեղ բարեգործ մարդու նվիրած գումարները, տալիս կառապանին ու ասում՝ շտապիր դեպի եկեղեցի, այնտեղ շատ բան ունեմ անելու, իսկ մարդը ոտքով ճամփա է ընկնում, որ միգուցե հասնի Սբ. Պատարագին և եկեղեցու

հավատացյալներին զգուշացնի, որ սատանան շտապել է այդտեղ, որպեսզի մարդկանց շեղի ու խանգարի եկեղեցու հոգևոր հաղորդակցությունից...

ՀԱՎԱՏՔ

Մի իտալացի քանդակագործ մտախոհ պտտվում է մի հսկա քարի շուրջ: Նրան է մոտենում մի քահանա և հարցնում, թե ինչ է պատահել:

Քանդակագործն ասում է.

- Ես ամբողջ սրտով հավատում եմ Աստծուն ու հիշում, որ Ավետարանում ասվում է, եթե նույնիսկ մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, ապա կարող եք լեռներ տեղափոխել: Եվ ահա ուզում եմ այս քարը տեղափոխվի իմ արհեստանոց և Աբրահամի հոյակերտ քանդակը պատրաստեմ: Սակայն ինչքան հավատով ասում եմ ու մեծ հավատքով հավատում, այս քարը նույնիսկ իր տեղից չի ցնցվում...

Քահանան պատասխանում է.

- Քեզ ոչ թե մեծ հավատք է անհրաժեշտ, որպեսզի քարեր տեղափոխես այդ հավատքի շնորհիվ, այլ Աբրահամի նման ունենալ անսահման վստահություն ու մեծ հավատք առ Աստված... Իսկ դու կատարյալ կերպով վստահում և հավատո՞ւմ ես Քրիստոսին, եթե նույնիսկ չի ստացվում լեռներ տեղափոխել...

Աստված ակնկալում է, որպեսզի մենք ձգտենք ունենալ ոչ թե մեծ հավատք լեռներ տեղափոխելու համար, այլ ունենալ մեծ հավատք հենց Իր նկատմամբ:

ԱՐԴՅՈՔ ԻՆՁ ԷԻՐ ՓՆՏՐՈՒՄ

Ամբրոսիոս անունով հռչակավոր մի ճգնավոր է լինում: Նրա համբավը և հրաշագործություններն ամենուր տարածված են լինում: Մի երիտասարդ ցանկանում է նրա աշակերտը դառնալ, ավելի ճանաչել Աստծուն, նվիրվել հոգևոր կյանքին: Մի անգամ հանդիպում է մի ծերունու, ով նրան ասում է.

- Եթե ուզում ես ավելին գիտենալ Աստծո մասին, այդ դեպքում, փնտրիր Ամբրոսիոս ճգնավորին. նա քո առջև կբացահայտի Աստծո խորհուրդները: Երիտասարդը ճամփա է ընկնում ու գտնում հռչակավոր սրբին ու ասում.

- Հա՛յր սուրբ, մանկությունիցս Աստծուն եմ փնտրել ու կամեցել Նրան լավ ճանաչել, Նրա ճանապարհներն ու շավիղներն իմանալ ու Նրան հետևել: Խնդրում եմ, ընդունիր ինձ որպես աշակերտ քեզ մոտ: Ճգնավորը նայում է երիտասարդին, ժպտում ու հարցնում.

- Արդյո՞ք կարող ես թողնել աշխարհը և հետևել ինձ:

- Կարող եմ,- պատասխանում է երիտասարդը:

Ճգնավորն ասում է.

- Այդ դեպքում, հետևիր ինձ ու լսիր, թե Տիրոջ մասին քեզ ինչ կասեմ ու կպատմեմ, և թե ինչպես է պետք հոգևոր կյանքով ապրել: Եվ նրանք զրուցելով քայլում են: Նրանց դեմ-դիմաց գեղեցիկ կառք է գալիս ու կանգնում՝ սպիտակ նժույգներով լծված: Կառքից դուրս է գալիս քաղաքի եպիսկոպոսը՝ ոսկեզօծ զգեստներ հագած ու մեծ հարգանքով բարևելով ճգնավորին ասում.

- Հա՛յր սուրբ, գիտեմ, որ Աստծո առաջ մեծ շնորհ ունես և բազում արժանավոր աշակերտներ: Ինձ մի օգնական է պետք, ուղարկիր աշակետներիցդ որևէ մեկին՝ որպես ինձ օգնական: Երիտասարդը, տեսնելով գեղեցիկ կառքը, հրաշագեղ նժույգներն ու եպիսկոպոսի ոսկեզօծ հագն ու կապը, խնդրում է.

- Սրբազա՛ն հայր, մանկությունից ի վեր ցանկացել եմ ծառայել Աստծուն ու նրա շավիղներն ու ճանապարհներն իմանալ, վերցրու ինձ՝ իբրև քեզ օգնական: Եպիսկոպոսը նայում է ճգնավորին, որը գլխի շարժումով իր հավանությունն է տալիս: Երիտասարդը մեծ ուրախությամբ նստում է կառքը, եպիսկոպոսի հետ հեռանում: Ետ է նայում ու մի տեսիլք տեսնում, որ ճգնավորի հետ մի ծերունի է քայլում: Ծերունին կանգնում է, շրջվում: Դա այն ծերունին էր, որ երիտասարդին խորհուրդ էր տվել գտնել ճգնավորին ու աշակերտել նրան: Այնուհետև ծերունին վերափոխվում է, և երիտասարդը պայծառ լույսի մեջ տեսնում է Հիսուսին: Հիսուս նրան հարցնում է.

- Արդյո՞ք ինձ էիր փնտրում:

Երիտասարդը պատասխանում է.

- Տե՛ր իմ, գիտես, որ միշտ քեզ եմ փնտրել, քանի որ հոգևոր էությունս միշտ կամեցել է քեզ շատ մոտ լինել և քեզ ավելի լավ ճանաչել: Հիսուս նրան պատասխանում է.

- Եթե դու հոգևոր լինեիր, կճանաչեիր Իմ խոսքը, կլսեիր Իմ ձայնը՝ կանչն ու հրավերը և կհետևեիր Ինձ, բայց դու ընտրեցիր աշխարհը և նրա անցողիկ փառքը:

Այնուհետև Հիսուս շրջվում է ու ճգնավորի հետ հեռանում: Երիտասարդը հասկանում է իր սխալը, կանգնեցնում կառքը, դուրս գալիս ու շտապում դեպի ճգնավորը:

ՄԻ ՄԵԾ ՈՒ ԲԱՐԻՆՊԱՏԱԿ

Մի երիտասարդ վանական նստած բլրի վրա նայում է երկնքին, արևածագին: Մեկ այլ վանական մոտենում է ու ասում.

- Եղբա՛յր, ժամերգության ժամանակն է, եկ գնանք վանք, օգնիր մեզ ժամերգությանը:

Երիտասարդ վանականը պատասխանում է.

- Ես մի մեծ ու բարի նպատակ ունեմ. սպասում եմ այն պահին, երբ ժամանակը գա, ես դառնամ եպիսկոպոս ու հանուն Աստծո փառքի գործեմ ու ծառայեմ այնչափ, որչափ ոչ ոք չի ծառայել:

Կեսօրին մոտենում է մի այլ վանական և հարցնում.

- Ի՞նչ ես անում այդ բլրի վրա. ընկերներդ քո կարիքն ունեն, հիմա պետք է նրանց օգնել:

Երիտասարդ վանականը պատասխանում է.

- Երբ այս երեկո վանահայրը վերադառնա և ինձ շնորհի խոստացված հնարավորությունն ու կարողությունը, ես կօգնեմ ոչ միայն իմ ընկերներին, այլև բոլոր նրանց, ում Աստված իմ առջև կբերի:

Երեկոյան՝ արևամուտին, երիտասարդ վանականը լսում է, որ վանահայրը յոթ օր հետո է վերադառնալու վանք և տխրում է ու շրջվում, ետ նայում, տեսնում է Հիսուս վանքի բակում մի դույլով թառամած ու թոշնած ծաղիկներն է ջրում՝ հարցնելով ու ասելով երիտասարդ վանականին.

- Ինչո՞ւ ես մենակ մնացել այդտեղ: Նախ ցած իջիր այդ բլրից, ապա օգնիր ջրել քո խնամքին թողնված այս թառամած ծաղիկները, չէ՞ որ ինձ համար նույնքան թանկ են այս փոքրիկ ծաղիկները, որքան և խրոխտ ու բարձրաբերձ լեռները: Նպատակդ պետք է լինի այն, որ գործես ու ծառայես տվյալ պահին քո շրջապատում այնքանով, որքանով կարող ես օգնել, այլ ոչ թե բարձրանաս բլրի վրա ու սպասես, թե

երբ է գալու այդ պահը, չէ որ ես երբեք չեմ սպասել, թե երբ ինձ պետք է թագավոր հռչակեն, որպեսզի մարդկանց օգնեմ, այլ մեծ եռանդով ու սիրով գործել եմ ու ծառայել ոչ թե ինձ համար, այլ մարդկանց համար:

Շատ անգամ այն նպատակը, որը մարդը համարում է բարի ու աստվածահաճո, չի արժանանում Աստծո արձագանքին ու կամքին, քանի որ այդ նպատակի մեջ մարդը կենտրոնանում է իր անձի, «ես»-ի ինքնադրսևորման վրա, այլ ոչ թե այն պարզ ու հասարակ ծառայությունը իրագործում, որն Աստված ակնկալում է իրենից և որը կարող է ամեն օր իրականացնել ու իր կյանքը հոգևոր օրհնություններով զարդարել:

ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ

Մի մեծահարուստ պաշտոնյա ամեն երեկո մտնում է եկեղեցի, աղոթում, մռայլված և անհանգիստ սրտով հեռանում: Մի օր եկեղեցու մոտ մի չքավոր մարդու հարցնում է.

- Ինչպե՞ս է, որ դու ամեն անգամ աղոթքդ վերջացնելուց հետո մեծ ուրախությամբ ու խաղաղությամբ ես գնում: Կարո՞ղ ես այդ գաղտնիքն ինձ էլ ասել:

Չքավոր մարդը հարցնում է.

- Իսկ ինչպե՞ս ես Աստծուն դիմում:

Մեծահարուստը պատասխանում է.

- Բարի գործ եմ ուզում ձեռնարկել: Տեսնում եմ՝ ունևոր մարդիկ բարձրահարկ շենքեր են կառուցում, ինքս էլ փորձում եմ այդպիսի գործ կատարել, որ մեր երկրին մեծ պարծանք բերեմ: Սակայն միջոցները բավարար չեն, իսկ Աստված ինձ չի օգնում այն իրականացնել:

Չքավորն ասում է.

- Գաղտնիքն այն է, երբ աղոթում եմ, Աստծուց գոհություն եմ հայտնում իմ ունեցածի համար, այլ ոչ թե հիշում, թե ինչ չունեմ և դժգոհում չունեցածի համար...

ԱՌԱՔՅԱԼԸ

Մի երիտասարդ վանական, որ քահանայական ձեռնադրություն էր ստացել, դուրս է գալիս վանքի ճաշարանից և քիչ հեռվում տեսնում՝ քարի վրա, պատկառելի տարիքով անծանոթ մի մարդ է նստած, իսկ նրա շուրջը երեք-չորս հոգի են կանգնած: Երիտասարդ վանականն ինքնագոհ ասում է.

- Հավանաբար անհավատ մարդիկ են, ճաշից հետո ժամանակն է գնալ և քարոզել:

Այնուհետև ճեմելով, հպարտ-հպարտ քայլերով առաջանում է դեպի այդ մարդիկ, իսկ նրա հետևից էլ ճանճերի մի բազմություն՝ կարծես շուրջպար բռնած նրա գլխավերևում և ակրոբատիկ հնարքներով ոգևորված սուրում դեպի երիտասարդ վանականի դեմքն ու մորուքը: Ճանճերի այս շքախմբով մոտենում է ու հռետորական կոչով դիմում.

- Սիրելիներս, որդյակներս, ես՝ հայր սուրբս, առաքյալների ժառանգորդը, առաքելական շնորհներով զարդարված, իմ հոգևոր հայրական հորդորն են բաշխում ձեզ, որ պահեք պատվիրանները:

Պատկառելի տարիքով մարդն ասում է.

- Սիրելի՛ եղբայր, դու հիմա զարդարված ես ճանճերով և ոչ թե շնորհներով: Նախ քո մորուքից և շրթունքներից մաքրիր ճաշի մնացորդները, այնուհետև քարոզ խոսիր:

Երիտասարդը վրդովվում է և հարցնում.

- Իսկ դու ո՞վ ես:

Այդտեղ կանգնածներից մեկը ժպտալով պատասխանում է.

- Տղա՛ս, Սուրբ Անդրեաս առաքյալն է:

Ապա տեսիլքն անհետանում է ու շփոթմունքի մատնված երիտասարդ վանականը դանդաղ գրպանից հանում է թաշկինակը և բերանը սրբում:

Ղուկասի Ավետարանում ասվում է. «Եվ նրանց մեջ հակա-

ճառություն առաջացավ, թե իրենցից ով պիտի մեծ համարվի: Եվ նա նրանց ասաց. «Ազգերի թագավորները տիրում են իրենց ժողովուրդների վրա, և նրանք, որ իշխում են նրանց վրա, բարերարներ են կոչվում: Բայց դուք այդպես չլինեք, այլ՝ ով որ մեծ է ձեր մեջ, թող լինի ինչպես կրտսերը, իսկ առաջնորդը՝ ինչպես սպասավորը: Ո՞վ է մեծ. սեղան նստո՞ղը, թե՞ սպասավորը: Չէ որ՝ սեղան նստողը: Բայց ես ձեր մեջ եմ իբրև սպասավոր» (Ղուկ. 22.24-27):

ՃՈՃԱՆԱԿԸ

Մի երիտասարդ վանական վանահոր հետ անցնում է խաղահրապարակի մոտով:

Երիտասարդ վանականն անընդհատ իրեն մեղադրում է և ասում.

- Հա՛յր սուրբ, իմ հոգևոր կյանքում այնքան մեծ ձեռքբերումներ էի ունեցել: Երանելի հոգևոր բարձունքների հասել, սակայն կրկին գայթակղվեցի, մեղքն ինձ ցած նետեց ու ետ նահանջեցի...

Վանահայրը ոչինչ չի պատասխանում: Մոտենում է մի ճոճանակի, նստում ու մտազբաղ հայացքը դեպի երկինք հառած սկսում ճոճվել:

Երիտասարդ վանականը զարմացած ժպտում ու հարցնում է.

- Հա՛յր սուրբ, ձեր մանկությո՞ւնն եք հիշել.

Վանահայրը պատասխանում է.

- Նկատում ես՝ ինչքան ետ եմ ճոճվում, այդքան էլ դեպի վեր եմ բարձրանում: Մարդու կյանքում էլ է այդպես: Եթե իրապես հասկանում է իր սխալը, զղջում ու ապաշխարում, ապա ինչքան ետ է նահանջել, այդքան էլ դեպի առաջ է գնում: Արդ, մի՛ տխրիր, այլ ուրախ եղիր, որովհետև նորից դեպի վեր ես բարձրանում...

ԲԱՐԵԳՈՐԾԸ

Մի ֆրանսուհի աղջիկ արագ իջնում է ավտոբուսից և շտապում դեպի Սբ. Աստվածամոր տաճարը և աղոթում.

- Տե՛ր իմ Աստված, գոհություն եմ հայտնում քեզ և ուրախություն ապրում, որ այսօր կարողացա ավտոբուսի տոմս գնել մի աղքատ պապիկի համար: Նայում եմ շուրջս ու տեսնում, թե ինչքան ունևոր մարդիկ կան, բայց չեն օգնում խեղճ ու չքավոր մարդկանց: Երանի հնարավորություն ընձեռեիր ինձ ունենալ կարողություն և հարստություն՝ ստեղծելու մի հիմնադրամ և առատաձեռն օգնելու աղքատներին ու տնանկներին: Երանի թե կարողանայի բարեգործությամբ զբաղվել՝ անունդ փառավորելով ամբողջ աշխարհում:

Տիրոջ հրեշտակը գալիս է և ասում.

- Հիսուս լսեց աղոթքդ և մեկ ժամ անց կունենաս այդ մեծ հարստությունը և կարողությունն օգնելու համար մարդկանց:

Աղջիկը փոքր-ինչ զարմանում է, որ այդքան արագ ինքը հարստանալու է բարեգործություն անելու համար, սակայն մտածելով, որ Աստծո համար անհնար ոչինչ չկա, մեծ ուրախությամբ հեռանում է:

Անցնում է մեկ ժամ, բայց որևէ բան չի փոխվում, անցնում է երկու ժամ, երեք, չորս և այդպես մեկ օր, սակայն աղջիկը ոչ հարստություն է տեսնում, ոչ էլ կարողություն: Եվ հաջորդ օրը կրկին փութալով գնում է եկեղեցի և նեղսրտած աղոթում, թե ինչու ինքը չհարստացավ՝ Աստծո անունը փառավորելու համար:

Տիրոջ հրեշտակը գալիս է և ձեռքով իր աջ կողմում մի տեսիլային պատկեր ցույց տալիս ու ասում.

- Մի՛ վհատվիր և տխրիր, ահա տեսնում ես այս պատկերում երևում է, որ Աֆրիկայում ինչքան սովամահ ու տանջամահ տնանկներ ու չքավորներ կան՝ երեխաներ, մայրեր, ծերեր, երիտասարդներ: Եվ Աստված քեզ տվեց այդ մեծ հարս-

տությունը, սակայն տեսնելով քո սրտի առատաձեռնությունը և բարեգործությունը, ժամանակ չկորցնելու համար այդ մեծ կարողությունը միանգամից Աֆրիկա ուղարկեց, որտեղ այժմ շատ մարդիկ դրա համար փառավորում են Տիրոջ անունը և գոհություն հայտնում: Արդ, այն ինչ ունես այժմ, բավարար է քեզ համար, շարունակիր ավտոբուսով երթևեկել և Աստծո անունը փառավորել: Եթե նպատակդ Տիրոջ անունը փառավորելն է և ոչ թե բարեգործությամբ քո անձի երևալը, ապա ուրախ եղիր և գոհություն հայտնիր, քանի որ Աստված լսեց աղոթքդ և իրագործեց այն:

Անակնկալի եկած աղջիկը պատասխանում է.

- Բայց ես..., ես ուզում էի, որ ես...

Ապա լռելյայն հեռանում դեպի ավտոբուսը...

ՊՏՈՒՂԸ

Մի ալեհեր այգեպան մտնում է իր այգին և փայտը կտրող սղոցի ձայն լսում: Առաջանում է դեպի այդ կողմը և տեսնում, թե ինչպես իր թոռնիկը սղոցով փորձում է կտրել ծիրանենու ծառը: Այգեպանին տեսնելուն պես զայրացած ասում է.

- Այս ծառն ինձ նվիրեցիր և ասացիր, որ շուտով պտուղ է տալու և ինձ համար մեծ բարիքներ է բերելու, սակայն արդեն երկու-երեք ամիս է որևէ պտուղ չի տալիս: Ուստի, ավելի լավ է այն կտրել, քան թողնել և սրա փոխարեն նոր ծառ տնկել:

Այգեպանը պատասխանում է.

- Որդի՛ս, դադարեցրու կտրել այդ ծառը, որովհետև այն պտուղ է տալու ամռանը, իսկ հիմա դեռևս գարուն է: Չե՞ս տեսնում ծիրանենին ծաղկել է պտղաբերելու համար: Ինչո՞ւ ես շտապում: Ամեն պտուղ իր ժամանակին է պտղաբերում: Նպատակին հասնում են ոչ թե ծառը կտրելով, այլ համբերությամբ հավատարմորեն հետամուտ լինելով: Այդ ժամանակ և՛ պտուղները կքաղես, և՛ բարիք կունենաս ու նպատակդ էլ իրականություն կդառնա:

ԱՆՑՈՐԴԸ

Մի արհեստավոր լեռնային արահետով ետ ու առաջ է գնում-գալիս: Նույն ճանապարհով մի անցորդ է մոտենում:

Արհեստավորն ասում է.

- Մոլորվել եմ այս վայրերում: Լսել եմ, որ այս կողմերում փայլփլուն խճաքարեր կան, բայց արդեն երկու ժամ է՝ չեմ կարողանում գտնել դրանց վայրը:

Անցորդը պատասխանում է.

- Գիտեմ, թե որտեղ են գտնվում այդ փայլուն քարերը, եկ ինձ հետ, ցույց կտամ դրանց վայրը:

Երբ նրանք հասնում են երփներանգ փայլփլուն խճաքարերով լեցուն վայրը, արհեստավորը հիացմունքով ասում է.

- Ինչ գեղեցիկ են, ինչ սիրուն են ու հմայիչ...

Եվ իր մոտից մեծ պարկ է հանում և ագահորեն խճաքարերն ընտրելով, ծանր ու թեթև անելով այն լցնում:

Անցորդը խորհուրդ է տալիս և ասում.

- Քեզ կարող եմ օգնել ընտրելու համար լավագույնները և պետք չէ այդքան հմայվել այս քարերով ու չափից ավելի հավաքել:

Արհեստավորը պատասխանում է.

- Քեզանից շնորհակալ եմ և քո խորհուրդներից էլ, ինձ այլևս օգնություն պետք չէ, դու կարող ես գնալ. ես գտա այն, ինչ ուզում էի: Պարզապես սիրահարվեցի այս քարերին, ես դեռ երկար կմնամ այստեղ:

Եվ այդպես մինչև երեկո խճաքարեր է հավաքում ու պարկն ամբողջությամբ լցնում և ուշքի է գալիս միայն այն ժամանակ, երբ մոտեցող գայլերի ոռնոց է լսում: Արագ կապում է պարկի բերանը, փորձում այն վերցնել, բայց չի կարողանում: Հեռվում նկատում է պսպղացող գայլերի աչքերը ու հապշտապ մի քանի անգամ ևս անհաջող փորձ կատարում

պարկը գետնից պոկել, հետո այն թողնում և փախչում, իսկ նրան գայլերն են հետևում:

Արհեստավորը նայում է երկնքին և խնդրագին աղաչում.

- Աստվա՛ծ իմ, փրկի՛ր ինձ գայլերից, նրանք արդեն ինձ են հասնում և կհոշոտեն:

Երկնքից լսվում է Աստծո ձայնը.

- Նախօրոք քեզ մոտ ուղարկեցի անցորդին, որ ցույց տար ճանապարհը և օգներ, բայց դու նրանից հրաժարվեցիր ու հրապուրվեցիր ինչ-որ ժամանակավոր արժեքներով: Այժմ քեզ մնում է, որ ինչքան ուժ ունես, վազես և հասնես անցորդին, քանի որ այս գայլերին նա է խնամել ու մեծացրել և, երբ նրան հասնես, նա թույլ չի տա, որ գայլերը քեզ հոշոտեն ու փրկություն ձեռք կբերես:

Երբ Աստծո նախախնամությունը գալիս է և օգնում մարդկանց հասկանալու այն, ինչն իրենց կյանքը կերջանկացնի, մարդիկ հրաժարվում են նրանից՝ հմայվելով ու հրապուրվելով արտաքին ինչ-որ բաներով և ընկնում են փորձության մեջ և իրենց մնում է, որ կրկին վազեն ու հասնեն Աստծո նախախնամությանը...

ԳՈՐԾԻՔԸ

Տափաստանի մեջ մի ծերունի բահով փոս է փորում՝ ջուր գտնելու ակնկալիքով և ասում.

- Տեսնես Աստված ինձ ուժ կտա այս գործն արագ ավարտելու համար:

Նրան է մոտենում մի էքսկավատոր, որի վարորդն ասում է.

- Տեսնում եմ, որ չարչարվում եք: Կարող եմ ձեզ օգնել և իմ այս մեքենայով շատ արագ մի մեծ փոս փորել:

Ծերունին գլուխը բարձրացնում է և պատասխանում.

- Ո՛չ, վտանգավոր է... քանի որ այն բահի նման չէ...

ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսպանական քաղաքներից մեկում մի երիտասարդ արվեստագետ իր նկարները տանում է նկարիչների հրապարակ, որպեսզի բոլորին ցույց տա իր ստեղծագործությունները: Մայթին ողորմություն խնդրող մուրացկանին մանրադրամ է տալիս և ուրախանում, քանի որ մուրացկանը վերափոխվում է հրեշտակի ու ընկերակցում ճանապարհին:

Նկարիչը պարծենում է.

- Ինձ քրիստոնյա եմ համարում. հասկացել եմ, որ շատ մեղքեր եմ գործում, միշտ աշխատել եմ պահել պատվիրանները, զղջալ ու ապաշխարել, բարեպաշտ կյանքով ապրել, ողորմած լինել, որովհետև գիտեմ, որ ողորմածությունը բարձրագլուխ պարծենում է Աստծո դատաստանի ժամանակ:

Հասնում են նկարիչների հրապարակին, երիտասարդը շփոթված նայում է շուրջբոլորը և շարունակում.

- Բայց այստեղ, իբրև նկարիչներ, հավաքված են այն մարդիկ, որոնց չեմ սիրում: Ահա այս մեկն ինձ դառնություն է պատճառել, մյուսին իր բնավորության պատճառով չեմ սիրում: Մեկ ուրիշը խաբել է ինձ, մյուսը վատություն արել: Իսկ այս մեկին ընդհանրապես արհամարհում եմ, մյուսին էլ չեմ հասկանում և այսպես շարունակ:

Այնուհետև արվեստագետը պտտվում է հրապարակում ու զարմացած ասում հրեշտակին.

- Եվ նրանք բոլորն ինձանից ավելի լավ նկարներ են ստեղծել, բայց նկարներում ամենուր ես եմ պատկերված, սակայն այնքան խիստ, անողորմ, նույնիսկ երբեմն էլ դաժան: Բայց ես այդպիսին չեմ, չէ՞: Իսկ քո ձեռքին ինչո՞ւ վրձին ունես. Դո՞ւ էլ ես նկարիչ:

Հրեշտակը պատասխանում է.

- Մտածում էիր, որ ողորմած լինել պարզապես նշանակում է բարեգործություն անել ու գումա՞ր բաժանել. Հիշիր, թե ի՞նչ է ասվում «Հայր մեր» աղոթքում «Թող մեր պարտքերը,

ինչպես մենք ենք թողնում մեր պարտապաններին...»: Այս նկարներում արտահայտված է հոգուդ իրական պատկերն ու վիճակը: Աստված ինձ ուղարկեց և եկա քեզ հետ, որպեսզի պարզ ու մաքուր կտավ գտնեմ և այս վրձնով Աստծո շնորհներով զարդարեմ, բայց քանի դեռ չես ներել, բոլոր այս կտավներն էլ լեփ-լեցուն են պատկերներով և դրանց վրա նկարել չեմ կարող: Սուրբ Հոգին մաքուր ու սպիտակ կտավներ է փնտրում, որպեսզի նրանց վրա Իր անպատմելի շնորհներով ստեղծագործի...

ԽՈՉԸՆԴՈՏԸ

Կեսգիշերին մի քրիստոնյա լապտերների լուսավորության ուղեկցությամբ քայլում է փողոցով: Լույսի ներքո հսկա ստվեր է տեսնում: Տագնապում է և ասում.

-Առաքյալի մարգարեական խոսքերի իրականացումն է: Հայտնության գրքի ահռելի գազանի ստվերն է, որ եկել է աշխարհ ու հիմա իմ առջև է կանգնած: Եթե փախչեմ, կհասնի ու ինձ կուլ կտա: Տե՛ր Աստված, հենց իմ առջև պիտի հայտնվե՞ր այս գազանը: Ինչո՞ւ է կյանքն այսքան անարդար: Բայց, Տե՛ր իմ, Դու ես իմ պահապանը: Սուրբ Խաչի զորությամբ ես կքայլեմ առաջ:

Իր մոտից հանում է Սուրբ Խաչի նշանը և դողդողացող ձեռքով իր կրծքին սեղմելով շարժվում առաջ:

Մոտենալիս տեսնում է, որ ստվերն ավելի է մեծանում ու սարսափ ներշնչում: Լույսի ներքո տեսնում է իրեն նայող վախվորած աչքեր, սպիտակաթույր, գեղեցիկ և անպաշտպան, կուչ եկած մի նապաստակ...

Հաճախ մեզ ավելի վնասում են ոչ թե խոչընդոտները, այլ թե ինչպես ենք գնահատում ու հասկանում դրանցից բխած անհանգստությունները: Իսկ իրականում խոչընդոտներն այնքան էլ մեծ ու սարսափելի չեն...

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏԾՈ ԿԱՄՔՆ Է

Մի ուսանող նայում է պատուհանից և մտածում, թե ինչպես վարվել, քանի որ ջերմություն ունի, վատառողջ է, իսկ դրսում քամի է, ցուրտ, ամպամած եղանակ: Բայց իր թերահավատ ընկերն այդ կիրակի համաձայնվել է իր հետ գնալ եկեղեցի՝ մասնակցելու Սբ. Պատարագին: Ինչպե՞ս վարվել, ուղեկցել ընկերոջը եկեղեցի և բացատրել նրան Սուրբ Պատարագի խորհուրդը, թե՞ չգնալ.... Իսկ ժամանակն անցնում է և շատ հեռվից արդեն լսվում են եկեղեցու զանգերի հնչյունները:

- Խնդրում եմ, Տե՛ր Աստված, ցույց տուր քո կամքը, ինչպես գործել,- բարձրաձայն աղոթում է երիտասարդը:

- Չե՞ս լսում եկեղեցու զանգերի ձայնը, հիշիր պատվիրանը՝ սիրիր ընկերոջդ,- լսվում է մի ձայն, և ուսանողը տեսնում է քիչ հեռու կանգնած սատանային ու զարմացած ասում.

- Իսկ ասում են, թե սատանան միշտ չարն է կամենում:

Այնուհետև շտապ զանգում է ընկերոջը ու դուրս գալիս տնից:

Որոշ ժամանակ անց եկեղեցու մոտ շտապօգնության մեքենա է կանգնում ու ցրտից սարսռած ուսանողին պատգարակով տանում են մեքենան: Երիտասարդն իր գլխավերևում տեսնում է Հիսուսին ու հարցնում.

- Աստված իմ, բայց չէ՞ որ գրված է՝ սիրիր ընկերոջդ, և ես նրան ուղեկցել եմ եկեղեցի: Ինչո՞ւ այսպես ստացվեց.

Հիսուս պատասխանում է.

- Սատանան ճշմարտությունը միշտ կիսատ է ասում: Մի՞թե չես հիշում՝ սիրիր ընկերոջդ, ինչպես սիրում ես քո անձը: Չէ՞ որ կարող էիր կազդուրվել և հաջորդ կիրակի ընկերոջդ եկեղեցի ուղեկցել: Քեզ չկանչեցի զոհողության, այլ սիրիր ընկերոջդ, ինչպես սիրում ես քո անձը:

Աստծո կամքը հասկանալու համար նախքան քայլ կատարելը անհրաժեշտ է գնահատել, թե ինչ հետևանքներ ու պտուղներ է բերելու այդ քայլը: Եթե հետևանքներն ու պտուղները բարի են և քեզ համար, և մյուսների համար: Ուստի, դա է Տիրոջ կամքը:

ՔԱՐՈԶԻՉԸ

Խավարասեր բզեզները կեսգիշերին հավաքվում են, լուր ուղարկում բոլոր միջատներին, մի բացատում համախմբում և նրանցից մեկը բարձրադիր վայրից հայտարարում է.

- Ճշմարտությունը լույսի մեջ է: Նայեք աշխարհին և նրա սահմաններին. ամենուր մեզ խավարն է պատել: Արդեն բավ է, պետք է պայքարենք հանուն լույսի, կյանքի, արդարության, հավասարության:

Մեկ այլ բզեզ մոտենում է ճառ ասողին ու տագնապահար զգուշացնում.

- Շատ մի ոգևորվիր, ավարտիր ճառդ. ժամանակն է հեռանալու, որովհետև արևածագը սկսում է, և լույսը բացվում է:

Գործերից ճանաչեք մարդկանց, թե ինչ են սիրում անել և գործել, թե ինչ են ասում ու խոստանում: Կեղծ ուսուցիչներն ու քարոզիչները միայն խավարի մեջ են խոսում լույսի, արդարության, բարոյականության մասին: Լույսի մեջ նրանք լույսից չեն խոսում, որովհետև լույսը բացահայտում է նրանց գործերը և նրանց լռեցնում: Ուստի, նրանք լույսով չէ, որ ապրում են, այլ խավարով ու խավարասեր են կոչվում, սակայն սիրում լույսից խոսել և ճառել...

ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ՀՆՁՎՈՐԸ

Մի գյուղացի նախքան աշխատանքի գնալը սովորություն ուներ եկեղեցի մտնել և Աստծուն գոհություն հայտնել, որ այդ օրն էլ կարողացավ Աստծո տաճարը գալ: Սատանան, այս ամենը տեսնելով, բարձրանում է երկինք, հրեշտակների հետ վիճաբանում այս մարդու վերաբերյալ, թե ինչու եք մտածում, որ այս քրիստոնյան արժանի է երկնքի արքայությանը և շարունակելով ասում.

- Այս մարդը, որն իրեն բարեպաշտ քրիստոնյա է համարում, եթե այսօր ինձանից շուտ եկեղեցի մտնի, ապա ինքը դժոխք կվերադառնա, իսկ եթե գայթակղվի ու ուշանա կամ չգնա եկեղեցի, ապա այդ մարդուն դժոխք կտանի:

Այնուհետև մարդկային կերպարանք է առնում՝ իբրև մի հնձվոր ու եկեղեցի տանող ճանապարհին ընկերանում գյուղացու հետ և հարցնում.

- Չե՞ս վախենում, թե մի օր սատանան կարող է քեզ թշվառության մատնել, որ ամեն առավոտ այլևս եկեղեցի չգնաս:

Քրիստոնյան ծաղրում է.

- Սատանան նման է մի աղվեսի, երբ որսորդները գալիս են, աղվեսն իր բույնն է փախչում ու ինքն իրեն ասում, թե այսօր լավ եղանակ չէ որսի դուրս գալու համար:

Խավարի հրեշտակի աչքերը չարախնդորեն փայլում են և ասում է.

- Այսօր, իրոք, լավ եղանակ չէ, սակայն դժվար, թե դու ես որսի դուրս եկել աղվես բռնելու համար...

Ապա հանկարծակի ճանապարհից շեղվում, կանգնում մի մեծ փոսի մոտ ու գոչում.

- Ոսկի եմ գտել, ոսկի....

Գյուղացին հետաքրքրությամբ արագ մոտենում է այդ փոսին ու հարցնում, թե ուր է ոսկին:

Հնձվորը նրան հրում ու գցում է փոսի մեջ: Այնուհետև գո-

հունակությամբ նայում դեպի երկինք ու շարունակում ճանապարհը եկեղեցի:

Որոշ ժամանակ անց շրջվում, նայում է ետ, տեսնում է քրիստոնյան փոսից դուրս է եկել ու գալիս է իր հետևից: Ճանապարհին գնդակ է տեսնում, վերցնում, պատռում, այն ամբողջությամբ քարով լցնում ու մոտենում գյուղացուն:

Մարդն ասում է.

- Ես հասկացա, որ չարք ես...

Սատանան պատասխանում է.

- Եթե այս գնդակով այնպես հարվածես, որ ինքս չկարողանամ այն բռնել, կհեռանամ քեզանից ու քեզ հանգիստ կթողնեմ:

Քրիստոնյան ասում է.

- Չէի կարծում, թե այդքան հեշտ բան կարող էիր առաջարկել: Ես իմ հավատքով այնպես կհարվածեմ գնդակին, որ չես կարողանա տեսնել, թե այն ուր է թռչում:

Սակայն ուժգին հարվածելով ոտքը վնասում է և ընկնում է գետնին, իսկ գնդակն անշարժ մնում է: Հնձվորը գոհունակությամբ նայում է երկնքին, իսկ հրեշտակները հանդարտ հայացքով հետևում են այս ամենին: Հնձվորն արագացնում է իր քայլերը եկեղեցու կողմը: Որոշակի հեռանալով կասկածանքով ետ է նայում ու կատաղում, որովհետև տեսնում է, որ գյուղացին մի փայտ է գտել որպես հենակ և կաղալով արագ հետևում է իրեն: Քամի է բարձրանում, փոթորիկ: Գյուղացուն կլանում ու նետում է մի կողմ: Քիչ անց երեք այլ գյուղացիներ խոտ բարձած սայլով մոտենում են: Սատանան կրկին նայում է երկնքին ու տեսնում, որ հրեշտակները հանդարտ հետևում են այս ամենին, ապա դժգոհությամբ ասում.

- Հրեշտակների հանգստությունն ինձ դուր չի գալիս: Ինչոր բան են մտածել, որպեսզի այդ մարդուն ինձանից շուտ եկեղեցի հասցնեն...

Գյուղացիները չարքին տեսնելով՝ սայլը թողնում են ու

փախչում: Սատանան նստում է սայլապանի փոխարեն ու մտրակելով ձիուն, մեծ արագությամբ սլանում եկեղեցի: Իջնում սայլից, հպարտությամբ պտտվում եկեղեցու շուրջը և մոտենում դռանը ու ներս նայում ու զարմանքից սարսափում. գյուղացին ծնկաչոք աղոթում ու Աստծուն գոհություն է հայտնում, որ այս անգամ էլ Աստված իրեն սովորեցրեց ծնկի գալ և խոհեմությամբ ու խոնարհությամբ աղոթել ու այդ սայլով իրեն ժամանակին եկեղեցի հասցնել:

Ասում են՝ չկա չարիք, որից չբխի բարիք: Հոգևոր համառությամբ և խոհեմություն սովորելով մարդիկ կարող են հաղթահարել բազում փորձություններ: Իսկ սատանան ունի մի շատ խոցելի կողմ, որ նա հպարտ է և որի պատճառով միշտ պարտություն է կրում...

ՄՈՒՐՃ ԵՎ ՄԵԽԵՐ

Մի փայտագործ ցասումով լեցուն մուրճի ուժեղ հարվածներով գերանի վրա մեծ մեխեր է ամրացնում և այդ կերպով մարդկությանն ու մի անձնավորության մեղադրում ինչ-որ արարքի համար:

Մի մարդ դանդաղ մոտենում է և ասում.

- Զգո՞ւմ ես չէ՞, թե մեխերն ինչպես են փայտը ճեղքում ու մխրճվում նրա մեջ: Երբ սրասույր մեխերն այդպես իմ ձեռքերի ու ոտքերի մեջ էին մխրճվում, ես ձեզ չէի մեղադրում, այլ ինչքան խորն էին թափանցում, այդքան ներում էի անհիշաչար կերպով... Արդ, մի՛ չարախոսիր և մեղադրիր մարդկանց, և մեղք մի գործիր, որովհետև մուրճի և մեխերի գինը վաղուց արդեն վճարել եմ ձեզ համար, որպեսզի կյանք ունենաք, քանի որ ներումն ու Աստծո սերն անսահման են...

ՆԱԽՕՐՈՔ ՊԱՏԻԺԸ

Մի խստապահանջ հայր, երբ իր երկու զավակներն անկարգություն էին կատարում, պատժում էր նրանց և բազմաթիվ անցքեր ունեցող դույլերով պարտադրում ջրհորից ջուր հանել և այդ դույլերով բավականին հեռու գտնվող իրենց փոքրիկ բանջարանոցը ջրել: Նրա երկու տղաներն այնքան էին գնում-գալիս, որ միայն մինչև երեկո կարողանում էին իրագործել խստապահանջ հոր կարգադրությունը:

Մի օր նրա որդիներից մեկը գաղտագողի մտնում է հարևանի պարտեզը և կարմրահաս խնձոր քաղում ու դուրս գալիս: Հոր աչքից չի վրիպում այս արարքը, և պահանջում է ծակծկված դույլով բանջարանոցի համար ջուր կրել: Նա նաև իր փոքր որդուն է կարգադրում միևնույն պատիժը: Այս տղան տրտնջում է և ասում.

- Հա՛յր իմ, չէ՞ որ ես արդեն նախորդ արարքների համար քավել եմ իմ մեղքերը և արդար եմ, ինչո՞ւ ես ինձ էլ պատժում, քանի որ ես մեղք չեմ գործել, այլ իմ եղբայրն է մտել հարևանի պարտեզը:

Հայրը պատասխանում է.

- Քեզ էլ նախօրոք եմ պատժում՝ իբրև հատուցում այդ արարքի համար, որովհետև գիտեմ, երբ եղբայրդ սկսի ջուր կրել, իսկ ես էլ այստեղ չլինեմ, դու էլ պիտի մտնես հարևանի պարտեզը և ակնահաճո խնձորներ քաղես: Ավելի լավ է եղբորդ օգնիր, որպեսզի ժամանակ չունենաս այդպիսի քայլ կատարել:

Աստված արդար է և արդարությունը հատուցում է պահանջում: Երբեմն Արարիչը մարդուն կարող է խրատել տվյալ պահին իր չկատարած արարքի համար, քանի որ տեսնում է մարդու ապագան և այդ կերպով մարդուն Ահեղ Դատաստանի ժամանակ հատուցումից փրկում: Ահա թե ինչու ամբողջ

մարդկությունը պատժվեց Ադամի և Եվայի հետ միասին, որովհետև ամեն մարդ իր կյանքի որևէ դրվագում դառնում է մի Ադամ կամ Եվա՝ քաղելով արգելված պտուղը: Ում Աստված սիրում է, նաև հանդիմանում է ու խրատում է (Հայտն.3.19):

ՄԻԱՅՆԱԿ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մեկն ասում է.

- Ինչքան տխուր ու գորշ է այս կյանքը: Ոչինչ չի ստացվում, ո՛չ լույս եմ տեսնում, ո՛չ կյանքի գեղեցկությունն ու բնությունը: Ոչ ոք ըստ արժանվույն ինձ չի գնահատում: Այսքան ժամանակ լռության մեջ եմ, հեռու մեղավոր աշխարհից ու ամեն ինչից, բայց Աստծո ձայնն էլ չեմ լսում...

Արձագանքող մի ձայն է լսվում.

- Խխունջ եղբայր, պատյանիցդ դուրս եկ: Թաքնվել ես քո պատյանում և դժգոհում ես, թե ո՛չ լույս ես տեսնում, ո՛չ էլ բնություն ու կյանք:

Խխունջն ավելի է քաշվում դեպի իր պատյանի խորքը, որպեսզի այդ ձայնը չլսի, նայում չորս կողմն ու ասում.

- Ինչքան տխուր է այս կյանքը. մի՞թե ամբողջ աշխարհում միայն ինքս կամ...

Երբ մարդ պարփակվում է իր «ես»-ի մեջ, այն դարձնում կյանքի կենտրոնն ու աշխարհը, երբ մարդ ավելորդ համեստությամբ ու ամաչկոտությամբ փակվում է իր հոգու խորքում, մշտապես նայում իր «ես»-ին և սպասում լսելու Աստծո ձայնը, ինչպե՞ս կարող է ունկնդրել Արարչի խոսքը, երբ իրականում ինքն իրենով է հմայված...

ՆԱՄԱԿԸ

Մի դատավոր դուրս է գալիս եկեղեցուց ու տեսնում՝ մի հրեշտակ նամակներով լի տոպրակով նույնպես դուրս է գալիս եկեղեցուց, և հարցնում է.

- Աստծո՛ հրեշտակ, այս ի՞նչ նամակներ ես տանում:

Հրեշտակը պատասխանում է.

- Մարդկանց խնդրանքներն եմ տանում Աստծո մոտ, որպեսզի հաջորդ օրը պատասխան-նամակները բաժանեմ նրանց: Եթե ցանկանում ես, դու էլ կարող ես մի նամակ գրել և վաղն իսկույնևեթ կփոխանցեմ պատասխան նամակը:

Դատավորն ասում է.

- Ինչքան գալիս եմ եկեղեցի, աղոթում, խնդրում, բայց Աստված լռում է, չի պատասխանում: Վերջապես եկավ այդ օրը, երբ իրապես պատասխան կստանամ:

Այնուհետև մի թուղթ ու գրիչ է վերցնում, ոգևորված գրում, նամակը հրեշտակին հանձնում:

Հաջորդ օրը հրեշտակը գալիս է և Աստծուց ուղարկած ծրարը փոխանցում է այս մարդուն, որը մեծ սպասելիքներով ու ուրախությամբ բացում է այն, սակայն ներսում մի դատարկ, մաքուր թուղթ է գտնում ու դժգոհությամբ ասում.

- Այստեղ որևէ պատասխան չկա: Միայն ճերմակ, մաքուր թուղթ է: Աստված կրկին ինձ չպատասխանեց:

Հրեշտակը հարցնում է.

- Իսկ ի՞նչ էիր գրել Աստծուն.

Դատավորը պատասխանում է.

- Գրել էի, որ իմ հարևանը երկու ձի ունի, իսկ ես մեկը, և նա նաև մի ավանակ ունի, իսկ ես չունեմ: Խնդրել էի, որ Աստված ինձ մի արաբական նժույգ տա: Եվ հետո, երբ երեկ եկեղեցի էի գալիս, տեսա, որ մի մարդ մի շատ գեղեցիկ ոսկյա մատանի ունի, այն էլ ադամանդակուռ, իսկ իմ մատանին շատ հասարակ է: Խնդրեցի, որ ինձ էլ տրվի այդպիսի հնա-

ռավորություն, և ես էլ ունենամ այդ մատանուց, ոչ ավելին, ավելին ինձ պետք չէ: Բայց ամենակարևորը, որ իմ գործը շատ քիչ է. քիչ մարդկանց եմ դատում, քան իմ մյուս դատավոր ընկերները:

Հրեշտակ թույլ չի տալիս շարունակել և ասում է.

- Աստված քեզ միշտ էլ պատասխանել է, պարզապես դու չես կամեցել լսել, քանի որ կամեցել ես լսել քեզ համար ցանկալի պատասխանը: Այս ճերմակ, մաքուր թուղթը, որ ուղարկվել է քեզ, դա է պատասխանը, որով ցույց է տրվում, որ Աստված կամենում է, որ դու էլ այս թղթի նման մաքուր ու շիտակ լինես:

ՍԱՀՄԱՆՆԵՐ

Երփներանգ ծաղիկներով լեցուն անծայրածիր դաշտի կենտրոնում մի տակառի միջից օգնության կանչ է հնչում.

- Օգնեցե՜ք, օգնեցե՜ք... Երկնավո՛ր Հայր, այլևս չեմ համբերում, օգնի՛ր ինձ, կյանքի անհաջողություններից հոգիս ճնշվում է և խեղդվում...

Թակոց, թխկթխկոց է լսվում և մի ձայն.

- Ինչո՞ւ ես մտել տակառի մեջ : Չէ՞ որ սահմանների մեջ ամեն ինչ սահմանավոր է՝ և՛ համբերությունը, և՛ կամքը, և՛ պայքարելու ոգին ու նպատակին հասնելու ձգտումը: Դո՛ւրս եկ այդ տակառից և կյանքին նայիր հոգևոր աչքերով ու աստվածային սիրով, և սիրտդ այլևս չի լցվի անհաջողությունների հեղեղով, ինչպես բաժակի մեջ ջուրն է լցվում ու դուրս հորդում, իսկ անսահմանության մեջ լցվելու ու դուրս հորդելու տեղ չունի, քանի որ անէանալով անցնում ու գնում է:

Մարդը՝ վախվորած ու դանդաղ, գլուխը դուրս է հանում տակառի միջից, քիչ հեռու տեսնում Հիսուսին և հեռավոր ու անսահման հորիզոնը, դաշտի ծաղիկներին և ժպտում է:

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Թագավորը փոքրաթիվ զինվորներով մի ձորակում մարտական շարքով կանգնած սպասում է հուժկու արագությամբ իրենց մոտեցող թշնամու հեծյալ զորաջոկատին:

Իր աջ կողմում գտնվող զինակցին ասում է.

- Գովելի է, երբ դու պատրաստակամություն հայտնեցիր ծառայելու ինձ և զինակցելու այս ճակատամարտում: Հիշում եմ՝ ամեն անգամ հաղթական քայլերթով մայրաքաղաք էինք մտնում, հավաստիացնում էիր, որ ամեն պարագայում էլ հավատարիմ կծառայես ինձ և պահանջում էիր նոր հնարավորություններ ու ակնկալիքներ: Այժմ, վերհիշելով քո հավատարմությունը, այս դժվարին պահին վստահում եմ քեզ, որպեսզի ապահովես իմ թիկունքի պաշտպանությունը, իսկ մենք հեռանում ենք...

Զինակիցը տարակուսած պատասխանում է.

- Բայց ինչպե՞ս միայնակ մարտի բռնվեմ մի ամբողջ զորաջոկատի հետ...

Թագավորն ասում է.

- Մի՞թե չես վստահում ինձ.

Ապա զինվորների հետ հեռանում է նրան թողնելով այդտեղ:

Այս մարդը նայում է մոտեցող թշնամու լավ զինված զորաջոկատին, որը կարճ ժամանակ անց կարող է նրան շրջապատել: Թագավորի խոսքի հանդեպ սիրտը կասկածանք է ընկնում, շրջվում է և երկմտելով արագ հեռանում այդ վայրից, մոտենում արքային, ով ասում է.

- Նայի՛ր դեպի վեր. ծառերի ու բլուրների վրա թշնամու զորաջոկատից կրկնակի իմ նետաձիգներն են կանգնած: Հակառակորդի ջոկատը նույնիսկ չէր կարող քեզ մոտենալ, իսկ դու երկմտեցիր ու ինձ չվստահեցիր, այդ դեպքում ինչպե՞ս ես

ակնկալիքներ ու նոր հնարավորություններ սպասում, երբ իրապես ինձ չե՞ս հավատում:

Իսկ մենք ավելի շատ հավատարի՞մ ենք Աստծուն, թե՞ ավելի շատ պահանջում ենք ու բողոքում...

ՎԵՐԱՐԿՈՒՆ

Հյուսիսային բևեռից դեպի հարավային աշխարհամաս եկած մի ձկնորս՝ վերարկուն հագին, կանգնում է արևի հրաշեկ ճառագայթների ներքո և ասում է.

- Երկնավո՛ր Հայր, արդեն շատ շոգ է, տանջվում եմ տոթից ու տապից, վերարկուս չեմ կարող հանել, խնդրում եմ, օգնի՛ր:

Մի նավաստի է անցնում, ունկնդրում նրա խոսքերը և խորհուրդ տալիս.

- Ինչ տարօրինակ մարդ ես. հանիր վերարկուդ, չէ՞ որ ամառ է և այլևս շոգից չես տանջվի:

Իսկ հյուսիսաբնակ ձկնորսն այդ լսելով ամրացնում է վերարկուի գոտին ու փոքր-ինչ զայրացած պատասխանում.

- Մի՛ խանգարիր, քանի որ սպասում եմ, որ Աստված ինձ օգնի, որպեսզի ազատվեմ այս տոթից ու տապից: Իսկ իմ վերարկուն ես շատ-շատ եմ սիրում և այն երբեք չեմ հանի: Եթե մնամ առանց դրա, միգո՞ւցե և մրսեմ...

Շատ անգամ մենք նման ենք վերարկուն հագին այս մարդուն, երբ չենք ուզում հրաժարվել մեզ մտատանջող անօգուտ ցանկություններից, մտածմունքներից, ինչպես նաև մեղքից, սակայն սպասում ենք, որ Աստված ազատագրի մեզ այդ ամենից, որոնցից ամենևին չենք էլ ուզում բաժանվել, երբեմն էլ այնքան ենք դրանցով ներգրավված, որ վախենում ենք դրանք կորցնել...

ՋՈՒՐԸ

Գանձ որոնող մի մարդ, որ մեծ ադամանդ էր գտել, դեգերում է անապատում և բարձրաձայն ասում.

- Վերջապես իրականացավ իմ երազանքը. գտա այս թանկարժեք քարը, սակայն Աստված իմ, ջուր եմ ուզում, խմելու ջուր:

Մի արաբ է մոտենում ու սառնորակ ջրով լի մեծ թաս է պարզում այդ մարդուն և ասում.

- Քարավանով այս կողմերում անցնում էինք: Հեռվից լսեցի ձայնդ: Ահա վերցրու, խմիր:

Գանձախույզը ջրի մի մասն ագահորեն խմում է, իսկ մյուս մասը թափում արևի ճառագայթներից շիկացած ավազի վրա և ասում.

- Աստծուց ջուր էի խնդրել, բայց ոչ այսքան շատ: Ես երազում եմ, որ Նա ինձ ավելի շատ ոսկի, ադամանդ տա:

Արաբը, շվարած այդ տեսարանից, վերցնում է իր դատարկ թասը և հեռանում:

Որոշ ժամանակ անց գանձ որոնող մարդը զգում է, որ նորից սաստիկ ծարավ է և աղերսում է.

- Աստվա՛ծ իմ, մեծ սխալ գործեցի. արաբի բերած ջուրը թափեցի... ու քո օգնությունը իմ նյութական ցանկությունների պատճառով չգնահատեցի: Խնդրում եմ, այս անգամ էլ օգնիր:

Հեռվում նկատում է մի քարավան: Ուրախությամբ շտապում է այդ կողմը, տեսնում զինված մարդիկ և իրեն ջուր բերող արաբին ու ասում.

- Եղբա՛յր, խնդրում եմ կրկին խմելու ջուր տուր, այլապես այս անապատում ծարավից կմեռնեմ:

Արաբը պատասխանում է.

- Այս կողմերում ջուրն ավելի թանկ է, քան ամեն մի թանկարժեք քար կամ ոսկի: Այս անգամ վճարիր ջրի փոխարեն:

Գանձախույզը գրպանից ստիպված հանում է իր գտած ադամանդը և փոխանակում մեկ բաժակ ջրի համար:

Հաճախ Աստված նաև լռում է և չի իրագործում մարդկանց խնդրանքները, քանի որ այն, ինչ Աստված հարկ է համարում պարգևել, մարդիկ հոգևոր առումով դեռևս պատրաստ չեն գնահատելու ու կորցնում են...

ԱՅԼԵՎՍ ՉԵՄ ԿԱՐՈՂ

Մի մարդ խելակորույս արագությամբ մոտենում է ծովափին գտնվող բարձրաբերձ ժայռի գագաթին՝ ինքն իրեն ասելով.

- Այլևս չեմ կարող..., այլևս չեմ կարող ապրել մեղքերի բեռից ու ծանրությունից ու այսքան անհաջողություններից...

Ժայռի գագաթին տեսնում է Հիսուսին՝ փոքրիկ քարեր նետելիս ծովի մեջ:

Մարդը, հետաքրքությունից դրդված, հարցնում է.

- Նախքան ինձ ցած նետելը այս ժայռից, Տեր Հիսուս, կուզենայի իմանալ, թե ինչո՞ւ ես քարեր նետում ծովի մեջ:

Հիսուս պատասխանում է.

- Ցանկանում եմ ծովը քարերով լցնել և ժայռին հավասար դարձնել, որպեսզի չկարողանաս քեզ ցած նետել այստեղից:

Մարդն ասում է.

- Բայց, Տե՛ր, Դու ամենակարող և իմաստություն պարգևողն ես, մի քանի վայրկյանում կարող ես ծովը ցամաքեցնել և ժայռին հավասար դարձնել, իսկ այսպես հազար տարի էլ անցնի, փոքրիկ քարերով ծովը նույնիսկ չի ծածկվի...

Հիսուս պատասխանում է.

- Ահա այդպես էլ Աստծո սերը, ներողամտությունը, ողորմությունը և փրկությունն այնքան անսահման են, որ մեղքերդ չեն կարող ծածկել Իմ ներողամտությունը և փրկության անսահմանությունը, որոնք միշտ քեզ կփրկեն ու կյանք կպարգևեն:

Մարդը լռելյայն գլուխը կախում է և հեռանում:

ԹԶՈՒԿԸ

Ասում են, թե մի մարդ կլինիկական մահ է ապրում ու հայտնվում է մի մեծ ու լուսավոր քաղաքի հրապարակում, ուր ամենուր թզուկներ էին:

Երկնքում նկատում է Աստծո հրեշտակին ու հարցնում.

- Այս ո՞ւր եմ ընկել և ովքե՞ր են այս թզուկները:

Հրեշտակը պատասխանում է.

- Դու հանդերձյալ աշխարհում ես, իսկ այս թզուկներն այն մարդիկ են, ովքեր իրենց երկրային կյանքում իրենց հոգևոր էության մեջ մանուկ են մնացել ու կատարյալ հոգևոր հասակի չեն հասել...

Մարդը տեսնում է, որ թզուկների մի մեծ բազմություն հավաքվել է մի բարձր պատվանդանի մոտ, որի վրա բանալիներ են դրված ու փորձում են ցատկել ու բանալիները վերցնել, բայց չի ստացվում:

Մարդը կրկին հարցնում է հրեշտակին.

- Այդ ի՞նչ բանալիներ են, որ այս թզուկ մարդիկ չեն կարողանում պատվանդանից վերցնել.

Հրեշտակը պատասխանում է.

- Դրանք երկնքի արքայության դռների բանալիներն են, թզուկները ցատկում են, որպեսզի վերցնեն այդ բանալիները և կարողանան մտնել երկնքի արքայություն:

Մարդը՝ ինքնագոհ ու վստահ, մոտենում է պատվանդանին, նկատում է, որ այն բավականին բարձր է: Ցատկում է, ձեռքը բանալուն չի հասնում, նորից է ցատկում, բայց ապարդյուն... Զարմացած նայում է շուրջբոլորը, թզուկներին, որոնցից մեկն ասում է.

- Ինչո՞ւ ես զարմացել. մի՞թե կարծում ես, որ քո թզուկ հասակով կարող ես ինձանից լավ ցատկել: Այս երկու հազար տարի է, ինչ ցատկում եմ, բայց ձեռքս բանալուն չի հասնում,

էլ ուր մնաց, որ քո մեկ, երկու ցատկով կարողանաս բանալին վերցնել:

Իսկ մենք ձգտո՞ւմ ենք հոգևոր կատարյալ հասակ ունենալ, թե՞ պարզապես բավարարվում ենք քրիստոնյա կոչվելով: Ամեն քրիստոնյա պետք է ձգտի հոգևոր թզուկ չմնալու համար և ամոթով չմնա երկնքի արքայության դռների առջև...

ԽՆԴՐԱՆՔ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

Մի բժիշկ շատ է տխրում և իր սենյակում աղոթում է Աստծուն ու ասում.

- Տե՛ր Աստված, օգնիր ինձ. արդեն երեք օր է՝ գումար չունենալու պատճառով չեմ կարողանում իմ երեխաների խնդրանքը կատարել:

Այդ րոպեին սենյակ է մտնում մի մարդ՝ նույնպես տխուր, բայց փոքր-ինչ զայրացած:

Բժիշկը հարցնում է.

- Ինչո՞ւ ես զայրացած.

Մարդը պատասխանում է.

- Ես չափից ավելի ծխում ու ալկոհոլ էի օգտագործում: Աստծուն խնդրեցի, որ ինձ ուժ ու կամք տա, գերբնական շնորհ և զորություն տա, որ կարողանամ քիչ ծխել կամ էլ կարողանամ այլևս չծխել: Բայց դրա փոխարեն հիվանդացա ու տկարացա: Թեև այս հիվանդությունը ինձ կոփում ու կամք է տալիս, բայց հիմա ոչ կարողանում եմ ծխել, ոչ էլ կարողանում եմ իմ ցանկացածի չափ խմել: Այժմ եկել եմ, որ ինձ բուժես ու հիվանդությունից ազատես:

Բժիշկը ժպտում է ու ասում.

- Ինչքան անքննելի են Աստծո գործերն ու ծրագրերը:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Մի բրուտ, ինքն իր կյանքից դժգոհելով, գալիս է դարբնի մոտ ու հարցնում,

- Ամեն մեկս մեր գործի մեջ կատարյալ ենք, բայց ինչի՞ մեջ է քո հաջողության գաղտնիքը. քեզ մոտ բազմաթիվ գնորդներ են գալիս, իսկ ինձ մոտ՝ շատ քիչ:

Դարբինը պատասխանում է.

- Երբ որևէ իր եմ պատրաստում և այն լավ չի ստացվում, կրկին վերցնում եմ այդ երկաթը, շիկացնում ու մուրճի բազմաթիվ հարվածներով սխալն ուղղում կամ էլ այդ երկաթից նոր իր եմ պատրաստում: Իսկ դու, երբ կավը ձեռքիցդ ընկնում է, կամ պատրաստած իրը լավ չի ստացվում, մի կողմ ես շպրտում և նոր կավ ես վերցնում պատրաստելու համար, իսկ երբ այդ ափսեն կամ կուժը լավ չի ստացվում, կոտրում ես ու մի կողմ գցում ու փորձում նորը պատրաստել: Դրա համար էլ շատ քիչ իրեր ես պատրաստի ունենում, ուստի շատ քիչ գնորդներ ես ունենում:

Այս առակի հոգևոր իմաստներից մեկն այն է.

Երբ մարդ մեղք է գործում, սատանան, երբեմն, մարդուն ցույց է տալիս այդ մեղքը և կատարած այդ արարքի Աստծուն ոչ հաճելի աստիճանը: Նա բացահայտում է ճշմարտությունը, բայց երբեք ճշմարտությունն ամբողջությամբ չի ասում... այս կերպով մարդուն ցույց տալով, որ մարդ անարժան է ունենալ Աստծո ներկայությունը և անխուսափելիորեն արժանի է պատժի ու մահվան: Աշխատում է մարդուն տանել հուսահատության, նույնիսկ ինքնասպանության... Այս գործելակերպը նման է առակի բրուտի գործելակերպին:

Երբ մարդ մեղք է գործում, Սբ. Հոգին ցույց է տալիս այդ մեղքը և կատարած այդ արարքի Աստծուն ոչ հաճելի աստիճանը (թեև մարդու տարբեր հոգեվիճակներում տարբեր կերպ է մոտենում այս հարցին): Սբ. Հոգին բացահայտում է

ճշմարտությունը, բայց միշտ ճշմարտությունն ամբողջությամբ է ասում՝ ցույց տալով մարդու մեղքը, սակայն միևնույն ժամանակ ցույց տալով նաև փրկության ուղին Հիսուս Քրիստոսի միջոցով: Աշխատում է մարդուն տանել դեպի Քրիստոս, Աստծո Սերը: Եվ հաճախ էլ, երբ մարդ սխալվում է, Աստված, այդ սխալները վերցնելով, նորովի է կերտում մարդու հոգևոր էությունը, կամ էլ տարբեր ճանապարհներով ուղղում այդ սխալները: Այս գործելակերպը նման է առակի դարբնի գործելակերպին:

Ահա, թե ինչպես կարող ենք տարբերել մեր հոգում հնչող հոգևոր խրատները, պատգամները՝ արդյոք դա սատանայի ձայնն է, թե Սուրբ Հոգու...

ՀԱՂԹԱՆԱԿ

Մի փոքրիկ մուկ վազքով մոտենում է վագրին և սարսափած նայում իրեն հետապնդող բազեին, որը ճախրելով երկնքում չի հանդգնում մոտենալ:

Անվտանգ զգալով վագրի մոտ մուկն ասում է.

- Բնությունը սխալ է գործել: Եթե ինձ էլ վագր կոչեին, բազեն երբեք ինձ վրա չէր հարձակվի, և հաղթությունն ինձ էլ կուղեկցեր:

Վագրը պատասխանում է.

- Որպեսզի որսի մեջ հաղթանակ տոնեմ, տասն անգամ և ավելին ձախողվում եմ և միայն մեկ անգամ հաջողության հասնում, այլ ոչ թե մեկ կամ երկու ձախողումից հետո հուսահատվում կամ փախչում, ինչպես հիմա դու ես փախչում: Ուստի, ոչ թե պետք է անունդ վագր կոչես, այլ պետք է վերափոխվես, որպեսզի հաջողության հասնես ու հաղթանակես...

Իրական հաղթանակն այն է, երբ անկախ որևէ հանգամանքից ընկած վիճակից կրկին և մշտապես կանգնում ես ու առաջ շարժվում դեպի Աստծո ուղենշած նպատակը:

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Մի այգեպանի որդի, խնձորենու ծառի տակ նստած, Ավետարան է կարդում՝ հասնելով այն տողերին, թե կատարյալ եղեք, ինչպես ձեր Երկնավոր Հայրն է կատարյալ... Ծառից կարմրահաս խնձոր է ընկնում: Երիտասարդը վերցնում է, զամբյուղի մեջ դնում: Այնուհետև նայում է ծառին, որոշում հավաքել բոլոր հասուն պտուղները: Հաջողությամբ մի քանի զամբյուղ արագ լցնում է խնձորներով և ասում.

- Տե՛ր իմ, գոհ եմ, որ ինձ լուսավորեցիր՝ ցույց տալով կատարելության ուղին: Կաշխատեմ կարճ ժամանակում հավաքել բոլոր պտուղները և մինչ մայրամուտը գործն ավարտին հասցնել:

Արագ-արագ սկսում է զամբյուղները խնձորներով լցնել ու ժամանակ առ ժամանակ արեգակի տեղաշարժին ուշադրություն դարձնել: Մի դև նկատում է այս մարդու շտապողականությունը, բարձրանում ծառի վրա և ճյուղերը փոքր-ինչ շարժում: Հասուն պտուղներն անձրևի նման թափվում են: Այգեպանի որդին մեծ փութաջանությամբ գետնին թափված խնձորները լցնում է զամբյուղները և հիացմունքով շունչ առնում՝ նայելով իր աշխատանքի արդյունքին: Դևը չարամտորեն ամբողջ ուժով թափահարում է ծառի մյուս ճյուղերը, ակնթարթորեն անցնում մի այլ խնձորենու ծառի վրա և սրա ճյուղերն էլ շարժում և այսպես ամբողջ այգու ծառերի ճյուղերը ու պտուղներով ծածկում այգու գետնածածկ կանաչը...

Երիտասարդը, շնչակտուր և ուժասպառ լինելով, շվարած ասում է.

- Տե՛ր Աստված, ինձ երկու ձեռք ես տվել, այլևս չեմ հասցնում խնձորները հավաքել և իմ գործը կատարյալ ավարտին հասցնել:

Երկնքից մի ձայն է լսվում.

- Ավետարանի պատգամները կարդալով ըստ քո ցանկու-

թյունների մի հասկացիր, այլ պարզապես հետևիր այդ պատգամներին. ես չասացի կատարյալ գործեր արեք, այլ կատարյալ եղեք, ինչպես ձեր Երկնավոր Հայրն է կատարյալ և զուր տեղը ձեզ փորձության մի մատնեք...

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Մի կոմս հեռավոր Արևելքից վերադառնալիս յուրահատուկ պտղատու մատղաշ ծառեր է բերում և պատվիրում իր երկու ծառաներին դրանք իր պարտեզում աճեցնել: Նրանցից մեկն առավել ջանադրությամբ, խնամքով և հոգատարությամբ կատարում է իր գործը: Երբ կոմսը հյուրերի հետ մտնում է պարտեզ, տեսնում է գեղեցիկ ու փարթամ ծառեր, որոնց վրա մեծ-մեծ տառերով փակցված է նաև այդ ծառայի անուն, ազգանունը: Մյուս ծառայի աճեցրած ծառերն ավելի փոքր էին ու անշուք: Սակայն կոմսը վերջին ծառային ավելի շատ է վարձատրում, քան մյուսին: Իսկ սա վրդովված ասում է.

- Սիրելի՛ կոմս, միթե չես տեսնում, թե ինչպիսի վեհապանծ ծառեր եմ աճեցրել և ինձ արդարացի չես վարձատրում:

Կոմսը պատասխանում է.-

- Դու արդեն ինքդ քեզ վարձատրել ես, և նույնիսկ պտուղները քաղելիս և հյուրասիրելիս, պտուղների վրա քո անունն ես փակցնում...: Արդ, իմ վարձատրությունն առատ է նրա համար, ով թույլ է տալիս, որպեսզի ինքս նրա անունը վկայեմ հյուրերի առջև...

Թույլ տվեք, որպեսզի Աստված ձեզ բարձրացնի ու վարձատրի...: Եվ ձեր գանձերը թող երկնքում լինեն:

ԴՐԱՄԸ

Մի կոշկակար բարձրաբերձ ժայռից նայում է ալեկոծ ծովի ալիքներին ու մեծ բաղձանքով ասում.

- Տեսնես Աստված ինձ էլ շատ դրամ կտա, որպեսզի այլևս հին կոշիկներ չկարկատեմ ապրուստ վաստակելու համար: Եթե իմ այս խնդրանքն իրագործի, խոստանում եմ կկատարեմ այն ամենը, ինչ Աստված կամենա:

Որոշ ժամանակ անց մի մեծ պարկ շալակած Հիսուս մոտենում է նրան և ասում.

- Ահա բերել եմ այն, ինչ խնդրել ես:

Պարկը դնում է գետնին, և կոշկակարը տեսնում է պարկով լի փայլփլուն ոսկեդրամներն ու անչափ ուրախանում և երախտագիտությամբ ասում.

- Տե՛ր իմ, պատրաստ եմ կատարելու քո կամքը, դու միայն ասա, և ես իսկույն կիրագործեմ այն:

Հիսուս պատասխանում է.

- Քեզ մի փոքրիկ խնդրանք ունեմ...

Կոշկակարը ժպտալով ասում է.

- Միայն այդքա՞նը: Պատրաստ եմ անձնվիրաբար ավելի մեծ պատգամ կատարել:

Հիսուս կրկին ասում է.

- Մի փոքրիկ խնդրանք ունեմ: Վերցրու այս պարկով լի դրամներն ու այս ժայռից նետիր դեպի ծովը:

Կոշկակարն անակնկալի է գալիս, տխրում, սկզբում պատասխան չի գտնում ասելու, այնուհետև վարանելով և շվարած ասում.

- Բայց ինչպե՞ս... ամբո՞ղջը...

Հիսուսը պատասխանում է.

- Ինչո՞ւ ես տխրում: Դու ավելի շատ ուրախացար, որ վերջապես այս ոսկեդրամները ստացար, այլ ոչ թե նրա համար, որ ինձ տեսար: Իսկ այժմ տխրում ես, որ դրանցից պիտի

բաժանվես, բայց չէ՞ որ ես քո կողքին եմ՝ Տերն ամենայնի՝ երկնքի ու երկրի...

Աստված կամենում է, որպեսզի մենք կախվածության մեջ չլինենք երկրավոր արժեքներից, այլ ազատ լինենք՝ ունենալով Իր ներկայությունն ու խոսքը մեր սրտերում:

ԽՈՍՏՈՒՄ

Մի գյուղաբնակ երիտասարդ՝ անհանգիստ ու զայրացած, ցած է իջնում լեռն ի վար, սայթաքում, ընկնում, ոտքը վնասում: Կանգնում է և ասում.

- Հաղթահարելով վտանգավոր դժվարությունները՝ բարձրացա և մոտեցա լեռան գագաթին: Որտե՞ղ է Աստծո տված խոստումը՝ այն քաղաքը, ուր ուզում եմ հասնել: Ինձ ասվեց, եթե բարձրանաս այս լեռը, բարձունքից արդեն կտեսնես քաղաքը, սակայն ես ոչինչ էլ չեմ տեսնում...

Մի ձայն է լսվում.

- Ե՛տ դարձիր ու շարունակիր բարձրանալ դեպի վեր, երբ հասնես գագաթին, մյուս կողմում կտեսնես լեռան ստորոտին փռված քաղաքը:

Երիտասարդը այս անգամ կաղալով նորից սկսում է բարձրանալ լեռն ի վեր...

Երբեմն մարդկանց թվում է, թե այլևս չի իրականանա այն, ինչը ծրագրել էին, և երբ մոտ են լինում նպատակին, այն դեռևս չտեսնելով, նահանջում են, երբեմն էլ նահանջի ճանապարհին իրենց վնասում ու Աստծուն մեղադրում, թե տրված խոստումը չի իրականանում կամ ուշանում է: Բայց պետք է շարունակել ճանապարհը, որովհետև Աստծո տված խոստումը միշտ իրականանում է, իսկ ուշանալը տվյալ մարդու օգտի համար է, թե նրա կամքի, համբերության, հավասարակշռության, հոգու ու անձի կոփման համար է...

ԳԱՆՁԸ

Մի կալվածատեր մշտապես գալիս էր իր անմշակ հողատարածքը և գանձ գտնելու երազանքներով լեցուն տխուր նայում իր հողին, այնուհետև հեռանում: Եվ մի օր էլ այդտեղ գտնվելիս ասում է.

- Աստված իմ, ասում են, թե այս հողամասում իմ պապերը գանձ են թաքցրել, բայց որ հատվածում են թաքցրել, ոչինչ չեն հայտնել: Եթե ինձ օգնես այն հայտնաբերել, իմ ամողջ կյանքում երախտապարտ կլինեմ և քեզ կփառաբանեմ:

Իր հողի եզրին մի բահ է նկատում: Մտածում է, որ Աստված լսեց իր խնդրանքը և ոգևորված վերցնում է բահն ու հսկայական փոսեր գոյացնում իր հողատարածքում՝ հույս ունենալով գտնել գանձը: Այնուհետև հուսահատված բողոքում.

- Ինչ իմաստ ուներ այս բահը, երբ պիտի այսքան ապարդյուն չարչարվեի...

Ապա գոտեպնդվելով կրկին մի քանի օր շարունակում շուրջբոլորը փորել, և իվերջո բահը հանդիպում է մի սնդուկի: Մարդն ուրախությունից և երջանկությունից մի կողմ է գցում բահն ու ձեռքերով սկսում մաքրել սնդուկի վրայի հողը: Դժվարությամբ բացում է սնդուկը և միայն մի գիրք է գտնում այնտեղ: Թերթում է գրքի էջերը և կարդում մի հատված. «Գանձեր մի դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են և ուր գողերը պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեք ձեզ համար երկնքում, որտեղ ոչ ցեց և ոչ ժանգ չեն ոչնչացնում և ոչ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում, քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն»:

Կալվածատերը, զայրացած ու սրտնեղած, դուրս է գալիս փոսից՝ վերցնելով Ավետարանը և ասում.

- Չեմ հասկանում, մի՞թե իմ պապերն այս գիրքն էին գանձ համարում, իսկ հիմա ի՞նչ գնով կարող եմ վաճառել այն, որ և՛

ինձ համար գումար վաստակեմ, և՛ Աստծուն էլ փառաբանեմ:

Իրապես, նրանք, ովքեր ասում են, թե Աստծուն են փնտրում, սակայն նպատակ համարում երկրավոր նյութական արժեքները, իրենց շահն ու հարստությունը, ինչքան էլ հոգևոր ճշմարտությունը լսեն ու տեսնեն, միևնույն է, չեն ընդունի ու դրանով չեն ապրի... ուր նրանց գանձերն են, այնտեղ և նրանց սրտերը կլինեն:

ԱՆԾԱՆՈԹԸ

Մի արվեստագետ, ինչ-որ մեկին փնտրելով, օտար քաղաքի մայթերով անցնում է՝ հանդիպելով տարբեր ուղղություններով գնացող բազմաթիվ մարդկանց: Կանգնում է մի արձանի մոտ ու ասում.

- Գտա նրան, ում այսքան երկար տարիներ պատկերացնում էի: Այժմ կարող եմ նրան նկարել կտավի վրա: Սակայն կարծես ինչ-որ բան պակասում է:

Մի օտարական, որ արձանի մոտով անցնում էր, լսում է այս մարդու խոսքը և պատասխանում.

- Սա Հիսուսի արձանն է, քեզ նման մի արվեստագետ է կերտել՝ պատկերացնելով այնպես, ինչպես կցանկանար տեսնել Աստծուն և կյանքը: Բայց ճշմարիտ ես ասում, թե ինչ-որ բան պակասում է: Եվ դա հավատքի պակասությունն է, որպեսզի իրապես մարդիկ զգան Աստծո ներկայությունը:

Արվեստագետն ասում է.

- Ո՛վ օտարական, դու ի՞նչ գիտես Աստծո մասին, ես մանկությունից ի վեր քրիստոնյա եմ եղել և ավելի լավ եմ ճանաչում Նրան:

Օտարականը պատասխանում է.

- Դու ինձ ես փորձում նկարել... և բազում անգամ իմ կողքով անցել ես՝ ինձ և կյանքը փնտրելով...

ՎԵՐՋ, ԹԵ՞ ՍԿԻԶԲ

Մի հուսահատ մարդ կամրջի վրա ետ ու առաջ քայլելով խոսում է.

- Ամեն ինչ կորցրեցի, թե՛ տուն, թե՛ ունեցվածք, թե՛ ընտանիք: Ինչպե՞ս ապրել. ո՛չ աշխատանք ունեմ, ո՛չ էլ փող: Վերջ, ինձ ցած եմ նետում այս կամրջից, ո՞ւմ եմ ես պետք.., ապրելու իմաստ չկա այս կյանքում:

Նկատում է, որ մի կարճահասակ արարած նույնպես մտահոգված այս ու այն կողմ է քայլում: Մարդը հարցնում է.

- Իսկ դու ո՞վ ես. Դո՞ւ էլ ես եկել քեզ ցած նետելու այստեղից, թե՞ լսեցիր ինչ էի ասում և իմ կյանքի համա՞ր ես մտահոգված:

Արարածը պատասխանում է.

- Մեկ է, չես հավատա, որ իմանաս, թե ով եմ: Ճիշտ կռահեցիր՝ քո անձով եմ մտահոգված: Շուտափույթ եկել եմ քեզ խուրհուրդներ տալու: Ասում ես, թե ո՞ւմ ես պետք... Հոգիդ է մեզ պետք, հոգիդ: Այս երկու-երեք ժամ է, ինչ մի մեծ կաթսա եմ հայթայթել, դրա տակ հրաբորբոք կրակ վառել, կաթսան սևաթույր ու լավագույն ձյութով լցրել, եռացրել, իսկ դու դեռ մտածում ես՝ մեռնել, թե ապրել: Մի փոքր էլ, որ այդպես շարունակես, գուցե և փոշմանես...

Մարդը սարսռած ետ-ետ է քայլում ու ասում.

- Իսկ ես գիտեի, թե ամեն ինչ կվերջանա, բայց տեսնում եմ, որ ամեն ինչ սկսվում է այդ վերջով: Նախքան այստեղ գալը մի գիրք էի կարդում, ուր ասվում էր՝ նայիր շուրջդ և կտեսնես, թե ինչքան շատ իմաստ կա ապրելու: Միայն այն, որ գեղեցիկ ու նրբագեղ ծաղիկները քո խնամքի կարիքն ունեն, արդեն իսկ նշանակում է՝ քո կյանքն այս աշխարհում իմաստ ունի: Ավելի լավ է ես գնամ դաշտերում բնակվող ծաղիկներին խնամեմ, քան քեզ լսեմ ու կամրջից ցած նետվելով ուղիղ քո եռացող կաթսայի մեջ հայտնվեմ:

Դևն առաջանալով ասում է.

- Ո՛վ մարդ, չէ՞ որ ո՛չ Աստծուն ես հավատում, ո՛չ էլ սատա-

նային, չէ՞ որ բոլոր պատմածներս հեքիաթներ են, դու միայն քեզ ցած նետիր, ես էլ մեծ սիրով կօգնեմ, չէ՞ որ ես չկամ, գոյություն չունեմ: Թույլ տուր՝ ես քեզ միայն այստեղից ցած նետեմ ու ամեն ինչ կվերջանա ու կտեսնես վերջը, որտեղից էլ սկսվում է քո վերջը...

Մարդն արագ այդ վայրից հեռանալով՝ պատասխանում է.

- Դու կաս, թե չկաս, չգիտեմ, բայց մի բան հասկացա և գիտեմ, թե որտեղ կա կամք, այնտեղ միշտ կա ճանապարհ և կյանք, ու ամեն մարդ պետք է ձգտի ապրել և հարատևել:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԵՎ ԻՐ ՏԵՍԻԼՔԸ

Մի քրիստոնյա տեսիլք է տեսնում, թե գտնվում է ցորենի դաշտում, որտեղ ցորենի հասկերից ավելի շատ որոմներ կային, և մի հրեշտակ այդ արտից որոմներն է քաղհանում:

Քրիստոնյան հարցնում է.

- Այսքան որոմներն ինչպե՞ս պիտի ձեռքով քաղհանես.

Հրեշտակը պատասխանում է.

- Մարդու միտքը նման է այս դաշտին, որտեղ և ցորենի հասկեր են աճում, և որոմներ: Եվ քանի որ քո մտքում դեռ վաղ առավոտից այսքան որոմներ են աճել, եկել եմ և քաղհանում եմ, որպեսզի դաշտը մաքուր լինի:

Քրիստոնյան ասում է.

- Բայց ես պատվիրանները պահում եմ. չեմ շնանում, չեմ գողանում, չեմ սպանում:

Հրեշտակը պատասխանում է.

- Շատ քրիստոնյաներ այդպիսի մեծ մեղքեր չեն գործում, սակայն ժրաջան են փոքրերի մեջ և առավել ևս, ինչքան են, թե լուռ, թե բարձաձայն ամեն օր ուրիշների քայլերն ու արարքները քննադատում ու դատապարտում, հպարտանում, նախանձում ու բամբասում:

ՑԱՆԿ

Սեր առանց մեկնաբանության 5
Մտահոգություն 6
Հողագործը 7
Բանտարկյալը 8
Երազանքներ 9
Առաջ դեպի երազանքների իրականացում 10
Ժամացույցը 11
Իսկ ինչո՞ւ ներել 12
Կորցրած պահերը 13
Ագահ մեծահարուստի վերջը 14
Խիղճը 15
Ձանձրույթ 16
Գայթակղություն 17
Մի վարդի պատմություն 18
Հրաժարում 19
Վերելակը 20
Պայքար 21
Մահը 22
Իմ ապավենը 23
Պարանը 24
Հույս 25
Սիրո՞ւմ ես ինձ 26
Աղոթքի զորությունը 27
Կամք 28
Պահանջ 29
Դուռը 30
Ինքնաանդրադարձ 31
Պատասխանատվությունը 32
Մշուշը 33
Ասպետը 34
Թաքցրած գանձը 35
Այդ սպասված օրը 36
Շիշը 37
Փոթորիկ 38
Զգոնություն 39
Վազք 40
Ջութակահարը 41
Լաբիրինթոս 42
Հաշվապահը 43
Ցանկության իրականացում 44
Կյանքի երգը 45
Խաղամոլը 46
Երկու տարբեր ուղիներ 47
Պատմուճանը 48
Հեծանիվը 49
Աստվածանաչողություն 51

Թիթեռը 53
Ալքիմիկոսը 54
Ինչո՞ւ Աստված չի օգնում 55
Արդարության ջատագով փուշը 56
Մեղքերի թողություն 57
Արդարություն և հատուցում 58
Փառքի ճանապարհ 59
Անհավատ խլուրդը 60
Փորձությո՞ւն, թե՞ փորձանք 61
Հովիվն ու իր աղոթքը 62
Ծայրահեղությունը բարիք չի բերում 63
Հավատք 64
Արդյոք ի՞նձ էիր փնտրում 65
Մի մեծ ու բարի նպատակ 67
Անհանգստություն 68
Առաքյալը 69
Ճոճանակը 70
Բարեգործը 71
Պտուղը 72
Անցորդը 73
Գործիքը 74
Ողորմածություն 75
Խոչընդոտը 76
Արդյո՞ք Աստծո կամքն է 77
Քարոզիչը 78
Գյուղացին ու հնձվորը 79
Մուրճ և մեխեր 81
Նախօրոք պատիժը 82
Միայնակ այս աշխարհում 83
Նամակը 84
Սահմաններ 85
Հավատարմություն 86
Վերարկուն 87
Ջուրը 88
Այլևս չեմ կարող 89
Թզուկը 90
Խնդրանք և պատասխան 91
Հաջողության գաղտնիքը 92
Հաղթանակ 93
Կատարելություն 94
Վարձատրություն 95
Դրամը 96
Խոստում 97
Գանձը 98
Անծանոթը 99
Վե՞րջ, թե՞ սկիզբ 100
Քրիստոնյան և իր տեսիլքը 101

Հովհաննես Մանուկյան

ԱՌԱԿՆԵՐ

«Նոյյան Տապան» տպագրատուն
Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 64x90, 6.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500 օր.:
ՀՀ, Երևան 0009, Իսահակյան 28, Էլ. փոստ՝ design-nt.@ mail.ru
Կայք՝ http://www.nt.am